ԷՋՄԻԱԾԻՆ

1974

Ժ

ԱՄ 146

ԼԱ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

հոկտեմբեր - 10

1974





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հալեպի Կրթասիրաց վարժարանների 50-ամյակի առիթով 3

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Բելգրատի Կարմիրյան վարժարանի բարերար տիար Գևորգ Կարմիրյանին ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշանով պարգևատրելու առթիվ 4

Հայոց Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Խ. Հարությունյանին 6

Ղազարապատի վերակառուցված շենքի հանդիսավոր բացումը 7

Վեհափառ Հայրապետի գահակալության 19-րդ տարեդարձը Մայր Աթոռում . . . 18

Գերաշնորհ տ. Հմայակ եպիսկոպոս Ինդոյան 27

Գերաշնորհ տ. Արիս եպիսկոպոս Շիրվանյան 29

Գերաշնորհ տ. Ներսես եպիսկոպոս Պոզապալյան 31

Ցոթանասունհինգամյակ պրոֆ. Սարգիս Մելիքսեթյանի 33

Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Մահ Տիրամոր՝ Սիրանույշ Պալճյանի 35

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 38

Հայտարարություն 41

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆ—Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Կենտրոնական կոմիտեի 26-րդ գումարումը Արևմտյան Բեռլինում . . . 42

Լուրեր Հայաստանյայց եկեղեցու թեմերից 46

Լուրեր քույր եկեղեցիներից 47

Լուրեր Եկեղեցիների համաշխարհային խորհրդից 47

Լուրեր Մայր Աթոռից 48

ԵՂՆԻԿ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Մովսես Երզնկացու «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի սուրբ խորհուրդն ի թուին հայոց .ՉԾԸ.» դավանաբանական թուղթը 49

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 22/X 1974 թ.: Ստորագրված է տպագրության 26/XI 1974 թ.:

Տպագրական 4 մամուլ+7 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 709

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1974 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱԼԵՊԻ ԿՐԹԱՍԻՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԷՆ ՈՂՋՈ՞ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱԼԷՊ ՔԱՂԱՔԻ ԿՐԹԱՍԻՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՎԱՐՁՈՒԹԵԱՆՑ, ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ԵՒ ՍԻՐԱՍՈՒՆ ԱՇԱԿԵՐՏ- ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐՈՒՆ

Աստուծոյ ողորմութեամբ սփիւռքի տարածքի վրայ շէն ու պայծառ են հայոց աղօթքի Տուները և անոնց կողքին կրթական հաստատութիւնները, որոնք հաւատացեալ ժողովուրդի զաւակներուն կը բաշխեն հոգևոր սնունդ, գիտութեան լոյս և ազգային դաստիարակութիւն։

Ձեր վարժարանները ևս պատուաբեր տեղ մը կը գրաւեն սուրիական հիւրընկալ հողի վրայ, ուր Դուք բարենպաստ պայմաններու մէջ կը շարունակէք Ձեր կրթական առաքելութիւնը ահա յիսուն տարիներէ ի վեր։

Մենք բարձրօրէն կը գնահատենք Ձեր կէսդարեայ վաստակը և այս յոբելինական հանդիսաւոր առիթով ամենայն հայոց Մայր Աթոռ սուրբ Էջմիածնէն և Մեր սրտէն հայրապետական օրհնութիւններ կը յղենք Կրթասիրաց վարժարաններուդ հոգաբարձու հիմնադիրներուն, բարերարներուն, մարմիններուն, կրթական մշակներուն և աշակերտ-աշակերտուհիներուն, աղօթքով որ Աստուած միշտ հաստատ ու միշտ շէն պահէ-պահպանէ Ձեր վարժարանները, սուրիացի եղբայր ժողովուրդի մեծ ընտանիքին մէջ։

Ուժ ու եռանդ մշտանորոգ, բարի ներշնչումներ բոլորիդ և Ձեր ազնիւ աշխատանքներուն՝ աստուածահաճոյ պտղառատ արդիւնքներ։

Ողորմութիւն և շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ. ամէն։

Վարդգես Կ.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 15-ը հոկտեմբերի
1974 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԳ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 789

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԲԵՅՐՈՒԹԻ ԿԱՐՄԻՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԲԱՐԵՐԱՐ ՏԻԱՐ ԳԵՎՈՐԳ ԿԱՐՄԻՐՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ Ա ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԳԷՈՐԳ ԵՒ ՄԱՐԻ ԿԱՐՄԻՐԵԱՆՆԵՐՈՒՆ, ՀԱՐԱՋԱՑ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Պէյրութ

Աստուծոյ ողորմութեամբ Մենք խորապէս մխիթարուած ենք որ ամիսներ առաջ տարածքի վրայ, մեր հաւատացեալ ժողովուրդի ծոցին մէջ կան ու կը գործեն պատուական անձինք, որոնք իրենց բարոյական և նիւթական օժանդակութեամբ կը շէնցնեն ու կը պայծառացնեն մեր աղօթքի Տուներն ու կրթական հաստատութիւնները։

Մեր ազգի այդ պատուական զաւակներու հոյլին կը պատկանիք նաև Դուք, Ձեր թանկագին ծառայութիւններով և նուիրաբերութիւններով։ Լիբանանի մայր քաղաք Պէյրութի սրտին վրայ բարձրացող, Ձեր անունը կրող կրթական մեծ հաստատութիւնը՝ Հ. Բ. Ը. միութեան Կարմիրեան վարժարանը Ձեր կեանքի մեծագոյն իրագործումներէն մին կը հանդիսանայ որ արժանի է Մեր օրհնութեան և համայն մեր ազգի գնահատանքին։ Երբեք պիտի չմոռնանք այս մեծ ծառայութիւնը որ պատիւ կը բերէ Ձեր անունին, պատիւ կը բերէ նաև ամբողջ լիբանանահայութեան։

Երբեք պիտի չմոռնանք նաև Ձեր որդիական այնքան ջերմ վերաբերումը Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի հանդէպ և Ձեր կարևոր նուիրաբերումը ի պայծառութիւն միածնաէջ Մայր տաճարին։

Արդ, սրտանց կը գովենք եկեղեցաշէն ու կրթանուէր Ձեր բարի եռանդը և իրրև վկայութիւնը Մեր հայրապետական գնահատանքին, Ձեզ կը պարգեւատրենք ս. Գրիգոր Լուսաւորչի Ա կարգի շքանշանով, մաղթելով որ արդար հպարտութեամբ զայն կրէք Ձեր բարի սրտին վրայ իրրև օրհնութիւն սուրբ Էջմիածնէն։

Կ'աղօթենք առ Աստուած որ Ձեզի պարգևէ երկար, շատ երկար կեանց տարիներ Ձեր ընտանեկան երջանիկ յարկին տակ, որպէսզի միշտ հոգեկան ուրախութիւնը ունենաք կենսագործելու Ձեր հոգեշէն ու ազգանուէր ծրագիրները:

«Ողջ լերուք, զօրացեալ սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

Կարեկ Բ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 21-ը Հոկտեմբերի
1974 փրկչական ամի,
և ի տումարիս մայրց ՌՆԻԳ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀԱՄՐ. 780

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ն. Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Սեպտեմբերի 30-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Թուրքիայի հայոց ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարք Գալստյանի, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի, Հեռավոր Արևելքի և Ավստրալիայի հայոց առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանի, այցելություն է տալիս Երևանում Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Խ. Հարությունյանին:

Հայոց Հայրապետին ուղեկցում էր նաև Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը:

Հայոց Հայրապետի, հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների և Հայաստանի Հանրապետության մեծահարգ պրն. նախագահի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը, ողջունելով Նորին գերազանցությանը, նրան է ներկայացնում Իր թանկագին հյուրերին:

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պրն. նախագահը բարի գալուստ է մաղթում Հայոց Հայրապետին ու Նրան ընկերակցող հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներին և զրույցի ընթացքում հարգելի հյուրերին պատմում Սովետական Հայաստանի մշակութային, տնտեսական նվաճումների և մեր հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարների մասին:

Սույն ջերմ զրույցին մասնակցում էին նաև Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության քարտուղար Ռ. Ք. Սվետլովան, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Տ. Գասպարյանը և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության գործերի կառավարիչ Գ. Հ. Սահակյանը:

ՄԻ ՊԱՀ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ՂԱԶԱՐԱՊԱՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄԸ

Մայր Աթոռում այս տարի էլ, խանդավառ մթնոլորտում և հանդիսավոր իրադրության մեջ, նշվում է Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 19-րդ տարեդարձը:

Այս բարեպատեհ առիթով Մայր Աթոռում տեղի են ունենում մի շարք բացառիկ հանդիսություններ, որոնք սերտորեն կապվում են Ն. Ս. Օծության եկեղեցաշեն և հայրենանվեր գործունեության հետ:

Այդ հանդիսություններից առաջինն էր Մայր Աթոռում սեպտեմբերի 28-ին, շաբաթ օրը, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նվիրատվությամբ պատմական Ղազարապատի վերջերս վերակառուցված շենքի հանդիսավոր բացումը:

Այս առթիվ Մայր Աթոռ էին ժամանել Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկական գործերի բաժնի վարիչ տիար Ռոբերտ Կյուլպենկյանը իր հարգելի տիկնոջ և փոխ-վարիչ տիար Վահրամ Մավյանի հետ:

Ղազարապատի շենքի բացման հանդիսությանը ներկա էին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Թուրքիայի հայոց ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարքը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Ավստրալիայի հայոց առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանը, իտալահայ համայնքի հոգևոր հովիվ տ. Զգոն եպս. Տեր-Հակոբյանը, Անգլիայի հայոց նորընտիր հոգևոր տեսուչ և հայրապետական պատվիրակ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը, Դետրոյտի հայոց հոգևոր հովիվ տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանը և Նիցցայի հայոց հոգևոր հովիվ տ. Տարոն վրդ. Մերեճյանը:

Ներքին թեմերից Մայր Աթոռ էին ժամանել Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Շաքարյանը, վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը և Աղրբեջանի հայոց թեմի առաջնորդ տ. Վահան եպս. Տերյանը:

Ղազարապատի շենքի հանդիսավոր բացմանը ներկա էին նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տեր և տիկին Գևորգ Սարաֆյանները՝ Արգենտինայից:

Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՄԱՏՈՒԱՆ ՕԾՈՒՄԸ

Սեպտեմբերի 28-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, տեղի է ունենում ս. Հովհաննես Մկրտիչ մատուռի օծումը:

Օծման արարողությունը կատարում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Այնուհետև ս. Հովհաննես Մկրտիչ մատուռի խորանի վրա մատուցվում է ս. պատարագ: Պատարագում է Մայր Աթոռի միաբան տ. Գրիգորիս աբեղ. Ղուճիաթյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված բարձրաստիճան հոգևորականներով:

Ս. պատարագի արարողությանը ներկա էին տեր և տիկին Ռոբերտ Կյուլպենկյանները և տիար Վանիրամ Մավյանը:

Ս. պատարագի արարողությանը ներկա են լինում նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Ս. պատարագի ավարտին օրվա նշանակության մասին հոգեշունչ քարոզ է խոսում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԿՐՏԱՐԱՆՈՒՄ

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն»:

Աստուծոյ ողորմությամբ այսօր, 28 սեպտեմբեր 1974 թվի, ս. պատարագով, և այս մկրտարանի օծմամբ կատարում ենք բացումը Ղազարապատի շինության: Ղազարապատը այսպես է կոչվում, որովհետև այս ամբողջ շենքը, երկու հարկանի, կառուցվել է հանգուցյալ Ղազար կաթողիկոսի օրով, 1750 թվականին, և ծառայել է երկար ժամանակ, մինչև առաջին համաշխարհային պատերազմից հետո իբրև ձեռագրատուն վերևի հարկերը, իսկ ներքևի հարկերը՝ իբրև սեղանատուն Մայր Աթոռի միաբանության:

Այս շենքը կառուցվել է հայկական ոճի ոգով կամարակապ, ամրակուռ և տպավորիչ: Սակայն ժամանակն իր ավերներն էր գործել, և շենքը հետզհետե թուլացել էր իր հիմքերից իսկ և համարյա կիսավեր վիճակի մեջ էր գտնվում մեր օրերին: Վերևի հարկը լրիվ փլատակ էր, իսկ ներքևի հարկը՝ նույն ճակատագրին էր սպասում: Նույնիսկ ոմանք այն կարծիքը հայտնել էին, թե այս շենքը վերաշինել հնարավոր չէ, ավելի հարմար է լրիվ փլցնել և մեկ նոր շենք կառուցել: Մենք որոշեցինք պահպանել շենքը և թեկուզ եռապատիկ ծախսով, վերակառուցել նույն ոճով, նույն ընդհանրապես տեսքով, նույն նպատակներին ծառայելու համար:

Երկրորդ գլխավոր հարցն էր՝ նյութական միջոցներ հայթայթել՝ այս բազմածախս գործը կենսագործելու համար: Դիմեցինք Լիսաբոն (Պորտուգալիա)՝ հիմնադրված Գալուստ Կյուլպենկյան մեծ հիմնարկության դեկավարներին՝ խնդրելով, որ նրանք մեզ օգնեն, ձեռք երկարեն, և այս պատմական շինությունը վերակառուցվի: Երջանիկ ենք հայտնելու, թե Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը սիրով ընդառաջեց Մեր խնդրանքին և 90.000 դոլլար տրամադրեց այս նպատակի համար: Երկրորդ մեծ ձեռնարկն էր, որ ի կատար էր ածվում հանգուցյալ մեծ բարերար Գալուստ Կյուլպենկյանի ժառանգությամբ: Ինչպես բոլորս գիտենք, հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանն իր մահից առաջ, իր կտակի մեջ հատուկ նշել էր՝ չորս հարյուր

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ՊՐՆ. Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆԸ, ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ Ռ. ԿՅՈՒԼՊԱՆԿՅԱՆՆԵՐԸ ԵՎ ՊՐՆ. Վ. ՄԱՎՅԱՆԸ՝
ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՎ

հազար դոլլար տրամադրել ս. Էջմիածնի Մայր տաճարի և նրա անմիջական շրջապատի վերանորոգման համար, մի գործ, որ կյանքի կոչվեց սրանից ավելի քան տասը տարիներ առաջ:

Եվ, անավասիկ, սիրելի հավատացյալներ, Մենք այսօր հոգեկան մեծ մխիթարությունը ունենք բացումը կատարելու այս շինության, Ղազարապատ շինության՝ ի ներկայության պաշտոնական ներկայացուցիչների Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության՝ հանձինս տիար Ռոբերտ Կյուլպենկյանի և իր տիկնոջ և տիար Վահրամ Մսվյանի:

Քիչ հետո Մենք հոգեկան մխիթարությունը պետք է ունենանք նաև հոգեհանգստյան պաշտոն կատարելու՝ ի հիշատակ հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանի հոգվույն և, ոգեկոչելու նրա պայծառ հիշատակը:

Մեր փոքրիկ ժողովուրդը, սիրելի հավատացյալներ, իր պատմության ընթացքին գրեթե միշտ հալածված և ցիր ու ցան է ապրել աշխարհի բոլոր ճամփաների վրա և բազում տառապանքներ կրել, նույնիսկ երբեմն նահատակվել: Սակայն այս հալածված փոքրիկ ժողովրդի ծոցում միշտ ծնվել են բացառիկ անձնավորություններ թե՛ եկեղեցական-հոգևոր կյանքում, թե՛ մշակութային ու գիտության ասպարեզում, թե՛ տնտեսական-ընկերային կյանքում: Գրեթե բոլոր երկրներում, ուր հայեր են ապրել, այս վերջին հարյուրամյակներին ծնվել են պայծառ դեմքեր, փայլուն անձնավորություններ, որոնք մեծ ծառայություններ են մատուցել, լինի հայ ժողովրդին, Հայաստանյայց եկեղեցուն, լինի հյուրընկալ ժողովուրդներին ու երկրներին: Այդ բացառիկ անձնավորություններից մեկը հանդիսացավ Գալուստ Կյուլպենկյան, որ ծնվել է Թուրքահայաստանում, Կեսարիայում, ավելի քան 100 տարիներ առաջ: Բավական երկար է ապրել նա, մինչև 1955 թվականը, և իր ամբողջ կյանքը նվիրել է՝ ստեղծելու համար նյութական մեծ հարստություն, նյութական մեծ հարստություն, որի նպատակը պետք է լիներ՝ կրթական, մշակութային, գեղարվեստական և բարեսիրական գործեր կատարել:

Մենք գիտենք մեր պատմությունից, որ ունեցել ենք բազմաթիվ մեծահարուստներ, սակայն ոչ բոլորը կարողացել են հասնել բարոյական այն գիտակցության, որ նյութական հարստությունը կդառնա գոյության իմաստ ունեցող արժեք, եթե ծառայի մարդասիրական և ոգեկան նպատակների իրագործման: Գալուստ Կյուլպենկյանն եղել է այն մեծանուն հարուստներից, որ լավ է հասկացել այս ճշմարտությունը:

Իր մահվանից հետո նա թողել էր իր մեծ կտակը, որով իր ամբողջ հարստությունը թողնում էր իր անունը կրող հիմնարկության, որ հաստատվեց Լիսաբոնում և որ ամբողջապես նվիրված է կրթական, մշակութային, եկեղեցական և բարեսիրական նպատակների իրագործման:

Գալուստ Կյուլպենկյան մի օրհնություն հանդիսացավ մեր ժողովրդին կյանքում:

Մենք երախտապարտ սրտով ուզում ենք այստեղ ընդգծել նաև հույժ բարյացակամ վերաբերմունքը Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ղեկավարներին, առաջին հերթին նրա նախագահին՝ դոկտ. Ժոզե Ազերեդո Պերտիգանին, որ պորտուգալացի պատվական անձնավորություն մըն է՝ սիրով լեցուն դեպի հայ եկեղեցին և հայ ժողովուրդը: Նույն զգացումներով կամենում ենք հիշել նաև անունը հիմնարկության ղեկավար անձնավորություններից՝ տիար Ռոբերտ Կյուլպենկյանի, որ իրոք մարմնացումն է հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանի հարազատ ոգուն:

Մայր Աթոռ սուրբ Էջմիածին լայնորեն օգտվեց և օգտվում է Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հատկացումներից: Ահա այսպես է, որ երազն իրականություն դարձավ և այս փլման և քայքայման ենթակա շինությունը՝ Ղազարապատը, վերականգնվեց իր նախնական, պատմական տեսքով և ոճով: Արդ, երախտապարտ սրտով մենք խոնարհվում ենք Գալուստ Կյուլպենկյանի հիշատակի առաջ և հրավիրում ենք ձեզ բոլորիդ, միասին աղոթել նրա հոգվո խաղաղության հավիտենական լուսավորության համար: Աղոթենք Գալուստ Կյուլպենկյան գերդաստանի բոլոր հանգուցյալ հոգիների համար:

Աղոթենք նաև, որ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը անսասան մնա միշտ, և շարունակե ի կատար ածել իր ազնիվ, մարդասիրական առաքելությունը երկար շատ երկար տարիներ:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի» ամեն»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ-ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՍԵՂԱՆԱՏԱՆԷ

Նույն օրը, ժամը 15-ին, միաբանական սեղանատանը տրվում է պաշտոնական ընդունելություն-ճաշկերույթ՝ Ղազարապատի շենքի վերաբացման առթիվ:

Ղազարապատի շենքի մուտքը փակված է ժապավենով: Ներկաների ծափողջույնների ներքո տիար Ռոբերտ Կյուլպենկյանը մկրատում է ժապավենը, և սեղանատան մուտքը բացվում է հրավիրյալների առջև:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողքին, պատվո սեղանի շուրջ, բազմել էին Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը և Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ղեկավարներից տիար Ռոբերտ Կյուլպենկյանը:

Պաշտոնական սույն ընդունելություն-ճաշկերույթին ներկա էին նաև Մայր Աթոռի հոգևոր և աշխարհիկ հյուրերը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը:

Խանդավառ մթնոլորտում Վեհափառ Հայրապետը բաժակ է բարձրացնում, ի դեմս Ս. Գասպարյանի, հայրենի բարեխնամ կառավարության կենացը՝ երախտագիտական ջերմ զգացումներով:

Այնուհետև Հայոց Հայրապետը բաժակ է բարձրացնում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության և նրա ներկայացուցիչների՝ տեր և տիկին Ռոբերտ Կյուլպենկյանների և տիար Վահրամ Մավյանի կենաց արևշատության համար:

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության արգասավոր գործունեության մասին հակիրճ խոսքով հանդես է գալիս Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Սարգիս Գասպարյանը:

Վերջում շնորհակալության և երախտագիտության հետևյալ պատասխան խոսքն է ասում տիար Ռոբերտ Կյուլպենկյանը:

ՂԱՋԱՐԱՊԱՏԻ ՎԵՐԱԿԱՄՈՒՑՎԱԾ ՇԵՆՔԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄԸ

ՌՈԲԵՐՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ

«Մեզ՝ սփյուռքահայերիս համար բացառիկ ուրախ օր է այսօր գտնվել ս. Էջմիածնում, Նորին Սրբություն Վազգեն Ա-ի կողքին, կառավարության շատ հարգելի ներկայացուցիչ պրն. Գասպարյանի կողքին, մի բան, որը ցույց է տալիս այն ներդաշնակ հարաբերությունը, որ գոյություն ունի մեր եկեղեցու և Հայաստանի կառավարության միջև: Բայց այսօր միաժամանակ ուրախ և երջանիկ օր է հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանի հոգու համար, որը միշտ ունեցել է համեստ կյանք և միշտ ցանկացել է, որ բարիքը կատարվի միայն իր մահից հետո: Ահա թե ինչու Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ներկայացուցիչները և մասնավորապես ես որևէ հատուկ շնոր-



Ղազարապատի շենքի վերակառուցման արձանագրությունը

հակալության խոսք չունեմ ստանալու, որովհետև ես ուրիշ բան չեմ անում, եթե ոչ՝ կատարել հանգուցյալ մեծ բարերարի կամքը և ունենալ հոգեկան գոհունակությունը իմ պարտականությունը կատարած լինելու, ինչպես պարագան է նաև մեր հաստատության հայկական բաժնի բոլոր ներկայացուցիչների, հանձինս պրն. Կորյուն Քեշիշյանի, պրն. Արամ Թերզյանի և պրն. Վահրամ Մավյանի:

Մենք մեր կենդանի աչքերով տեսնում ենք իրագործումը Ղազարապատի շենքի, ինչպես առիթը ունեցանք ականատես լինելու նաև այլ իրագործումների Երևանում և Լենինականում: Մենք դրանց համար նույնպես խորունկ գոհունակություն ենք զգում:

Ահա թե ինչու ես կցանկանայի բարձրացնել իմ բաժակը՝ խմելու Նորին Սրբություն Վազգեն Ա-ի կենացը, Որին ես հոգևին կցանկանայի, որ Ամենակալ երկար կյանք շնորհեր, որպեսզի իրագործումներով հարուստ մինչև այսօր կտրված ճանապարհն այսուհետև ևս ճոխանա նորանոր իրագործումներով՝ շնորհիվ եկեղեցու և կառավարության այն ներդաշնակ գործակցության, որին ես ակնարկեցի քիչ առաջ:

Վեհափառ Հայրապետ, կարող եք ամբողջապես վստահություն ունենալ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության վրա Ձեր ապագա գործունեության ընթացքում:

Որդիական հայցում ենք Ձեր օրհնությունը»:

Սույն պաշտոնական ընդունելություն-ճաշկերույթն ավարտվում է Վեհափառ Հայրապետի գոհաբանական աղոթքով:

Ղազարապատի հին շենքը վերակառուցվել է Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության ճգիրտությամբ: Ղազարապատի վերակառուցված շենքի շքամուտքի ճակատին, արևելյան կողմում, կա վերակառուցման արձանագրությունը:



ՂԱԶԱՐԱՊԱՏԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՄԱՏՈՒՌ-ՄԿՐՏԱՐԱՆԸ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 19-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 29-ին, կիրակի օրը, Մայր Աթոռում հանդիսավորապես նշվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության 19-րդ տարեդարձը:

Գահակալության հանդիսությանը ներկա էին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Թուրքիայի հայոց պատրիարք ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարքը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Ավստրալիայի հայոց առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանը, իտալահայ համայնքի հոգևոր հովիվ տ. Զգոն եպս. Տեր-Հակոբյանը, Անգլիայի հայոց նորընտիր հոգևոր տեսուչ և հայրապետական պատվիրակ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը, Դետրոյտի հայոց հոգևոր հովիվ տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանը և Նիցցայի հայոց հոգևոր հովիվ տ. Տարոն վրդ. Մերեճյանը:

Ներքին թեմերից Մայր Աթոռ էին ժամանել Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Շաքարյանը, վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը և Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ տ. Վահան եպս. Տերյանը:

Վեհափառ Հայրապետի գահակալության 19-րդ տարեդարձի հանդիսությանը ներկա էին նաև ուխտավորաբար մայր հայրենիքում գտնվող պրն. Վահրամ Մավյանը՝ Պորտուգալիայից, տեր և տիկին Գևորգ Սարաֆյանները՝ Արգենտինայից, տաղանդավոր երգեհոնահար Պերճ Ժամկոչյանը և տեր և տիկին Արշակ Տիգրանյանները՝ ԱՄՆ-ից, ու այլ ուխտավորներ:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 29-ին, կիրակի. Վարագա ս. Խաչի տոնի օրը Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսը և եպիսկոպոս ձեռնադրում երեք շնորհալի ու

խոստումնալից վարդապետների՝ տ. Հմայակ ծ. վրդ. Ինդոյանին, տ. Արիս ծ. վրդ. Ծիրվանյանին և տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանին:

Շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարում կատարվում է Նորընծաների «ընտրություն և ուխտադրություն՝ ըստ սահմանի Հայաստանեայց եկեղեցւոյ»: Իջման ս. սեղանի առաջ Նորընծաները ուխտում են անխոտոր և անսայթաք ընթանալ Հայաստանյայց առաքելական եկեղեցու ուղղափառ վարդապետության շավղով և հավատարիմ լինել «սրբոյ Էջմիածնի մինչև ցվախճան կենաց իւրեանց կալ մնալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան և հրամանաց սրբոյ կաթուղիկէ Մայր Աթոռոյս, ծառայել երէիտլի Տեառն յօգուտ և ի փառս անուան սրբոյ Էջմիածնի»:

Երդումնագրի ընթերցումից հետո Նորընծաները ստորագրում են այն, և Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանն ու լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը վկայում են ուխտադրությունը:

Կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, հայրապետական զգեստավորման մեջ, ամպհովանու ներքո, հանդիսավորապես իջնում է Մայր տաճար՝ Իրեն առընթերակա եպիսկոպոսներ ունենալով տ. Գարեգին եպս. Գազանճյանին և տ. Վահան եպս. Տերյանին:

Մայր տաճարում, ս. Ստեփանոսի սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետը բազմում է Աթոռի վրա, և սկսվում է ձեռնադրության կարգը:

Այնուհետև ս. պատարագը շարունակվում է Ավագ խորանի վրա, մինչև Ճաշոց գրքի ընթերցումը, որից հետո կատարվում է ձեռնադրության կարգը:

Նորընծաները ծնրադիր, դեմքերը դարձրած դեպի հավատացյալները, հրաժարվում են աշխարհից, մինչ Մայր տաճարի կամարների տակ հնչում է նոչման խորիմաստ շարականը՝ «Աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէտս սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ զՀմայեակ, զԱրիս և զՆերսէս վարդապետունս ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն»:

Օրհնությունը կրկնվում է երեք անգամ, որից հետո Վեհափառ Հայրապետը կատարում է օծման սրբազան կարգը:

Ապա համապատասխան աղոթքներով Նորընծա եպիսկոպոսներին տրվում են եպիսկոպոսական գավազան և մատանի՝ ի նշան եպիսկոպոսական իշխանության:

Վեհափառ Հայրապետը համբուրում է նորապսակ սրբազանների ճանատները և, ներշնչված օրվա խորհրդով, Իր հայրական պատգամներն ու հորդորը տալիս նրանց.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(1974 թ. սեպտեմբերի 29)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ»:
«Եւ լցան ամենեքեան Հոգւովն սրբով»:
Եվ լցվեցին բոլորը սուրբ Հոգով:
Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Գուցե ձեզանից շատերը հիշեն այս խոսքերը, որոնք հենց այս բեմից Մենք արտասանեցինք Հոգեգալստյան տոնի առիթով: Այն ատեն պատմեցինք, թե ինչպես երկու հազար տարիներ առաջ, երբ մեր Փրկիչը կենդանի էր և ապրում էր շրջապատված իր աշակերտներով, վերջին ընթրիքի

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՐՀՆՈՒՄ Է ՍԵՂԱՆԸ

պահին նա խոստացավ աշակերտներին, իրենից հետո առաքել մխիթարիչ սուրբ Հոգին: Աշակերտները այն ատեն շատ հստակ չհասկացան գուցե, թե ինչ էր ուզում ասել Հիսուս, բայց նրանք այդ սկսան հասկանալ, նրա մահից հետո, նրա հարությունն առնելուց հետո: Երբ Հիսուս բացակայում էր արդեն իրենց շրջանակից, նրանք՝ առաքյալները, զգում էին իրենց իբրև որբացածներ: Այն ատեն հիշեցին նրանք, թե երկի աստվածային մեծ խոստումն ի կատար կածվի, և Հիսուս իր անձի փոխարեն կառաքի մխիթարիչ ս. Հոգին:

Այդ հրաշքը կատարվեց Պենտեկոստեի օրը, այսինքն այն օրը, որ մենք ոգեկոչում ենք իբրև Հոգեգալստյան օր ի հիշատակ այն դեպքի, որ իսկապես տեղի ունեցավ Վերնատան մեջ, երբ հավաքվել էին Քրիստոսի աշակերտները Աստվածամոր շուրջ: Հանկարծ, պատմում է մեզ ս. Գիրքը, կրակե լուսեղեն բոցեր կաթիլ-կաթիլ իջան ամեն մեկ առաքյալի վրա և նրանք ցնցվեցին այդ լույսով, հոգեպես վերափոխվեցին, վերածնվեցին և դարձան մարդիկ ներշնչյալ, մարդիկ մի մեծ առաքելության գիտակցությամբ:

Ահա այդ պահն է, որ աշակերտները դարձան իսկական առաքյալները Հիսուսի Քրիստոսի, սուրբ Հոգին ընդունելով իրենց մեջ և հետո աշխարհով մեկ տարածվեցին քարոզելու համար սուրբ Ավետարանը: Առաքյալները լցված էին սուրբ Հոգու զորությամբ, զոր ապա սկսան նրանք փոխանցել ձեռնադրության խորհուրդի միջոցավ: Այսպես է, որ հիմնվեց, հաստատվեց ամուր կերպով այն մեծ խորհուրդը, որ կոչում ենք մենք այսօր ձեռնադրության խորհուրդ, մի խորհուրդ, որը հենց այսօր ձեր ներկայությամբ, սիրելի հավատացյալներ, Մենք կատարեցինք ի վերա մեր երեք վարդապետների, դանոնք ձեռնադրելով եպիսկոպոս: Ինչպես նկատեցիք անշուշտ, արարողությանց ընթացքին մի քանի անգամներ, Մեր ձեռքը դրեցինք նրանց վրա ու աղոթքներ կարդացինք այն հավատքով, որ աստվածային սուրբ Հոգու զորությունը փոխանցվում է նրանց խորհրդավոր կերպով: Եվ Մենք այսօր անկեղծավոր սրտով, խոր հավատքով և ամենաջերմ բաղձանքներով աղոթեցինք, որպեսզի Աստուծո ողորմությամբ սուրբ Հոգվո շնորհները փոխանցվեն այսօր ձեռնադրված երեք եպիսկոպոսներին, որպեսզի նրանք, ինչպես Պենտեկոստեի օրը այդ պատահեց առաքյալներին, սուրբ Հոգվո ներգործությամբ վերափոխվեն, վերածնվեն հոգեպես, առավել զորանան և լուսավորվեն և առավել գիտակցեն իրենց մեծ և սուրբ առաքելությունը, մի առաքելություն հոգևոր իմաստով, մի առաքելություն դաստիարակչական իմաստով, մի առաքելություն ժողովուրդը առաջնորդելու իմաստով, մի առաքելություն մեր ժողովուրդին ծառայելու իմաստով:

Ահա մի քանի խոսքով այն գործը, այն աշխատանքը, որ սպասում է մեր նորապսակ եպիսկոպոսներին:

Դուք, սիրելի հավատացյալներ, գուցե հեռվից դիտելով այնքան չեք կարող հասկանալ ամբողջական իմաստը հոգևոր առաքելության, հոգևոր ծառայության և առաջնորդության: Իրականության մեջ, վստահ եղեք, չափազանց ծանր պարտականություն է դրվում հոգևորականների վրա:

Մենք քիչ առաջ նշեցինք հոգևոր առաքելության տարբեր երեսները: Արդեն այդ բավական է ձեզ հասկանալու, թե ինչքան ընդարձակ է դաշտը հայ հոգևոր գործչին: Եվ եթե դրա վրա ավելացնենք բազում այլ և այլ դժվարությունները, որոնցմով շրջապատված ենք մենք, մեր հոգևոր գործունեության ճանապարհին, հատկապես արտասահմանում տարբեր-տարբեր պայմանների մեջ, այն ատեն ամբողջապես, հստակ կդառնա ձեր աչքի առաջ ճշմարիտ պատկերը, ճշմարիտ պատկերը հայ հոգևորականի աշխա-

տանքին, պարտականությունքներին։ Սակայն այս բոլորը մեզ՝ հոգևորականներիս, անշուշտ որ չեն վախեցնում, չեն տկարացնում, չեն հուսահատեցնում, ընդհակառակը, ամեն ճշմարիտ հոգևորական, ինչպես առհասարակ, բարոյական նկարագիր ունեցող ամեն մարդ, հենց առավել ևս ոգեշնչվում է, երբ իր աշխատանքը ծանր է, երբ իրենից ավելի է պահանջվում, քան թե սովորական մարդկանցից, երբ ինքը նույնիսկ դագում դժվարությունների է հանդիպում։ Դժվարությունները տկար մարդկանց պարտությանն են մատնում, բայց հոգևոր-բարոյական ուժեղ նկարագիր ունեցող մարդկանց ընդհակառակը առավել զորացնում են ու առավել գոտեպնդում։

Ահա այսպիսի սպասումներով Մենք ողջունում ենք մեր երեք նորապսակ եպիսկոպոսներին՝ մի անգամ ևս բարձրացնելով առ Աստված Մեր աղոթքը, որ իրոք ս. Հոգվո շնորհները իջնեն և ներգործեն նրանց ներաշխարհին մեջ, և նրանք շուտով մեկնեն Մայր Աթոռից իրենց պաշտոնատեղիները՝ կատարելու համար այն նվիրական գործը, որ մեր ժողովուրդը, մեր եկեղեցին նրանց ուսերի վրա է դնում՝ հուսալով որ նրանք կլինեն արժանավոր բարձրաստիճան հոգևորականներ, և նրանց ձեռաց գործերը կլինեն միշտ բարի, մաքուր, խաղաղաբար, հաշտարար և ստեղծարար, և հատկապես սրբությամբ կպահեն-պահպանեն Մեր պանդուխտ զավակները ամբողջ ու անբաժան ի ափյուռս աշխարհի, որոնք կարիք ունեն մեկտեղվելու, կարիք ունեն սուրբ եկեղեցու հովանու ներքև հավաքվելու, որպեսզի բոլորը մնան միշտ հավատարիմ զավակները մեր առաքելական սուրբ եկեղեցու, միշտ անբաժան հայաստանցի ժողովրդից, միշտ անբաժան մեր եկեղեցու կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնից։

Սիրելի սրբազաններ, կրկին անգամ հայցում ենք ձեզ Աստուծո օրհնությունը և օգնականությունը, և աղոթում ենք ձեր կյանքի և ձեր արդյունաշատ գործունեության համար, որպեսզի դուք լինեք ժիր մատուակները Հայաստանյայց եկեղեցու։

Օրհնյալ եղերուք այժմ և միշտ. ամեն»։

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Թուրքիայի հայոց պատրիարք ամենապատիվ տ. Շնորհք սրբազան արքեպիսկոպոս Գալստյանի, եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարանի գահասրահ։

Եկեղեցական թափորին հետևում են Մայր Աթոռի հյուրերը և բազմաթիվ ուխտավորներ։

Հայաստանյայց ս. եկեղեցու բարձրաստիճան հոգևորականության անունից, գահակալության 19-րդ տարեդարձի առիթով, Վեհափառ Հայրապետին ուղղված շնորհակալական ջերմ խոսք է ասում Թուրքիայի հայոց սրբազան պատրիարքը.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊ. ԳԱԼՍՏՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ՝ ՆՐԱ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 19-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ
(1974 թ. սեպտեմբերի 30)

Աստուծո՛ողորմությամբ, 19 տարիներ առաջ՝ մենք անձամբ ներկա էինք այդ երջանիկ օրերուն, երբ կար խոշոր խանդավառություն, կար ցնծու-

ԻԴԱՍՏՈՒԴԻՈՆԻ ԴՈՒՌՈՒՅԻՑՈՎ ԶՈՒԲԱՍՏՈՒՄԻ ՎՏՈՒՆՈՒՄԸ



թյուն, կար հույզերու հորդում: Երբ ամբողջ ժողովականները միաձայնությամբ իրենց կամքը կետրոնացուցին Ձեր անձին վրա, այն վստահությունը ունեին, թե կընտրեին ոչ միայն արժանավորագույն հոգևորականը, այլ նաև ամբողջ ազգին բաղձանքները իր մեջ մարմնավորող անձնավորություն, և իրենց այդ համոզումին մեջը հուսախաբ չեղան անոնք: Անցնող 19 տարիները արդարև մեկը մյուսին գերազանցող ոսկե շղթա մը եղավ, Վեհափառ Տեր: Ձեր հայրապետական պաշտոնավարության ամեն մեկ տարին քայլ մը եղավ առաջացումի, քայլ մը՝ բարգավաճումի և քայլ մը պայծառացումի Մայր Աթոռի և Հայաստանյայց առաքելական եկեղեցիին համար: Ամենքս ալ գիտեինք, թե այն օրերուն Էջմիածինը անփառունակ կացության մը մեջ կգտնվեր: Ամենքս ալ վերահասու էինք, թե Ձերդ Վեհափառության ուսերուն վրա ծանր բեռ մը կդրվեր: Դուք այն ատեն եռանդուն ու երիտասարդ՝ ունեցաք արիությունը, քաջությունը՝ ստանձնելու այս պատասխանատու պաշտոնը և այսպես այսօրվան այս պայծառության բերելու:

Մեր Մայր Աթոռը ավելի քան 1600 տարիներու իր շատ արկածալից պատմության ընթացքին ունեցած է փառավոր օրեր և նեմ օրեր. բախտավոր օրեր և անբախտ օրեր: Կարող ենք ըսել անվարան, Վեհափառ Հայրապետ, թե այսօրվանը ամենաբախտավոր շրջաններեն մեկն է. բախտավոր բազում իմաստներով և բազում պատճառներով. բախտավոր նախ անոր համար որ աճավոր և արյունլվա վերջին պատերազմե հետո Դուք Լուսավորչի գահը բարձրացաք և տեսաք այս հայրենիքի վերաբարձրացումը և վերաբարգավաճումը: Անոր զուգընթաց բարգավաճեցավ նաև Մայր Աթոռը Ձեր շնորհիվ: Առանց չափազանցության կարող ենք ըսել, թե ամբողջ իր պատմությանը մեջ Մայր Աթոռը քիչ անգամ եղած է այնքան բարեկարգ ու այնքան պատվաբեր, Հայաստանյայց առաքելական եկեղեցվո համար, որչափ եղավ Ձեր հայրապետության օրոք: Ասոր համար մենք երախտապարտ ենք Ձեզի, ասոր համար մենք ամենքս ուրախ և երջանիկ ենք Ձեր հետ:

Եվ Դուք, Վեհափառ Տեր, եղաք այն Հայրապետը, որ ամենեն ավելի մոտեցավ իր ժողովուրդին, անոր հետը եղավ, անոր մեջը շրջեցավ իբրև քաջ հովվապետ: Քանիցս ցույց ձեռին Դուք գաղթօջախե գաղթօջախ, հայ համայնքե հայ համայնք շրջագայեցաք իբրև հովիվ քաջ տանելու համար Ձեր հայրական սերը և օրհնությունը անոնց: Էջմիածնի հանդեպ հայ ժողովուրդի հավատարմության զգացումները ավելի ամրապնդեցիք: Եվ թերևս քիչ անգամ Էջմիածինը ունեցած է այն հզոր քաջողական զորությունը, որ այսօր ունի անիկա: Եվ, փառք Նախախնամության, ստեղծված են այնպիսի պայմաններ հայրենի կառավարության թույլտվությամբ, որոնց շնորհիվ արտասահմանեն գունդ առ գունդ ուխտավորներ կուգան հայրենիք և Մայր Աթոռ վայելելու համար երկուքն ալ. քիչ մը ավելի զորացած, և քիչ մը ավելի հպարտացած վերադառնալու համար իրենց բնակատեղիները:

Եվ այս է կարևոր առաքելություններեն մեկը, Վեհափառ Տեր, Մայր Աթոռին, որպեսզի արտասահմանյան հայությունը չվհատի ամենքին ծանոթ վտանգներու ներքև. և ընդհակառակը այս կամ այն ձևի ձուլումի և այլ վտանգներու պարագային, որոնք կշրջապատեն զմեզ, մենք կարենանք նայիլ հայրենիքին, նայիլ Մայր Աթոռին և ըսել, թե մենք ունինք մեր կետրոնները հայրենական ու հայրապետական, որոնք մշտնջենապես պիտի պահեն զմեզ:

Այս շատ բարեբաստիկ և երջանիկ առիթով ինձի համար մեծ բախտավորություն է Վեհափառ Տեր, սրտագին շնորհավորել զՁեզ նախ անձամբ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԿԵՂԱՐՈՒՆԻ

մեր անունով, իբրև պատրիարք հայոց Թուրքիո, և ապա՝ հանուն Հայաստանյայց եկեղեցվո նվիրապետական Աթոռների և համայն հայ հոգևորականության: Կբերենք անգամ մը ևս ամբողջ Թուրքիո հայության որդիական սերը և հավատարմության զգացումները և կմաղթենք ու կաղոթենք, որպեսզի Տերը պարգևի Ձեր Վեհափառության զորություն և օգնականություն, և օժտյալ պահե Ձեզ մշտական քաջառողջությամբ, դեռ երկար տարիներ մնալու համար այս պատմական մեծ գահին վրա նույն արդյունավորությամբ և նույն արժանավորությամբ, և շարունակելու համար հայրապետական այս ծանր պաշտոնը ավելի երկար տարիներ ի փառս Աստուծո, ի պաշտպանություն Հայաստանյայց Եկեղեցվո և ի մխիթարություն մեր ժողովուրդի. ամեն»:

Հանուն հայրենի կառավարության և հայ եկեղեցու գործերի խորհրդի, Վեհափառ Հայրապետին շնորհավորում է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ ՆՐԱ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 19-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

(1974 թ. սեպտեմբերի 29)

«Ձերդ Սրբություն,
Ամենապատիվ սրբազան պատրիարք Թուրքիայի հայոց,
Գերաշնորհ հայրեր,
Հարգելի ներկաներ,

Ինձ վրա հաճելի պարտականություն է դրված այս հանդիսավոր առիթով Հայաստանի կառավարության, հայ եկեղեցու գործերի խորհրդի անդամների և անձամբ իմ կողմից՝ հայտնելու Ձեզ մեր ջերմագին շնորհավորանքները և քաջառողջության լավագույն ցանկությունները՝ Ձեր գահակալության 19-րդ տարեդարձի առթիվ:

Շատ երկար ժամանակ պետք է պահանջվեր ինձնից՝ բնութագրելու համար այն բազմաբեղուն գործունեությունը, որ Դուք ունեցաք այս տարիների ընթացքում: Կկամենայի ընդգծել այդ գործունեության միայն մի քանի կարևոր կողմեր: Հանրահայտ է, որ Դուք Ձեր ջանքերի մի զգալի մասը նվիրեցիք հայ եկեղեցու ներքին և արտաքին թեմերի գործունեության կազմակերպմանը: Սակայն դրան զուգահեռ Դուք մեծապես շնորհակալ աշխատանք կատարեցիք մեր պատմական անկրկնելի հուշարձանների վերականգնման ուղղությամբ, հուշարձաններ, որոնք հայտնի են ոչ միայն հայ ժողովրդին, այլև աշխարհի մյուս ժողովուրդներին:

Հատկանշական է, որ մենք այսօր հավաքվել ենք այստեղ այն ժամանակ, երբ նոր միայն ավարտվեց Մայր Աթոռի շրջափակի մի կարևոր մասի Ղազարապատի վերանորոգումը: Այդ աշխատանքը Դուք զուգակցեցիք հրատարակչական գործունեության հետ: Ձեր գահակալության 19-րդ տարեդարձի օրը հրապարակի վրա է մի նոր հրաշալի հրատարակություն, որը կոչվում է «Հայկական խաչքարեր»:

Հետպատերազմյան շրջանը ամբողջ հայ ժողովրդի համար նշանավորվեց որպես բնաշխարհի ժողովրդի և սփյուռքահայության միջև կապերի ան-



Ներսից դիտված գմբեթի 2ՕՇՇ զոհիցասիկոսի կոտորածները

նախընթաց ծավալման շրջան, որը մեզ համար չափազանց մեծ նշանակություն ունի: Դուք չխնայեցիք Ձեր եռանդն ու կորովը՝ չափազանց մեծ աշխատանք կատարելով սփյուռքահայության և հայրենի ժողովրդի միջև ամուր նամուրջ անխորտակելի դարձնելու ուղղությամբ:

Դուք մեծ ավանդ բերեցիք այն ասպարեզում, որն այժմ հուզում է ամբողջ մարդկությանը, որն ամենակարևոր խնդիրն է հանդիսանում աշխարհի բոլոր ժողովուրդների համար: Դա խաղաղության ամրապնդման գործն է, դա ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման գործն է, նրանց միջև խաղաղ համագործակցությունն ապահովելու գործը: Այժմ աշխարհի ժողովուրդները տեսնում են, որ այս դժվարին ճանապարհին շատ մեծ հաջողություններ են արձանագրված: Աշխարհի ժողովուրդները տեսնում են սովետական պետության տիտանական ջանքերը՝ ամբողջ աշխարհում կայուն խաղաղություն հաստատելու ուղղությամբ: Ուրախ եմ հաստատելու, որ Ձեր այդ գործունեությունը բարձր է գնահատվում հայ ժողովրդի և Սովետական Միության մյուս ժողովուրդների կողմից, միջազգային առաջադեմ հասարակայնության կողմից:

Խաղաղության վսեմ գործի ամրապնդման նպատակով այս դահլիճում եղել են ռուս ժողովրդի, մեր Միության մյուս ժողովուրդների, ինչպես նաև քրիստոնեական աշխարհի հեղինակավոր շատ ներկայացուցիչներ:

Այս անցած տարիները նշանավոր են նաև նրանով, որ Դուք բազմաթիվ ուղևորություններ կատարեցիք դեպի արտասահմանի հայ գաղութները, ինչպես նաև եկեղեցական կենտրոնները: Այդ ուղևորությունների նշանակությունը դուրս եկավ հայկական ազգային շրջանակներից և միջազգային լայն արձագանքներ ունեցավ:

Թույլ տվեք ընդգծել նաև, որ հայ եկեղեցու և կրոնական մյուս համայնքների գործունեությունն ապահովվում է խղճի ազատության վերաբերյալ սովետական պետության օրենքների խստիվ պահպանմամբ:

Թույլ տվեք կրկին ողջունել Ձեզ, Ձերդ Սրբություն, և կամենալ քաջառողջություն, երկար տարիների կյանք և Ձեր հայրենասիրական գործունեության մեջ՝ նոր հաջողություններ»:

Այնուհետև Հայոց Հայրապետին շնորհավորում է Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը.

Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

(1974 թ. սեպտեմբերի 29)

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ Շնորհք պատրիարքը խոսեցավ հանուն հայ եկեղեցվո դարձրաստիճան հոգևորականության, մեր սիրելի նախարարը՝ պրն. Գասպարյան, խոսեցավ հանուն մեր հայրենի կառավարության, ե՛ս ալ, հավանաբար, եթե թույլ տաք, կարենամ խոսիլ հասարակ եկեղեցականության անունեն, աշխարհի չորս կողմը սփռված Ձեր հարազատ զավակներու անունեն, որոնք այնչափ սիրով և անկեղծությամբ կապված են Ձեր անձին, Ձեր գործին և Մայր Աթոռ ս. Էջմիածնին, և եթե ատոնց վրա թույլ տաք՝ նաև հանուն Գերագույն հոգևոր խորհուրդին:

Վեհափառ Տեր, այսօր ամբողջ հայ եկեղեցիներուն մեջ, ըլլան անոնք ի Հայաստան աշխարհի, ըլլան անոնք ի սփյուռս աշխարհի, կհիշատակեն Ձեր բարեբաստիկ գահակալության 19-րդ տարեդարձը։ Եվ ավելացնեմ, որ մեծ անձկությամբ և մեծ փափագով կսպասեն Ձեր գահակալության 20-րդ տարեդարձին, որ կարենան այդ առիթով շատ ավելի մեծ հանդիսությամբ և շատ ավելի մեծ փառքով անդրադառնալ Ձեր այդ 20 տարիներու այնչափ պայծառ, այնչափ բեղմնավոր, այնչափ խորունկ կրոնական և հայրենասիրական գործերուն։ Ես ինքզինքիս թույլ չեմ տար այսօր ատոնց մասին անդրադառնալու, երբ արդեն մեր երկու սիրելի խոսողներուն կողմե ակնարկություն եղավ այդ մասին։ Միայն կուզեմ շեշտել, որ, Վեհափառ Տեր, Ձեր անձին հմայքովը լցված է արտասահմանի հայությունը և արտասահմանի մեջ գործող բոլոր եկեղեցական իշխանությունները և կրոնական հաստատությունները։ Այս 19 տարիներու ընթացքին մեր պատմության մեջ բոլորովին չտեսնված երևույթ մը, եթե կուզեք՝ հրաշք մը բացվեցավ հայրենի աշխարհին մեջ գտնվող ժողովուրդին և արտասահմանի հայության միջև։ Այդ երևույթը, այդ հրաշքը Դուք եք, որ կատարեցիք, Վեհափառ Տեր։ Մեզի համար և ասկե առաջ արտասահման ապրող բոլոր հայության համար Մայր Աթոռ ս. Էջմիածինը, հայրենիքը, Արարատը և տակավին Սանահին, Հաղբատ, Տաթևի համալսարան-վանքերը անուններ էին, երազներ էին, որոնց միմիայն մտքով կրնայինք հասնիլ։ Ձեր գահակալության առաջին իսկ օրերեն թե՛ մայր հայրենիքը և թե՛ Մայր Աթոռ ս. Էջմիածինը և թե՛ մեր հայրենիքի մեջ գտնվող բոլոր սրբությունները Ձեր անձով երազ ըլլալեն դադրեցան և իրականություն դարձան։ Դուք ուր որ գացիք, Փարիզեն Հռոմ, Նյու-Յորքեն Երուսաղեմ, ամեն տեղ Ձեր շնորհալի անձին հետ տարիք սրբությունները, նվիրականությունները մայր հայրենիքին և Մայր Աթոռ ս. Էջմիածնին։ Եվ ասիկա միմիայն Ձեր Վեհափառության գահակալության շրջանին է, որ տեղի ունեցավ բարյացակամ օժանդակությամբը մեր հայրենի կառավարության և ձեռներեցությամբը Ձերդ Վեհափառության։

Վեհափառ Տեր, այսօր, երբ Մայր Աթոռ ս. Էջմիածինը, մեր բոլոր սրբությունները և նվիրականությունները և մեր մայր հայրենիքը երազ ըլլալե դադրած են և իրականություններ դարձած են, այսօր արտասահմանի հայությունը կարծեք թե կզգա, որ Դուք ամեն եկեղեցիի մեջ այսօր ներկա եք, և մենք, ինչպես այսօր, կտեսնենք Ձեզ, կլսենք Ձեզ և անձամբ բախտավորությունը և երջանկությունը ունինք Ձեզի շնորհավորելու, նույն ձևով ալ, վստահ եղեք, որ արտասահմանի ամենապարզ եկեղեցիի ամենապարզ քահանան անգամ երբ պատարագ կընե և հայրապետական մաղթանք կկատարե, իր աչքին առջև ունի Ձերդ Սրբության վեհ և քաղցր անձնավորությունը, ասոր հետ նաև՝ Մայր Աթոռ ս. Էջմիածինը, անոնց հետ նաև՝ մեր վերածնած մայր հայրենիքը։

Վեհափառ, այս ուրախ առիթով և 19 տարիներու այս բեղմնավոր արդյունքներով ես, հանուն հայ պարզ ժողովուրդին և հանուն պարզ եկեղեցականության, կշնորհավորեմ Ձեզ, Վեհափառ Տեր, մաղթելով Ձեզի առողջ, երկար և ավելի բեղմնավոր տարիներ։

Այս առթիվ, Վեհափառ Տեր, թույլ տվեք կրկին Ձեզի շնորհավորեմ և միմիայն հիշեմ, որ ինչպես անցած տարի, Ձեր գահակալության 18-րդ տարելիցին առիթով, այս տարի ևս մեր բարձրաստիճան եկեղեցականներուն թիվին վրա ավելացան երեք նորապսակ խոստումնալից և արժանավոր եպիսկոպոսներ։

Ես կմաղթեմ, որ Դուք շատ երկար ապրիք և շատ ավելի առիթներ ունենաք Ձեր ձեռքը դնելու շատ արժանավոր եկեղեցականներու վրա, որպեսզի մեր Ազգիրապետական Աթոռներու շարունակականությունը միշտ անխախտ մնա՝ ի փառս Աստուծոյ և ի պայծառություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվոյ և ի մխիթարություն մեր համայն հավատացյալ ժողովուրդի»:

Վերջում շնորհակալության և օրհնության խոսք է ասում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ ԻՐ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 19-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

(1974 թ. սեպտեմբերի 29)

«Մենք պետք է նախ գոհություն տանք Աստուծոյ, որ շնորհեց Մեզ ապրելու այս օրերը, նշելու Մեր գահակալության 19-րդ տարեդարձը և միասին ուրախանալու այն իրագործումների համար, որոնք կատարվեցին անցյալ տարիների շրջանին: Սրտագին շնորհակալություն այն բարի խոսքերի համար, որոնք ուղղվեցին Մեր համեստ անձին, խոսքերը ամենապատիվ սրբազան Շնորհք պատրիարքի, մեծարգո պարոն Սարգիս Գասպարյանի՝ նախագահը եկեղեցական գործերի խորհրդի և ներկայացուցիչը այստեղ մեր հայրենի հարազատ պետության, նաև խոսքերը, ներշնչված խոսքերը գեր. Սերովբե արքեպիսկոպոսի՝ հայրապետական պատվիրակը մեր Արևմտյան Եվրոպայի: Նրանց լսելով և մի պահ պատկերացնելով այն, ինչ որ կարողացանք իրագործել այս 19 տարիների ընթացքում, Մենք անշուշտ ուրախ եղանք, որովհետև իրոք ապարդյուն չանցան այս տարիները: Սակայն և արդար է մտածել, որ այս բոլորը վերագրել միմիայն Մեր ուժերին, անշուշտ որ չափազանցված պիտի լիներ: Թեև այդ բոլորը կապվում են Մեր անվան հետ, Մեր գահակալության շրջանի հետ, բայց իրականությունն այն է, որ այդ բոլորն իրագործվեցին շնորհիվ բարենպաստ պայմանների, որոնք գոյություն առին մեր երկրում, մեր շուրջ, այստեղ և արտասահմանում: Սերովբե սրբազան հայրը հրաշք բառը օգտագործեց որոշ իմաստով, Մենք էլ համաձայն կլինենք իր հետ, որ իրոք հրաշքի համազոր պետք է նկատել այս բոլորը, բայց, ինչպես գիտենք մեր պատմությունից, մեր եկեղեցու անցյալից, բազում դժվարությունների միջով անցնելուց հետո, երբեմն անբացատրելի կերպով նույնիսկ, կարծես ի վերուստ եղած մի կարգադրությամբ մեր եկեղեցին և Մայր Աթոռը վերանորոգման ու ծաղկման նոր շրջաններ են ապրել: Իրոք, բազմաթիվ պայմաններ և տվյալներ ի մի հավաքվեցին, միավորվեցին և ստեղծեցին այսպիսի իրադրություն Մեր գահակալության 19 տարիների ընթացքում: Մենք չենք ուզում կեղծ համեստությամբ հրաժարվել Մեր մասնակցությունից: Անշուշտ որ Մենք աշխատեցինք Մեր կարելին և ավելին անել, մի տեսակ կենտրոնը հանդիսանալ այն բոլոր տվյալներին, ուժերին, որոնք համախմբվեցին, միատեղվեցին Մեր շուրջ: Գուցե Մեր արժանիքն այն եղավ, որ կարողացանք օգտագործել այդ բոլորը, միավորել, ներդաշնակել և մեկ նպատակի ծառայեցնել: Ահա այսպես է որ միացյալ ուժերով՝ հայրենի պետություն, Մեր գործակիցներն այստեղ, Մայր Աթոռում հոգևորական թե աշխարհական, մեզ գործակցող եղբայրները մեր արտասահմանում, ինչպես հենց ինքը Կ. Պոլսո Շնորհք սրբազան պատրիարքը, ինչ-

պես նաև Երուսաղեմի սրբազան պատրիարքը և մեր բոլոր թեմական առաջնորդները և բազում մեծահոգի հայ ժողովրդի զավակներ, բարերարներ Մայր Աթոռ ս. Էջմիածնի, որոնք բոլորը, բոլորը նեցուկ կանգնեցին Մեզ և վճռական դեր կատարեցին իրենց բարոյական և նյութական օժանդակությամբ: Եկեք միասին փառք տանք Աստուծո, որ արժանի արեց մեզ բոլորս, որ դերակատարները լինենք կատարված իրագործումների, և փառք տանք Աստուծո, որ այդ տվյալները և պայմանները գոյություն ունեն նաև այսօր որով Մենք նույն բարեկամական ուժերով շրջապատված, Մեր հոգևոր եղբայրների անմիջական գործակցությամբը պիտի կարողանանք շարունակել Մեր աշխատանքը՝ ի պայծառություն, առավել պայծառություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի, Հայաստանյայց եկեղեցու ընդհանրապես, ի մխիթարություն մեր համայն հավատացյալ ժողովուրդին:

Հրաշքի համազոր է նաև հաստատել մեր պարզ, բանվոր և գյուղացի ժողովրդի սերը և հարգանքը դեպի իր սրբությունները, դեպի իր ավանդությունները, արժեքներ, որոնք մի պահ թվում էին մոռացված լինել, բայց արդեն նրանք վաղուց երևան եկած են լույս աշխարհ, և Մենք տեսնում ենք, ինչպես գունդագունդ մեր ժողովուրդը մոտենում է մեր ս. սեղաններին, մեր նվիրական տաճարների պարիսպներին և իր համբույրով, իր աղոթքով, իր վառած մոմերով ասում է ինչ-որ մի բան այսօր: Մեր ժողովուրդը դարեր շարունակ բարձր պահեց իր հոգու դրոշակը և այդպես ապրեց միշտ ներշնչված և միշտ հոգեկան սնունդով հագեցած, միշտ ստեղծագործ: Մենք հպարտ ենք մեր ժողովրդով, մեր ժողովրդի հավատքով, մեր ժողովրդի լավատեսությամբ, մեր ժողովրդի աշխատանքով, մեր ժողովրդի հանճարով և մեր ժողովրդի ազնիվ երազանքներով և տեսիլքներով:

Թող Աստված օրհնի մեր սուրբ եկեղեցին և մեր հարազատ և հավատարիմ ժողովուրդը՝ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Ամեն:

Կրկին շնորհակալություն ձեր ազնիվ մտածումների և զգացմունքների համար»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ-ՃԱՇԿԵՐՈՒՅԹ

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհարանում տեղի է ունենում պաշտոնական ընդունելություն-ճաշկերույթ՝ Վեհափառ Հայրապետի գահակալության 19-րդ տարեդարձի ուրախ առիթով:

Ընդունելությանը ներկա են լինում տ. Շնորհք սրբազան պատրիարքը, տ. Սերովբե, տ. Կոմիտաս, տ. Զգոն, տ. Հուսիկ, տ. Գարեգին, տ. Վահան, տ. Արսեն, տ. Նարեկ, տ. Գևորգ, տ. Հմայակ, տ. Արիս, տ. Ներսես սրբազանները և Մայր Աթոռի միաբաններն ու այլ հրավիրյալներ:

Հրավիրյալների թվում էին՝ գահակալության հանդիսությունների առիթով Մայր Աթոռ ժամանած սփյուռքահայ բազմաթիվ ուխտավորներ:

Պատվո սեղանի շուրջ, Վեհափառ Հայրապետի կողքին, տեղ է գրավում նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

Սեղանն օրհնում է Վեհափառ Հայրապետը:

Խանդավառ մթնոլորտում Վեհափառ Հայրապետի գահակալության տարեդարձը ջերմորեն շնորհավորում են տ. Շնորհք սրբազան պատրիարքը, տ. Սերովբե արքեպ. Մաճուկյանը, պրն. Ս. Գասպարյանը և այլ սեղանակիցներ:

Վեհափառ Հայրապետը բաժակ է բարձրացնում, ի դեմս պրն. Սարգիս

Գասպարյանի, հայրենի բարեխնամ կառավարության հայրենաշեն գործերի հաջողության համար՝ շեշտելով Իր երախտագիտությունը դեպի հայրենի կառավարությունը, Մայր Աթոռի գործերի հաջողության մեջ կարևորությամբ նշելով նրա բարոյական ու օրինական օժանդակությունը:

Այնուհետև Հայոց Հայրապետը երկրորդ բաժակն առաջարկում է բարձրացնել հայ հոգևոր դասի և, մասնավորաբար, նորապսակ երեք եպիսկոպոսների կենացը: Նորին Սրբությունն այս առթիվ շնորհավորում է նորապսակներին՝ տալով նրանց եպիսկոպոսական պանակն, որպես եպիսկոպոսական իշխանության արտաքին նշան, և ցանկանում նրանց տեսնել հայ եկեղեցուն և հայ ժողովրդին լավագույն ծառայողների շարքում:

Ապա Ամենայն Հայոց Հայրապետին ուղղված շնորհակալական և երախտագիտության որդիական ջերմ խոսք են ասում նորապսակ սրբազանները:

ՆՈՐԱՊՍԱԿ Տ. ՀՄԱՅԱԿ ԵՊՍ. ԻՆԴՌՅԱՆԻ ԽՈՍՔԸ

«Ձերդ Վեհափառություն,

Հովհաննես Ոսկեբերան Հայրապետ իր քարոզներեն մեկուն մեջ, բնաբան ունենալով Մատթեոս Ավետարանի «Գոհանամք զՔէն Տէր երկնի և երկրի...» համարը, երախտագիտությունը համարում է քրիստոնեական առաքինությունների մայրը, ազնվական զգացումների աղբյուրը:

Ամերիկայի Միացյալ Նահանգներն ու Կանադան տարվա մեջ մասնավոր հանդիսավոր օր մը հատկացուցած են երախտագիտության, որ տարվան հինգ մեծագույն տոնախմբումներեն մին է այդ երկիրներուն:

Բնական է երախտագիտությունը բարիքի մը, օգնության մը, գնահատանքի մը կամ տրված շնորհի մը գիտակցությունն է: Իսկ երախտապարտությունը, խղճամիտ և գիտակից անհատին համար ծանր պատասխանատվություն է:

Կյանքիս այս կարևոր հանգրվանի պահուն, գիտեմ թե ասպարեզակիցներես բացառիկ քիչերու երախտապարտ մնացած եմ, հակառակ շատերու օգտակար եղած ըլլալուս: Այդ բացառիկ քիչերն եղած են իմ հոգևոր ծնողներս: Առաջին, հոգելույս Գուշակյան պատրիարք, որ ոչ միայն իմ ուսուցիչս և գիս կուսակրոն քահանա ձեռնադրողն եղած է, այլ նաև պաշտպանս: Երկրորդ, Ձերդ Վեհափառությունը, որ ինձի շնորհած է Հայաստանյայց եկեղեցվո բարձրագույն երկու աստիճանները՝ ծայրագույն վարդապետությունն ու եպիսկոպոսությունը, որոնց համար խորապես երախտապարտ եմ: Ուրախ եմ և երախտապարտ Ձերդ Ս. Օծության շնորհներուն արժանանալուս համար, վանզի իրավամբ Դուք մեծագույն և շինարար Հայրապետն եք Ամենայն Հայոց: Դուք հայ ժողովուրդեն թե օտարներեն սիրված, հարգված և մեծարված Հայրապետն եք Ամենայն Հայոց: Դուք իմաստուն, շրջահայաց և տնտեսագետ Հայրապետն եք Ամենայն Հայոց, որ այս 19 տարվան ընթացքին կարգավորած և բարեզարդած է Մայր Աթոռ ս. Էջմիածինը ամբողջովին:

Ինձի համար ուրախություն է Ձերդ հայրապետական հովանիին ներքև ծառայել Մայր Աթոռին, Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցիին, հայ ժողովուրդին և անարգել ուռճացող մեր սիրելի հայրենիքին՝ Սովետական Հայաստանին:

Կփափագինք բաժակ բարձրացնել Ձերդ Ս. Օծության արևշատության և գալիք բազմաթիվ տարիներու Ձեր փառալի գահակալության»:

ՆՈՐԱՊՍԱԿ Տ. ԱՐԻՍ ԵՊՍ. ՇԻՐՎԱՆՁԱՆԻ ԽՈՍՔԸ

«Վեհափառ Տեր,
Սրբազան և հոգևոր եղբայրներ,
Հարգելի սեղանակիցներ,

Այսօր հոգեկան խոր և խառն ապրումների օր է ինձ և օծակից երկու սրբազան եղբայրներիս համար, որովհետև Նորին Սրբության բարեհաճ որոշումով և ձեռնադրությամբ մենք կոչվեցինք եպիսկոպոսական բարձր աստիճանի: Մենք ունենք այն խորունկ գիտակցությունը, որ սա աշխարհիկ իմաստով փառք ու պատիվ չէ, այլ սրանով մեր ուսերին վրա կդրվի ավելի ծանր և լուրջ պատասխանատվություն՝ ծառայելու համար Հայաստանյայց եկեղեցուն և հայ ժողովրդին, լինի Հայաստանում կամ լինի արտասահմանում:

Մենք երեկ Իջման ս. սեղանի առաջ ուխտեցինք սրբությամբ պահել և պահպանել Հայաստանյայց եկեղեցու կանոնները, ավանդությունները և այն բոլոր սրբությունները, որոնք հատկանշում են հայ եկեղեցին, և հավատարիմ մնալ Նորին Վեհափառության հրահանգներին: Կվստահեցնենք, որ մեր ապագա գործերը վկայությունը պիտի լինեն մեր ուխտին:

Անցնող երկու տարիները Մայր Աթոռում ինձ համար եղան հոգեկան մեծ բավարարության տարիներ: Ավելի մոտեն ճանաչեցի Նորին Սրբության վեհ անձնավորությունը, Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը և նրա կարևոր տեղն ու դերը մեր եկեղեցու կյանքի մեջ: Շատ բան առի նրանցից և մայր հայրենիքից: Եվ այժմ Նորին Սրբության կարգադրությամբ պիտի գնամ հովվելու և կազմակերպելու Կանադայի շրջանը որպես թեմ: Ուժերիս ներածին չափով պիտի աշխատեմ վրաս դրված հույսերը լիովին արդարացնել՝ ամուր հիմերի վրա դնելով նոր կազմվելիք թեմը:

Այս առիթով կուզեի իմ որդիական ջերմ շնորհակալությունը և երախտագիտությունը հայտնել Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին Ամենայն Հայոց՝ իմ հանդեպ ցուցաբերած հայրական հոգածության և եպիսկոպոսական այս բարձր աստիճանը շնորհելուն համար: Թող Աստված երկար կյանք և առողջություն պարգևե Վեհափառ Հայրապետին:

Նույնպես մասնավոր շնորհակալություն կուզեի հայտնել մեր հայրենի կառավարության ներկայացուցիչ՝ Մինիստրների սովետին կից հայ եկեղեցու գործերի խորհուրդի նախագահ պարոն Սարգիս Գասպարյանին և նրա տեղակալ պարոն Սուրեն Հովհաննիսյանին, որոնք հնարավոր դարձրին անցնող երկու տարիների իմ կեցությունը այստեղ:

Պիտի ավարտեմ ասելով, որ Վեհափառ Հայրապետը անցնող տասնհինգ տարիների Իր գործունեությամբ հանդիսացավ այն ոսկե կամուրջը, որ հոգեկան անտեսանելի կապերով Հայաստանը միացրեց սփյուռքին և սփյուռքը՝ Հայաստանին: Կասկած չկա, որ Կանադայի մեր հավատավոր զավակները ևս կսիրեն մայր հայրենիքը և Մայր Աթոռ ս. Էջմիածինը: Իմ պարտականությունը պիտի լինի նրանց սրտերում արծարծ և անշեջ պահել եկեղեցասիրության, էջմիածնասիրության և հայրենասիրության ոգին»:

ՆՈՐԱՊՍԱԿ Տ. ՆԵՐՍԵՍ ԵՊՍ. ՊՈՂՈՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ

«Վեհափառ Տեր,
Ամենապատիվ պատրիարք սրբազան հայր,
Մեծարգո տիար Ս. Գասպարյան,
Սրբազան հայրեր,
Հարգարժան հյուրեր,

Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության 19-րդ տարեդարձի հանդիսությանց առթիվ մեզ՝ երեք վարդապետներիս, Հայոց Հայրապետի ձեռամբ շնորհվեց եպիսկոպոսական բարձր աստիճան:

Ծուրջ երկու հազար տարիներ առաջ, Պենտեկոստեին, Վերնատնում, աշակերտների վրա հրեղեն լեզուների կերպարանքով երկնքից իջավ ս. Հոգին, վերակերտեց խեղճուկ ձկնորսներին՝ դարձնելով նոր կրոնի ռահվիրաներ և մարդկային պատմության ընթացքը հեղափոխողներ:

Նույն ս. Հոգին ս. Թադեոս և ս. Բարթողիմեոս առաքյալների միջոցով եկավ Հայաստան աշխարհ: Նրա կենարար շնորհների առատությունից դարեր շարունակ հագեցան ս. Գրիգոր Լուսավորիչ և բոլոր եռամեծ հայրապետներն ու վարդապետները մեր:

Վեհափառ Տեր, Ձեր աղոթքներով և Ձեր աստվածատուր շնորհներով այսօր ս. Էջմիածնի դարավոր այս կամարների տակ նույն կենարար ս. Հոգին դարերի խորքից բխող, բայց հավիտենապես նոր, փոխանցվում է մեզ՝ լցնելու մեր էությունը և մեզ վերակերտելու համար:

Այս սրբավայր պահին անդրադարձը ունենք, թե քանի-քանիներ մեզ նման այս կամարների տակ երկյուղածությամբ ծնրադրել են «աստուածային և երկնաւոր շնորհ»-ին առջև: Այսպես է, որ մեր սրբազան պատմությունը կերտվում է քար առ քար, դրվագ առ դրվագ:

Մեր կյանքի ու գործունեության ընթացքում կրկին պիտի ապավինենք Ձերդ Սրբության աղոթքների ուղեկցության, որպեսզի միշտ ուժեղ զգանք մենք մեզ: Մեր հերթին միշտ աղոթողները պիտի լինենք վասն արևշատության Հայոց Հայրապետին:

Թող օրհնյալ և պայծառ մնա հայ հոգու հավիտենական վեմը՝ ս. Էջմիածին:

Թող երկար, երկար ապրի հայ ժողովրդի Հայրը՝ մեր առաքելաշնորհ Հայրապետը»:

Պաշտոնական ընդունելություն-ճաշկերույթն ավարտվում է Վեհափառ Հայրապետի գոհաբանական աղոթքով:

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀՄԱՅԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻՆԴՌՅԱՆ

Նորապսակ տ. Հմայակ եպիսկոպոսը, ազգանունով՝ Ազատ, մականունով՝ Հովսեփյան, ծնվել է 1908 թվականին Քոի գավառի Ապողնակ գյուղում:

Ապրիլյան եղեռնին ծնողների նահատակությունից հետո, որբացել է և ընկել Մալաթիայի, Սեբաստիայի և ապա Կորնթոսի ամերիկյան Նիրը Իստ Ռիլիֆի որբանոցները:

1927 թվականին, լուսահոգի տ. Եղիշե Դուրյան պատրիարքի օրով, ընդունվել է Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարան, որն ավարտել է 1932-ին, իսկ 1932—1935 թվականներին սովորել և ավարտել է ընծայարանի բաժինը՝ փայլուն հաջողությամբ:

1933 թվականին ուարկավագ և 1936-ին՝ կուսակրոն քահանա է ձեռնադրվել լուսահոգի տ. Թորգոմ պատրիարք Գուշակյանի ձեռամբ:

Այնուհետև երիտասարդ հոգևորականի առաջ բացվել է վանական, վարչական և հովվական ծառայության դաշտ:

1936—1945 թվականներին Երուսաղեմի հայոց ս. Հակոբյանց վանքում վարել է պատասխանատու պաշտոններ. եղել է սրբազան պատրիարքի գավազանակիր, մատակարար, Տնօրեն ժողովի անդամ, միաժամանակ դասավանդել է մի շարք եկեղեցագիտական-կրոնական առարկաներ Ժառանգավորաց վարժարանում, ընծայարանում և ս. Թարգմանչաց նախակրթարանում:

1942 թվականին ստացել է վարդապետական, իսկ 1955-ին՝ ծայրագույն վարդապետական իշխանություն:

1945—1968 թվականներին պաշտոնավարել է որպես հոգևոր հովիվ նախ Հայֆայի ս. Եղիա եկեղեցում և ապա առավելապես՝ Կանադայի և Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի եկեղեցիներում, այդ թվում՝ Հեյվըր Հիլի ս. Գրիգոր Լուսավորիչ, Լորենսի, Յունիոն Սիտիի, Նյու-Յորքի ս. Խաչ եկեղեցիներում և Թրոյի ս. Պետրոս եկեղեցում:

1951—1955 թվականներին եղել է ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի թեմական խորհրդի անդամ և ատենապետ: Որպես եկեղեցական պատգամավոր 1955 թվականի հոկտեմբերին ս. Էջմիածնում մասնակցել է Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության, օծման և գահակալության հանդիսություններին:

Տ. Հմայակ եպիսկոպոսը զբաղվել է նաև գրականությամբ և հրապարակախոսությամբ: Նա աշխատակցել է «Սիոն» և «Հայաստանյայց եկեղեցի» ամսագրերին և ամերիկահայ առաջադիմական մամուլին: Նրա գրչին են պատկանում «Մահանչներ», «Ընդհանուր նշումներ» (Ա և Բ հատորներ) և «Հայրապետական պատվիրակություն ի Թեհրան» հուշագրական աշխատությունները:

Տ. Հմայակ եպիսկոպոսն իր եպիսկոպոսության շուրջ 40 տարիների եկեղեցական, կրթական, հովվական և քարոզչական բեղուն գործունեություն:

1974 թվականի օգոստոսին տ. Հմայակ ծ. վարդապետը Վեհափառ Հայրապետի կողմից հրավիրվել է աշխատանքի Մայր Աթոռ և սեպտեմբերի 29-ին եպիսկոպոս ձեռնադրվել՝ օծակից ունենալով տ. Ներսես և տ. Արիս ծ. վարդապետներին:

Տ. Հմայակ եպիսկոպոս Ինդոյանը հայ եկեղեցու կարգ ու կանոնին նախանձախնդիր, պարտաճանաչ, ծառայասեր հոգևորական է, որ յուրովսանն և նվիրումով ծառայել է մեր ժողովրդի հոգևոր սպասին:

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՐՎԱՆՅԱՆ

Նորապսակ տ. Արիս եպս. Շիրվանյանը ծնվել է 1934 թվականի հուլիսի 23-ին Հայֆա (Պաղեստին) քաղաքում: Ավազանի անունով՝ Արմենակ:

Սրբազանն իր նախնական կրթությունը ստացել է տեղի հայոց ս. Եղիա վարժարանում և այն ավարտել 1947-ին:

Մի որոշ ժամանակ նա հաճախել է նաև տեղի ֆրերների ֆրանսիական վարժարանը:

1948 թվականին ծնողների հետ գաղթել է և հաստատվել Բեյրութում, ուր հաճախել է Նոր Մարաշի ս. Քառասուն Մանկանց վարժարանը, որն ավարտել է 1950-ին:

1952 թվականին ընդունվել է Երուսաղեմի հայոց Ժառանգավորաց վարժարանը:

1954 թվականին սարկավագ է ձեռնադրվել:

Հաջորդ տարիներին մասնակցել է Լոնդոնի համալսարանի «Շեներրել Սերտիֆիկեյտ օֆ էկզեմինեյշ»-ին և ստացել համապատասխան վկայական:

1957 թվականին ավարտել է ընծայարանի բաժինը փայլուն հաջողությամբ և կուսակրոն քահանա ձեռնադրվել՝ վերանվանվելով տ. Արիս աբեղա:

Կայուն և անհրաժեշտ կրոնական գիտելիքների տեր ու պատրաստված հոգևորական, սրբազանը ս. Աթոռում վարել է պատասխանատու պաշտոններ. նշանակվել է Ժառանգավորաց վարժարանի փոխ-տեսուչ, գավազանակիր և ապա 1958—1960 թվականներին պաշտոնավարել որպես հոգևոր տեսուչ Ամմանի հայոց:

1960 թվականին տ. Արիս սրբազանը մեկնել է Լոնդոն՝ կատարելագործելու իր ուսումը: 1964-ին ավարտել է Լոնդոնի Տարհրմի աստվածաբանական ֆակուլտետը պատվո հիշատակությամբ և ստացել աստ-

վածաբանության «Պսակավոր արվեստից» աստիճան:

Այնուհետև տ. Արիս սրբազանը հովվական պաշտոն է վարել Փարիզում, ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում, և միաժամա-

նակ հետևել «Էնստիտյու կաթոլիկ» համալսարանի դասընթացներին: 1966 թվականի հոկտեմբերին մեկնել է Լոս-Անջելոս՝ որպես հոգևոր հովիվ տեղի հայոց ս. Հակոբ եկեղեցու:

Կալիֆոռնիայի թեմում ծառայելիս տ. Արիս սրբազանը ծավալել է քարոզչական, հովվական բեղուն գործունեություն և ընտրվել թեմական խորհրդի անդամ և ատենապետ:

1972 թվականին Վեհափառ Հայրապետի կողմից հրավիրվել է աշխատանքի Մայր Աթոռ՝ որպես հոգևոր ճեմարանի փոխ-տեսուչ:

1973—1974 ուսումնական տարում տ. Արիս սրբազանը վարել է հոգևոր ճեմարանի տեսչի պաշտոնը:

1974 թվականի սեպտեմբերի 29-ին Վեհափառ Հայրապետի կողմից տ. Արիս ծ. վարդապետը եպիսկոպոս է ձեռնադրվել և նշանակվել Կանադայի հայոց առաջնորդական փոխանորդ:

Տ. Արիս սրբազանը մեր եկեղեցու պատրաստված, խոստումնալից հոգևորականներից մեկն է, որ յուրովսանն ծառայել է հայ եկեղեցուն, ուր որ տարել է նրան կոչումի ձայնը և հոգևոր ծառայության գիտակցությունը:

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆ

Նորապսակ տ. Ներսես եպս. Պոզապալյանը, ավագանի անունով՝ Հակոբ, ծնվել է 1937 թվականի հուլիսի 5-ին Գըրրգ իսանում (Կիլիկիա), արհեստավորի ընտանիքում:

1939 թվականին ընտանիքով գաղթել է և հաստատվել Բեյրութում, ուր ստացել է իր նախնական կրթությունը, տեղի հայկական Նուպարյան վարժարանում:

1951 թվականին ընդունվել է Անթիլիասի Դպրեվանքը, ուր սովորել է և մնացել մինչև 1955 թվականի հունիս ամիսը:

1955—1957 թվականներին սովորել է Էշրեֆիե թաղամասում գտնվող Կենտրոնական վարժարանում:

1957 թվականի սեպտեմբերին ծնողների հետ ներգաղթել է հայրենիք և բնակություն հաստատել Երևանում:

Տ. Ներսես սրբազանն ապրելով բարեպաշտ և հոգեսեր ընտանեկան հարկի տակ, մանկությունից իր մեջ զգացել է խորունկ սեր դեպի հոգևորական ասպարեզը և Աստուծո սեղանին ծառայելու կոչումը: Այդ նրպատակով էլ, հայրենիք ներգաղթելուց հետո, 1957 թվականին ընդունվել է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան, որի լսարանական բաժինը փայլուն հաջողությամբ ավարտելով, 1960 թվականին սարկավագ, իսկ 1961 թվականին Վեհափառ Հայրապետի ձեռքով կուսակրոն քահանա է ձեռնադրվել վերանվանվելով տ. Ներսես աբեղա: Որպես հմուտ եկեղեցական երաժշտության և արարողության, սույն թվականին էլ նշանակվել է Մայր տաճարի լուսարարապետի օգնական, միաժամանակ գավազանակիր Հայոց Հայրապետի և դասախոս հոգևոր ճեմարանում:

Տ. Ներսես սրբազանն իր կրոնական, եկեղեցագիտական կրթությունը խորացնելու համար 1963—1965 թվականներին սովորել է Լոնդոնի «Հարության կոլեջ»-ի աստվածաբանական ֆակուլտետում և, անգլիկան եկեղեցու մասին գրած իր թեզով, ստացել «Լամբեթի աստվածաբանության» տիտղոս:

Այնուհետև վերադառնալով Մայր Աթոռ, 1965—1969 ուսումնական տարիներին պատասխանատվությամբ և արդյունավորությամբ վարել է հոգևոր ճեմարանի տեսչի պաշտոնը:

1969 թվականին կոչվել է Շվեյցարիայի հայոց հոգևոր հովվության պաշտոնին, ուր մնացել է մինչև 1971 թվականը:

Շվեյցարիա գտնված ժամանակ, 1969—1970 թվականներին, կատարելագործել է իր ուսումը Ժենևի էկումենիկ ինստիտուտում:

1972 թվականից մինչև 1974 թվականի հունիս ամիսը եղել է հոգևոր հովիվ Լոնդոնի հայոց ս. Սարգիս եկեղեցու:

1974 թվականի նույն ամսին ընտրվել է Լոնդոնի հայոց հոգևոր տեսուչ և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով նշանակվել հայրապետական պատվիրակ Մեծ Բրիտանիայի և հայ եկեղեցու ներկայացուցիչ Քենտրբերիի և համայն Անգլիայի արքեպիսկոպոսի մոտ:

Տ. Ներսես եպիսկոպոսը 1968 թվականից Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի անդամ է:

1970 թվականին ընտրվել է Աստվածաշնչային համաշխարհային ընկերության Եվրոպայի բաժնի գործադիր կոմիտեի անդամ:

Տ. Ներսես եպս. Պոզապալյանը գտնվում է իր հոգևոր ու մտավոր ուժերի ծաղկման հասուն շրջանում, իր կոչման բարձրության վրա:

1974 թվականի սեպտեմբերի 29-ին տ. Ներսես ծ. վարդապետն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ձեռքով Մայր տաճարում եպիսկոպոս է ձեռնադրվել՝ որպես հոգևոր տեսուչ և հայրապետական պատվիրակ Անգլիայի հայոց:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորապսակ տ. Հմայակ, տ. Արիս և տ. Ներսես սրբազաններին՝ մաղթելով նրանց հետագա հաջողություններ, իրենց հոգևոր-ազգային գործունեության ճանապարհի վրա:

ՅՈԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳԱՄՅԱԿ ՊՐՈՖ. ՍԱՐԳԻՍ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻ

Լրացավ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, արվեստագիտության դոկտոր, Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, թատերագետ և մանկավարժ, գրող ու հրապարակագիր պրոֆ. Սարգիս Մելիքսեթյանի ծննդյան յոթանասունհինգամյակը:

Հոբելյարը ծնվել է 1899 թվականի սեպտեմբերի 5-ին Գանձակում (այժմ՝ Կիրովաբադ):

Երիտասարդ հասակից զբաղվել է հայ բեմարվեստի հարցերով և ունեցել մեծ սեր դեպի թատրոնը: Տասնութ տարեկան հասակում Թիֆլիսում հույնիսկ անձնապես մասնակցել է կազմակերպված ներկայացումների և արել գրական փորձեր:

1921 թվականին մի քանի հայ մտավորականների հետ նա առաջիններից մեկն է եղել, որ հաստատվել է Երևանում և այնուհետև իր ողջ կյանքը նվիրել հայ թատրոնի, հայ գիր ու գրականության, հայ մանկավարժության զարգացման շնորհակալ աշխատանքներին:

Երևանում Ս. Մելիքսեթյանը վարել է հայ մամուլի տարբեր օրգաններում պատասխանատու պաշտոններ:

1927 թվականին Հայաստանի արվեստի աշխատողների արհեստակցական միության համագումարում ընտրվում է հանրապետական վարչության նախագահ:

1930 թվականին աշխատանքի է հրավիրվում «Հայկինո»-ում որպես սցենարական բաժնի վարիչ և ապա որպես վարչության նախագահ-դիրեկտորի տեղակալ:

1936 թվականին երբ Երևանում կազմակերպվում է Արվեստի գործերի վարչություն, Ս. Մելիքսեթյանը նշանակվում է թատերական բաժնի վարիչ:

Հոբելյարն ակտիվ մասնակցություն է ունենում նաև Երևանի թատերական թանգարանի ստեղծման գործում, որտեղ նա,

որպես տնօրեն, աշխատում է անընդմեջ տասնչորս տարի:

1944 թվականին երբ հիմնադրվում է Երևանի թատերական արվեստի ինստիտուտը, հոբելյարը լինում է բարձրագույն նոթական այդ հաստատության և՛ դասախոս, և՛ թատերագիտական ֆակուլտետի առաջին դեկանն ու ապա նույն ֆակուլտետի ամբիոնի վարիչը:

Ս. Մելիքսեթյանը թատերական ինստիտուտում առաջինն էր, որ մշակում է հայ թատրոնի պատմության առարկան:

Հոբելյարը Հայաստանի թատերական ընկերության հիմնադիրներից մեկն է: Երկար տարիներ նա եղել է նաև Գ. Սունդուկյանի անվան Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր դրամատիկական թատրոնի գեղարվեստական խորհրդի անդամ:

Ս. Մելիքսեթյանի անունը կապվում է նաև, որպես ավագ գիտական աշխատող, Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի սեկտորի և ապա Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի աշխատանքների հետ՝ որպես դիրեկտոր:

Ս. Մելիքսեթյանի բարեխիղճ և հետևողական, կազմակերպչական աշխատանքների շնորհիվ այդ թանգարանն այժմ դրվել է ոչ միայն իր գիտական բարձր մակարդակի վրա, այլև այն հանդիսանում է հայ մշակույթի և մեր հոգևոր կյանքի կարևորագույն օջախներից մեկը: Ս. Մելիքսեթյանը թանգարանի արխիվային ֆոնդերը հարստացնելու համար սերտ կապ է պահպանում սփյուռքի զանազան մշակութային կենտրոնների, կազմակերպությունների և անհատների հետ:

Հոբելյարն իր վարչական, կազմակերպչական, մանկավարժական աշխատանքներին զուգահեռ զբաղվել է նաև գիտական ուսումնասիրություններով, եղել է բեղուն ստեղծագործող: Նրա գրչին են պատկանում հայ թատերական արվեստին և նրա անվանի գործիչներին նվիրված մի շարք գիտական, ծավալուն աշխատություններ և ուսումնասիրություններ ու մի քանի հարյուրի հասնող հոդվածներ:

Ս. Մելիքսեթյանի, որպես թատերագետի և թատերական քննադատի, երկար տարիների տքնաջան աշխատանքների, խորը գիտական եզրահանգումների, որոնող ու անհանգարտ մտքի, հոգեկան կորովի և նվիրումի ու ստեղծագործական լայն ընդգրկումների արգասիքն են նրա բեղմնավոր գրչին պատկանող «Հովհաննես Աբելյան», «Ուրվագիծ սովետահայ թատրոնի պատմության», «Գևորգ Չմշկյան», «Թատերական ակնարկներ», «Մեր թատրոնի ուղին», «Երևանի պետական թատրոնը», «Մտերմական Շիրվանզադեն», «Մեծ արվեստի ուժը», «Կյանք ու բեմ», «Շեքսպիրը և մերոնք» և այլ աշխատություններ, որոնք բազում կողմերով հարստացրել են հայ մշակույթի գանձարանը և լուսաբանել հեղինակությամբ, սկզբունքայնությամբ ու հաճախ արվեստագետի կրքոտությամբ հայ թատրոնի անցյալն ու ներկան:

Արդարև Ս. Մելիքսեթյանը իր գործով և գրչով հանդիսանում է հայ մշակույթի անխոնջ երախտավորներից մեկը:

Վերջին տասը տարիների ընթացքում Ս. Մելիքսեթյանի անունն ու աշխատանքը կապված է եղել նաև Մայր Աթոռում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գործունեության հետ:

1965 թվականին բազմավաստակ գիտնականը Հայոց Հայրապետի հրավերով իր փորձառությամբ և իր հարուստ գիտելիքներով շնորհակալ իր մասնակցությունն է բերել «Էջմիածին» ամսագրի հրատարակության աշխատանքներին՝ որպես խմբագրական մարմնի ժրաջան անդամ:

Այնուհետև 1969 թվականից, որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Ս. Մելիքսեթյանն իր օգտակար ծառայությունն է բերել նույնպես Հայոց Հայրապետի եկեղեցաշեն, հայրենանվեր ու խաղաղասիրական գործունեությանը:

Ս. Մելիքսեթյանը 1971 թվականին պաշտպանել է իր դոկտորական դիսերտացիան և արժանացել արվեստագիտության դոկտորի աստիճանի:

Հոբելյարն իր ետին ունի ավելի քան 50 տարիների բեղուն, ստեղծագործական, բազմակողմանի աշխատանք և ծառայություն: Այսօր էլ նա իր կյանքի 75-ամյակի սեմին տոգորված է երիտասարդական նույն եռանդով ու հոգեկան կորովով՝ շարունակելու իր սիրած գործը՝ ի փառս հայ մշակույթի և մեր վերածնված հայրենիքի ու ժողովրդի:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Հայոց Հայրապետի և Գերագույն հոգևոր խորհրդի, ջերմորեն շնորհավորում է հոբելյարին՝ իր ծննդյան 75-ամյակի առթիվ, և սրտագին բարեմաղթում նրան քաջառողջություն, երկար տարիներ՝ չպակասող եռանդով ու ստեղծագործական նոր հաջողություններով հարստացնելու համար հայ մշակույթի գանձարանը:



ՄԱՀ ՏԻՐԱՄՈՐ ՍԻՐԱՆՈՒՇ ՊԱԼՃՅԱՆԻ
(1884—1974)

Մայր որդուով բերկրեալ

Ոչ ևս է նա՝ բոլորից սիրված և հարգված Տիրամայրն ամենայն հայոց՝ Սիրանուշ Պալճյանը:

1974 թվականի հոկտեմբերի 7-ին, երկուշաբթի գիշեր, Վեհարանի իր բնակարանում, կարճատև հիվանդությունից հետո, 90 տարեկան հասակում, «ի Տէր հանգեաւ» մեր թանկագին Տիրամայրը:

Ծանր է. մանավանդ Հայոց Հայրապետի վիշտը:

Հանգուցյալ Տիրամայրը ծնվել է Ադրիանապոլսում, 1884 թվականին, Մարգարյան բարեպաշտ հայ արհեստավորի ընտանեկան հարկի տակ: Տիրամոր ծնողները եղել են բնիկ ռոտոսթոցիներ: Չորս տարեկան հասակում Տիրամայրը դժբախտությունն է ունենում կորցնելու իր մորը և փոխադրվում է Ռոտոսթո, իր մորաքրոջ մոտ, ուր մեծանում և դաստիարակվում է հայկական ավանդությունների ոգով:

Ռոտոսթոյում ստանալով իր նախնական կրթությունը, Տիրամայրը վաղ հասակից իր հոգում սրտագին կոչում է զգում նվիրվելու ուսուցչության: 1900 թվականին, դեռ մանկամարդ օրիորդ, նա Ռոտոսթոյում որպես ուսուցչուհի պաշտոնավարում է տեղի ս. Թագավոր թաղի Հովնանյան վարժարանում և ապա ս. Խաչ թաղի Հիսուսյան դպրոցում:

1907 թվականին Տիրամայրը հաստատվում է Բուխարեստ, ուր ամուսնանում է ռոտոսթոցի, արհեստով կոշկակար Աբրահամ Պալճյանի հետ: Այս երջանիկ ամուսնությունից էլ 1908 թվականի սեպտեմբերի 20-ին ծնվում է նորակազմ այդ ընտանիքի միակ զավակը՝ Լևոն-Կարապետը՝ Ամենայն Հայոց ապագա կաթողիկոսը:

Բուխարեստում Տիրամայրն առաջին իսկ օրից գործոն մասնակցություն է ունենում տեղի նորակազմ փոքրաթիվ հայ համայնքի կրթական, հասարակական, ազգային-մշակութային կյանքում: Տիրամոր և մի խումբ կրթասեր ռոտոսթոցի տիկինների ջանքերով 1909 թվականին Բուխարեստում բացվում է հայոց ազգային վարժարանը, որը հետագայում հանդիսանում է Բուխարեստի զարգացող ու կազմակերպվող հայկական համայնքի կրթական վառ օջախներից մեկը:

1914—1916 թվականներին Տիրամայրը, որպես Բուխարեստի Կարմիր խաչի վարչության ժրաջան անդամ, գործոն մասնակցություն է ունենում հայ կամավորական շարժման օգնություն կազմակերպելու հայրենանվեր գործում:

1916 թվականի ձմռանը ռոտոսթոցի բազում հայ ընտանիքների հետ միասին Պալճյան ընտանիքը նույնպես Բուխարեստին մոտեցող և թուրքերի դաշնակից գերմանական բանակների ստույգ վտանգի առաջ հեռանում է քաղաքից և, որպես գաղթական, հաստատվում Օդեսա քաղաքում, ուր մնում է մինչև 1919 թվականը: Օդեսայում էլ Տիրամայրը մասնակցում է գաղթական հայերի կրթական գործին: Նա պաշտոնավարում է գաղթական հայ մանուկների համար բացված հայկական վարժարանում, և ուր հաճախում է նաև Լևոն-Կարապետը:

Զինադադարից հետո Պալճյան ընտանիքը վերադառնում է դարձյալ Բուխարեստ:

1920—1930 թվականներին, առտնին իր աշխատանքներին զուգընթաց, Տիրամայրը նվիրվում է իր միամոր որդու դաստիարակության գործին՝ շարունակելով նաև իր մասնակցությունը բերել հայ համայնքի

կրթական, հասարակական կյանքին, աշխատակցելով միաժամանակ հայր Մկրտիչ Պոտուրյանի «Երկիր» շաբաթաթերթին:

1928—1930 թվականներին Տիրամայրը ստանձնում է նաև Բուխարեստում օտար վարժարաններ հաճախող հայ աշակերտների հայերեն լեզվի կիրակնօրյա դասավանդությունը, որը կազմակերպել էր Հայասվարժական, հասարակական և մանավանդ եկեղեցականներ բեղուն գործունեությամբ՝ հաջողություններով և փառքով:

1955 թվականից սկսած, տասնհինգ տարիներ շարունակ ս. Էջմիածնում Տիրամայրը վայելում է իր Վեհափառ Որդու փառքը, որպես Լուսավորչի Աթոռի գահակալի:

Որպես գիտակից ու կյանքի հարուստ

Տիրամայրը Վեհարանի իր աշխատասենյակում

տանի օգնության տեղական կոմիտեն:

1939 թվականի ապրիլին Տիրամայրը կորցնում է կյանքի իր հավատարիմ ընկերոջը՝ իր ամուսին Աբրահամ Պալճյանին:

Հակառակ անցյալում անցկացրած իր ծանր ու դժվարին տարիների, այնուամենայնիվ Տիրամայրը հանդիսանում է բախտավոր և երջանիկ մայր, ճշմարտապես «Մայր որդւով բերկրեալ»:

Ավելի քան երեսուն տարիներ նա մխիթարվում և ուրախանում է իր Որդու մանկափոքր ունեցող, հայրենասեր ու հավատավոր կին, Տիրամայրը Վեհարանի իր առանձնասենյակում նստած սրտով ու աչքերով հետևում է իր Վեհափառ Որդու հայրապետական գործունեությանը, մոտիկից հետաքրքրվում սփյուռքի մեր ազգային-եկեղեցական կյանքով և հաճախ ակնարկելով սփյուռքում եկեղեցական գետնի վրա տեղի ունեցող որոշ դժվարություններ, ասում էր. «Այս բոլորը Վեհափառի օրո՞վ պիտի պատահեր»:

Հանգուցյալ Տիրամայրն ուներ լայն գրական հետաքրքրություններ և նամակագրական սրտագին կապ էր պահում սփյուռքի զանազան կազմակերպությունների, անհատների, մամուլի և ծանոթ բարեկամների հետ: Սփյուռքում տիկնանց բազում կազմակերպությունների պատվո նախագահ էր:

Հոկտեմբերի 9-ին, չորեքշաբթի օրը, հանգուցյալ Տիրամոր հուղարկավորության և թաղման կարգը կատարվում է ս. Գայանե տաճարում և մարմինն ամփոփվում միաբանական գերեզմանատանը:

Հուղարկավորության թափորին և թաղման արարողությանը մասնակցում են տ. Կոմիտաս, տ. Թորգոմ արքեպիսկոպոսները, տ. Զգոն, տ. Հուսիկ, տ. Արսեն, տ. Նարեկ, տ. Հմայակ, տ. Արիս եպիսկոպոսները, Մայր Աթոռի ողջ միաբանությունը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Դամասկոսի թեմի առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը, տ. Իսահակ ծ. վրդ. Ղազարյանը՝ ԱՄՆ-ից, մայրավանքի պաշտոնեությունն ու աշխատավորությունը, հոգեվոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը և սգակիր մի հոծ բազմություն, որը եկել էր իր վերջին հարգանքը մատուցելու ողբացյալ Տիրամոր օրհնյալ հիշատակին:

Հուղարկավորության թափորին և Տիրամոր դագաղին անմիջապես հետևում էր Վեհափառ Հայրապետը որպես սգակիր:

Ժամը 11-ին ս. Գայանե տաճարում լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը մատուցում է հոգեհանգստյան պատարագ՝ ի ներկայության հոծ բազմության:

Ժամը 16-ին, դարձյալ ս. Գայանե տաճարում, կատարվում է հանդիսավոր հոգեհանգստյան պաշտոն՝ ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Տիրան արքեպիսկոպոսի նախագահությամբ:

Արարողության ավարտին տ. Տիրան արքեպիսկոպոսը դամբանական է խոսում «Օրհնյալ ես դու ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո» (Ղուկ. Ա 42) բնաբանով:

Դամբանական իր խոսքում տ. Տիրան արքեպիսկոպոսը վեր է հանում հանգուցյալ Տիրամոր կյանքի ուսանելի գծերը, որպես հայ կին, դաստիարակ, ուսուցիչ և, մանավանդ, որպես մայր Հայոց Հայրապետի, և մխիթարական ջերմ խոսքերով սփոփում Վեհափառ Հայրապետի մեծ վիշտը:

Այնուհետև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանն իր և Խորհրդի անունից վշտակցություն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ Տիրամոր մահվան տխուր առիթով, և ընթերցում Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ պրն. Գրիգոր Արզումանյանի հետևյալ ցավակցական հեռագիրը.

«Մայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց Վազգեն Ա-ին

Ընդունեցեք, խնդրեմ, իմ խորին ցավակցությունը Ձեր սիրելի մոր՝ Սիրանույշ Պալճյանի մահվան առթիվ:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Գրիգոր Արզումանյան»

Ապա դագաղն ուսամբարձ դուրս է բերվում տաճարից:

Հանգուցյալ Տիրամոր աճյունն ամփոփվում է ս. Գայանե տաճարի հյուսիս-արևելյան մասում, միաբանական գերեզմանատանը:

Թաղման արարողությունից հետո Վեհարանում Հայոց Հայրապետն ընդունում է ողջ հոգևորականության, պաշտոնեության, հնչակեան նաև պաշտոնական անձնավորությունների ու մայրաքաղաքի մտավորականության, գիտության և արվեստի անվանի գործիչների ցավակցությունները:

Տիրամոր մահվան տխուր առիթով ստացվել էին նաև բազում ցավակցական հեռագրեր մայր հայրենիքից, եղբայրական հանրապետություններից, սփյուռքից, հայ և օտար պաշտոնական շրջանակներից, քույր եկեղեցիների հոգևոր պետերից, կազմակերպություններից:

Ժամը 20-ին վանական սեղանատանը տրվում է հոգեճաշ միաբանության անդամներին՝ Վեհափառ Հայրապետի մասնակցությամբ:

Հոկտեմբերի 12-ին, շաբաթ օրը, ժամը 15-ին, դարձյալ նույն տեղում, հոգեճաշ է տրվում Մայր Աթոռի պաշտոնեությանը և աշխատավորությանը:

Հոգեճաշին ներկա է լինում նաև Վեհափառ Հայրապետը:

Ոչ ևս է նա՝ մեր թանկագին ու սիրեցյալ Տիրամայրը, բայց նրա քաղցր անունն ու բարի հիշատակը միշտ վառ ու կենդանի կմնան Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության և նրա հեռու թե մոտ բոլոր ծանոթների սրտերում:

Թող Տերը լուսավորի նրա արդար հոգին և արժանացնի անթառամ իր փառքին, երկնի արքայության մեջ:

Հայրենի հողը թեթև վրադ, մեր սիրելի, մեր թանկագին, մեր անմոռանալի Տիրամայր, ճշմարիտ «Մայր որդւով բերկրեալ»:

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Ա. ՀԱՏԻՏՑԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 1-ին, երեքշաբթի.—Այսօր առավոտյան ժամը 11-ին, Հայոց Հայրապետին է այցելում, Հոդդինգ Քարտերի ղեկավարությամբ, Ամերիկայի տարբեր թերթերի 12 հոգուց բաղկացած ժուռնալիստների պատգամավորությունը, որը հյուրաբար գտնվում էր Երևանում:

Վեհարանում Հայոց Հայրապետի և հարգելի հյուրերի միջև տեղի է ունենում շահեկան զրույց: Վերջում լրագրողներն աջահամբույրով ստանում են Հայոց Հայրապետի օրհնությունը:

* * *

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում լոնդոնահայ եկեղեցական և համայնքային վարչության անդամ պրն. Արմանդ Քեշիշյանը և պատգամավորներ պրնք. Կուրտիկյանն ու Գրիգոր Փափազյանը, որոնք Մայր տաճարում իրենց աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, Վեհարանում ստանում են Հայոց Հայրապետի օրհնությունը:

* * *

Նույն օրը դարձյալ ուխտավորաբար Մայր Աթոռ են այցելում թեյրութաբնակ տեր և տիկին Գևորգ և Մարի Կարմիրյանները և ծանոթ հասարակական գործիչ պրն. Տաճատ Սրապյանը:

Ուխտավորները, Մայր տաճարում իրենց աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, Վեհարանում աջահամբույրով ստանում են Հայոց Հայրապետի օրհնությունը:

* * *

Հոկտեմբերի 8-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր տաճարում իր եպիսկոպոսական անդրանիկ պատարագն է մատուցում նորապսակ տ. Ներսես եպս. Պոզապալյանը:

* * *

Նույն օրը Մայր Աթոռ է այցելում ս. Մայքըլ Մաունդ եկեղեցու տնօրեն Չարլզ Ռոչը:

* * *

Հոկտեմբերի 5-ին, շաբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում լոնդոնահայ 17 ուխտավորներ՝ գլխավորությամբ պրն. Հարությունն Ասատրյանի:

Մայր տաճարում իրենց ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, Վեհարանում ընդունվում են Հայոց Հայրապետի կողմից և արժանանում Նրա հայրական օրհնությանը:

* * *

Հոկտեմբերի 6-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում իր եպիսկոպոսական անդրանիկ պատարագն է մատու-

ցում Նորապսակ տ. Արիս եպս. Շիրվանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռասցի զիս աջ իմ: Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ՝ թէ ոչ յիշեցից զքեզ, թէ ոչ նախ նուագեցից զքեզ, Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ» (Սղմ. ՃԼԶ 5—6) բնաբանով:

Ս. պատարագին ներկա են լինում շուրջ 20 արգենտինահայ և 25 ամերիկահայ ուխտավորներ:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է ուխտավորներին՝ տալով Իր օրհնությունը ու պատգամը:

* * *

Նույն օրը Վեհափառ Հայրապետին է այցելում ծանոթ հասարակական գործիչ պրն. Տիգրան Մյուրաքյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ (Արգենտինայից):

* * *

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի է ունենում հետաքրքիր համերգ՝ հայ երիտասարդ ճարտարապետներից բաղկացած ինքնուս նվագախմբի կատարմամբ՝ ղեկավարությամբ Արտաշես Մեստճյանի:

Նվագախումբը կատարում է Եղեռնի հիշատակին նվիրված երաժշտական մի հոյակապ ձոն:

* * *

Հոկտեմբերի 7-ին, երկուշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում ԱՄՆ-ի արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը և տ. Տիրան արքեպ. Ներսոյանը, որոնք Մայր տաճարում իրենց աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, Վեհարանում ջերմ զրույց են ունենում Հայոց Հայրապետի հետ:

* * *

Հոկտեմբերի 13-ին, կիրակի.—Ե կիրակի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում իր եպիսկոպոսական անդրանիկ պատարագն է մատուցում Նորապսակ տ. Հմայակ եպս. Ինդոյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստս անեղին, հաստատելով յերկրի զգիր կենդանի, հովուել զհօտ նոր Իսրայելի» (Շարական) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հոկտեմբերի 14-ին, երկուշաբթի.—Այսօր առավոտյան շուրջ 40 արգենտինահայ ուխտավորներ, գլխավորությամբ պրն. Ննգիկ Այնեճյանի, այցելում են Մայր տաճար, ուր կատարում են իրենց աղոթքն ու ուխտը:

Այնուհետև բարեպաշտ ուխտավորներին Վեհարանում բարեհաճում է ընդունել Հայոց Հայրապետը՝ արժանացնելով Իր օրհնությանը:

* * *

Հոկտեմբերի 15-ին, երեքշաբթի.—Այսօր իր պաշտոնատեղին՝ Նյու-Յորք է մեկնում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը:

* * *

Նույն օրը, առավոտյան, պրն. Գրիգոր Տեր-Գրիգորյանի գլխավորությամբ, որպես ուխտավոր Մայր տաճար են այցելում շուրջ 35 կանադահայեր և իրենց աղոթքն ու ուխտը կատարում:

Այնուհետև Վեհարանում աջահամբույրով ստանում են Հայոց Հայրապետի օրհնությունը:

* * *

Հոկտեմբերի 20-ին, կիրակի.—Զ կիրակի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Իսահակ ծ. վրդ. Ղազարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Նույն օրը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Մայր Աթոռ է ժամանում Լենինականի ս. Աստվածածին եկեղեցու քառաձայն նորակազմ երգչախումբը՝ Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Շաքարյանի առաջնորդությամբ:

Երգչախումբը Մայր տաճարում կատարում է ս. պատարագի երգեցողությունը ըստ Մ. Եկմալյանի՝ տ. Արամ ավագ քհն. Բոյաջյանի ղեկավարությամբ:

Հավարտ ս. պատարագի երգչախմբի անդամներին բարեհաճում է ընդունել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և տալ նրանց Իր օրհնությունը:

Ժամը 14.30-ին երգչախմբի անդամները հրավիրվում են ճաշի միաբանական սեղանատանը, ուր ջերմ ընդունելության համար Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հասցեին շնորհակալական խոսք է ասում թեմական առաջնորդ տ. Նարեկ եպս. Շաքարյանը:

Այնուհետև երգչախմբին ուղղված օրհնության և քաջալերանքի խոսք է ասում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ վեր հանելով աղոթքի ոգին երգչախմբի երգեցողության մեջ:

Երգչախումբը, ի պատասխան բաժակաճառերի, ապրումով կատարում է մի շարք հայրենասիրական երգեր:

Ճաշկերույթն ավարտվում է լուսարարապետ սրբազան հոր գոհաբանական աղոթքով:

* * *

Հոկտեմբերի 21-ին, երկուշաբթի.—Այսօր իր պաշտոնատեղին՝ Միլան է մեկնում մոտ երկու ամիս ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող իտալահայ համայնքի հոգևոր նոսիվ տ. Զգոն եպս. Տեր-Հակոբյանը:

* * *

Հոկտեմբերի 22-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանում, հայրապետական վիլլայում, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

Ժողովին ներկա է լինում նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Տիրան արքեպ. Ներսոյանը: Վեհափառ Հայրապետը հատենի ժողովի ողջունում է ներկայությունը տ. Տիրան արքեպիսկոպոսի և բարի գալուստ մաղթում նրան:

Տ. Տիրան արքեպիսկոպոսը շնորհակալություն է հայտնում Հայոց Հայրապետին՝ իրեն տրված այս առիթի համար:

Լենինականի ս. Աստվածածին եկեղեցու երգեցիկ խումբը թեմական առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոսի հետ

* * *

Հոկտեմբերի 27-ին, կիրակի.—Է կիրակի գկնի ս. Խաչի. Գիտ Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Եզնիկ աբդ. Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ հոգեշունչ քարոզ է խոսում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ վեր հանելով օրվա տոնի հիշատակի կարևորությունը:

Ս. պատարագին ներկա են լինում հյուրաբար Երևանում գտնվող մի խումբ ֆրանսիացի վաստականներ:

*
* *

Գերագույն հոգևոր խորհուրդն իր հոկտեմբեր 22 նիստում արձանագրեց Մայր Աթոռի նախկին միաբան տ. Մուշեղ վրդ. Պետիկյանի սեպտեմբեր 2 թվակիր հրաժարականը հոգևոր կոչումից և խնդրեց Վեհափառ Հայրապետին՝ նրան կարգազուրկ հայտարարել:

Ամենայն Հայոց կաթողիկոսը, հարգելով Գերագույն հոգևոր խորհրդի առաջարկությունը, հայրապետական իր վճռով կարգալույծ արեց նախկին տ. Մուշեղ վրդ. Պետիկյանին՝ դասելով նրան ի շարս աշխարհականաց՝ Պերճ Պետիկյան ավազանի իր անունով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

25-ը հոկտեմբերի 1974 թ.,
Ս. Էջմիածին

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 26-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԲԵՌԼԻՆՈՒՄ

Սույն թվականի օգոստոսի 10—18 օրերին Արևմտյան Բեռլինում տեղի ունեցավ Ե. Հ. Խ.-ի Կենտրոնական կոմիտեի 26-րդ գումարումը՝ մասնակցությամբ Կենտրոնական կոմիտեի ավելի քան 120 անդամների, պատգամավորների, երիտասարդ խորհրդականների, դիտորդների, հյուրերի և Ե. Հ. Խ.-ի պատասխանատու պաշտոնյաների, ընդամենը՝ շուրջ 500 հոգի:

Օգոստոսի 10-ին, կիրակի առավոտյան, «Քայզեր Վիլհելմ» Մայր եկեղեցում հավաքական աղոթքով կատարվեց ժողովի բացման արարողությունը: Տեղական եկեղեցիների անունից Արևմտյան Բեռլինի եպիսկոպոս դոկտ. Կուրտ Շարֆը ժողովի մասնակիցներին բարիգալստյան խոսք ուղղեց: Հանդիսավոր արարողության ընթացքում, ժողովի բացման առթիվ, քարոզեց ռուս եկեղեցու Եվրոպայի էկզարխ միտրոպոլիտ Անտոնի Պլում արքեպիսկոպոսը: Նա իր քարոզում նշեց, որ Ե. Հ. Խ.-ի անդամ եկեղեցիների միջև միության խարիսխը մեր Տերն է՝ Հիսուս Քրիստոսը, որն իր անմեղ արյունը թափել է մարդկության ազատագրման համար:

Նույն օրը, հետմիջօրեի, ժամը 14.30-ին, Բեռլինի «Կոնգրես հոլ» սրահում պաշտոնապես բացումը կատարվեց Ե. Հ. Խ.-ի Կենտրոնական կոմիտեի 26-րդ նստաշրջանի: Այս առթիվ Արևմտյան Բեռլինի պետական իշխանությանց անունից հանդես եկավ սենատոր դոկտ. Վեռներ Շթայնը՝ ողջունելով բոլոր ներկաներին:

Ողջույնի և բարեմաղթության խոսքերից հետո Կենտրոնական կոմիտեի ժողովի ծրագիրը հաստատվեց, ապա հաշվետու զեկուցումով հանդես եկավ Կենտրոնական կոմիտեի գործադիր մարմնի ատենապետ դոկտ. Մ. Մ. Թոմասը:

Իր զեկուցման մեջ հնդիկ աստվածաբանն ասաց, որ Ե. Հ. Խ.-ը խարսխված է Հիսուս Քրիստոսի անձի վրա: Այս նշանակում է, որ եկեղեցին Ավետարանի վկան է ողջ աշխարհում և բոլոր այլ կրոնների գաղափարախոսությունների և հոգևոր ուսուցումների մեջ:

Դոկտ. Թոմասն իր վերոհիշյալ խոսքերը ընդգծում էր՝ ասելով, որ ավետարանական վկայությունը պետք է մտահոգությունը լինի հանուր քրիստոնյա մարդկության, «Ամենակարևոր մտահոգություններից մեկը ներկայի մարդկության այն է, թե արդյոք կարո՞ղ են մարդիկ իրենց ազատությունը հասցնել բնության ուժերի սանձահարմանը, պայքարել ընկերային անարդարությունների դեմ, դիմագրավել մարդկության ապագայի դժվարությունները՝ ունենալով այն հաստատուն հավատքը, որ մարդկային հասարակության միությունը կարող է իրականանալ միայն այս ձևով»:

Դոկտ. Թոմասն իր զեկուցման մեջ նշեց նաև, որ մարդկային պատմությունը հիմնականում ազատագրության և միության դիալեկտիկա է: Արդի ժամանակների պատմությունը կարող է բնորոշվել երեք հատկանիշներով. առաջինը՝ մարդու ազատագրումն է բնության տիրապետությունից և մարդու տիրապետումը բնության վրա՝

տեխնոլոգիայի միջոցով. երկրորդը՝ մարդու ազատագրումը հասարակությանը շահագործող ու տիրապետող ուժերից, երրորդը՝ մարդու ազատագրումը ընկերային-բարոյական քարացած դոգմաներից և վերագտնումը իր ստեղծագործ և շինարար ուժերի:

Հաջորդ զեկուցումը կարդաց Ե. Հ. Խ.-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթրը: Ամփոփելով Ե. Հ. Խ.-ի անցած վեց տարիների գործունեությունը, նա ասաց, որ Ե. Հ. Խ.-ն, որպես գործունեության ուղի, աշխատել է ընտրել «հավատքի, հույսի և սիրո ճանապարհը»: Դոկտ. Փոթրը իր խոսքերը շեշտեց՝ ասելով. «Մենք միշտ ջանացել ենք, որ մեր ծրագրերը, մեր գործունեությունը և մեր կյանքի շեշտը լինեն այժմեական՝ պատասխանելու համար արդի ժամանակների բոլոր պահանջներին: Մեր ամբողջ ուժը, հավատքը և հնազանդությունը ծառայեցրել ենք այս նպատակին: Հավանաբար մենք շատ բան չենք նվաճել, բայց մեր այս ճանապարհով ջանացել ենք միշտ ներկա լինել և մասնակիցը դառնալ մարդկության փորձություններին՝ աշխատելով փնտրել և գտնել այս աշխարհում Աստուծո իսկական նպատակը»:

Դոկտ. Փոթրը այնուհետև թվարկեց այն աշխատանքները, որոնց Ե. Հ. Խ.-ի տարբեր հանձնաժողովները ձեռնարկել են վերջին վեց տարիների ընթացքում: Դրանցից են «Հավատը և կարգի», «Փրկությունն այսօր», «Առաքելություն և ավետարանչություն» և մի շարք ուրիշ հանձնաժողովների կողմից կատարված աշխատանքները տարբեր բնագավառներում:

1968 թ. Ուփսալայի Դ համագումարից սկսած կազմվել են նաև «Պայքար ցեղասպանության դեմ» և կրթական ու վերանորոգչական-քարոզչական այլ հանձնախմբեր: Վերոհիշյալ այս հանձնախմբերի մշակած ծրագրերի և գործունեության շնորհիվ, նշեց դոկտ. Փոթրը, մեր կազմակերպությունը հիմնական քննության ենթարկվեց, և ամեն տեսակի տարաձայնություններ բացահայտվեցին: Այս տարաձայնություններից շատերն արդեն սկսել են բյուրեղանալ:

Կենտրոնական կոմիտեի անդամները մասնավոր ուշադրությամբ լսեցին դոկտ. Լուկաս Վիշերի զեկուցագիրը՝ եկեղեցիների միության վերաբերյալ, ուր զեկուցողը առաջ էր քաշում մի շարք այժմեական և կարևոր խնդիրներ:

Դոկտ. Վիշերը, անդրադառնալով եկեղեցիների միության համար թափվող ջանքերին, ասաց, որ Վատիկանի Բ ժողովից անցել է մոտ 10 տարի, և այդ ժամանակաշրջանում կաթողիկե, ուղղափառ և բողոքական եկեղեցիների փոխհարաբերությունները գընալով զարգացել են ու ամրապնդվել: Այն պատնեշները, որոնք կարծես հավիտենապես կոչված էին արգելելու փոխադարձ հարաբերությունների զարգացումը, չքացել են: Այնուամենայնիվ, սակայն, տեսանելի միությունը առայժմ մնում է անհասանելի:

Հիմնական, «եկեղեցական» խնդիրն է՝ ի՞նչ կերպով Քրիստոսի եկեղեցին պիտի կարողանա նվաճել համամարդկային եղբայրությունը: Այս հարցը այժմ քննարկվում է թե՛ կաթողիկե եկեղեցում և թե՛ Ե. Հ. Խ.-ի զանազան անդամ եկեղեցիներում: Դոկտ. Վիշերը հույս հայտնեց, որ Ե. Հ. Խ.-ն առանձին մի ժողովով այս քննարկումների արդյունքները պիտի կարողանա ի մի բերել: Մինչ այդ, սակայն, Ե. Հ. Խ.-ն պիտի շարունակի իր դռները լայնորեն բաց պահել կաթողիկե եկեղեցու առջև, նույնիսկ եթե այն լինի «որոշ հակասությունների և բարդությունների» գնով: Դոկտ. Վիշերն ավելացրեց, որ Ե. Հ. Խ.-ն պետք է միշտ պատրաստ լինի քննարկելու այն բոլոր հարցերը, որոնք առաջադրվել են կաթողիկե եկեղեցու կողմից: Միայն նման լայնախոհ ոգով պիտի բացատրվի «էկումենիկ շարժման միութենական» նպատակը, որի մասին բացահայտ արտահայտություններ արվեցին Ուփսալայի Դ համագումարում:

Դոկտ. Վիշերը լավատես է Ե. Հ. Խ.-ի Ե համագումարի նկատմամբ, որի կարևոր թեմաներից մեկն է լինելու «Խոստովանել Քրիստոսին այսօր»: Ոչ մեկ նախորդող համագումար ուղղակիորեն չի զբաղվել այս վկայության խնդրով, և այն փաստը, որ տվյալ խնդիրը լայնորեն քննարկվելու է առաջիկա համագումարում, անսահման հնարավորություններ է բովանդակում:

Ժողովի հաջորդ օրերին զեկուցումներով հանդես եկան ժողովի մի շարք մասնակիցներ:

Ա. Ե. Հ. Խ.-ի տնտեսական գործերի վարիչ լորդ Մարչն իր զեկուցման մեջ անդրադարձավ արդի կյանքի նոր և դժվարին պայմաններին՝ նկատի ունենալով մի շարք կարևոր երկրներում փողի արժեզրկումը: Արդյոք ի՞նչ միջոցներով հնարավոր է այսպիսի պայմաններում կայունացնել և ապահովել Ե. Հ. Խ.-ի տնտեսական պահանջները:

Բ. Դոկտ. տիկ. Միտը «Մարդու ապագան» խորագրով իր ճառում անդրադարձավ մարդկությանը մտահոգող ներկա կյանքի զանազան խնդիրներին: Հատկապես անդրադառնալով շրջակա միջավայրի աղտոտմանը և մարդկության արագ աճին, նա շեշտեց միջավայրի աղտոտման պատճառով մարդու կյանքի տարիների նվազ-

ման խնդրի կարևորությունը: Հարգելի զեկուցողը զանազան առաջարկություններ արեց՝ շեշտելով, որ մարդկությունը և բոլոր պետություններն այժմվանից պետք է նախատեսեն ապագայի բարդությունները:

Գ. Հոգեշնորհ Դավիթ Ջենքինգը՝ վարիչը «Հումանում» ուսումնասիրությանց բաժնի, իր զեկուցման մեջ ասաց, որ «միլիոնավոր մարդկանց տառապանքով ամբողջ աշխարհում եկեղեցին Աստուծո մարդեղության և փառավորության վկան է, և այս է եկեղեցին մարդկայնության առաջնորդող առաքելությունը, սրանում է արտահայտվում նրա մասնակցությունը Աստուծո գործին՝ մարդեղությանը: Ի՞նչ է «Հումանում»-ի ուսումնասիրությունը. այս հարցին անգլիական աստվածաբանը պատասխանում է հետևյալ նախադասությամբ. «Մարդու տառապանքը, Աստուծո փառավորումը և եկեղեցու զղջումը»:

Ժողովի ընթացքում առանձին հանձնախմբերի կողմից քննարկման առարկա դարձան վերոհիշյալ բոլոր զեկուցումները, նաև արդի կյանքի քաղաքական-ընկերային, ցեղային և հասարակական մի շարք այժմեական խնդիրներ: Ժողովն իր հատուկ որոշումներն արձանագրեց հետևյալ քաղաքական հարցերի վերաբերյալ.

1. Մերձավոր Արևելքի շարունակվող տագնապի քննարկումից հետո ժողովը հատկապես անդրադարձավ Կիպրոսի ներկա տագնապին: Ժողովի անունից Կիպրոսի նախագահ Մակարիոս արքեպիսկոպոսին հղվեց հատուկ մի նամակ՝ հավաստիացնելով նրան, որ Ե. Հ. Խ.-ն իր կենտրոնով ամեն ջանք ի գործ է դնելու՝ Ե. Հ. Խ-ի անդամ կիպրական եկեղեցուն իր օժանդակությունը բերելու և Կիպրոս կղզու վրա խաղաղությունը վերահաստատելու համար:

2. Ժողովը առանձին ուշադրությամբ քննարկեց ցեղային խտրականության հարցը: Կենտրոնական կոմիտեի անդամները քվեարկեցին այն բանի օգտին, որ ցեղային խտրականության վերացման նպատակի համար կատարվող նյութական նպաստը շարունակական լինի: Չորս տարիներից ի վեր Ե. Հ. Խ.-ն տարին ավելի քան 200.000 դոլլար է տրամադրել այս նպատակի համար:

3. Երուսաղեմի հարցը ժողովի այժմեական հարցերից մեկն էր: Նկատի ունենալով, որ Երուսաղեմում դարավոր իրավունքներ վայելող հայ և հույն ուղղափառ եկեղեցիները, որոնք անդամ են Ե. Հ. Խ.-ին և որոնք անուղղակի կերպով ենթարկվել են ճնշումի, որի նպատակն է սահմանափակումը իրենց իրավունքների, Ե. Հ. Խ.-ն որոշում կայացրեց պաշտպան կանգնել իրեն անդամ հայ և հույն եկեղեցիներին առ որ անկ է:

4. Կենտրոնական կոմիտեի անդամները համաձայնության եկան, որ Ե. Հ. Խ.-ի Ե համագումարը առաջիկա տարի տեղի ունենա աֆրիկյան ցամաքամասում, Քենիայի մայրաքաղաք Նայրոբիում:

5-րդ համագումարի նշանաբանն է՝ «Հիսուս Քրիստոս ազատագրում է և միացնում»: Համագումարի նախապատրաստական աշխատանքներն արդեն կատարվում են առանձին մի հանձնախմբի միջոցով:

5. Ե. Հ. Խ.-ին նոր անդամագրված եկեղեցիներ:

Կենտրոնական կոմիտեի դռնփակ նիստում առաջարկություններ արվեցին Ե. Հ. Խ.-ի կազմում, որպես նոր անդամ, զանազան ցամաքամասերի մի շարք եկեղեցիներ ընդգրկելու վերաբերյալ: Գրեթե միաձայնությամբ Ե. Հ. Խ.-ին անդամագրվեցին հետևյալ եկեղեցիները.

ա. Ինդոնեզիայի Հուրիա Քրիստոնը եկեղեցին, որն ունի 243.000 անդամ, 500 ուսուցիչ և քարոզիչ, 65 հովիվ և 481 համայնք:

բ. Ալժիրի բողոքական եկեղեցին, որն ունի 300 անդամ, 4 հովիվ և 5 աղոթավայր: Ալժիրում ոչ կաթողիկե ուրիշ մեծ եկեղեցի գոյություն չունենալու պատճառով և Ե. Հ. Խ.-ի հետ հաղորդակցելու անհրաժեշտությունից մղված այս փոքր եկեղեցին դիմել էր «գործակից» անդամ դառնալու խնդրանքով:

գ. Ինդոնեզիայի Սանկիր տալող եկեղեցին, որն ունի 183.399 անդամ, 90 հովիվ և 189 քարոզիչ:

դ. ԱՄՆ, ազգային կոմիտեի համայնքային եկեղեցիներ, որոնք ունեն 125.000 անդամ և 185 համայնք: Անդամների կեսը սեվամորթներ են:

8. Չորեքշաբթի օրը, օգոստոսի 14-ի երեկոյան, ժամը 18-ին, Արևմտյան Բեռլինի պետական իշխանության և եկեղեցիների անունից «Շարլոտենբուրգ» շքեղ պալատում մասնավոր ընդունելություն տեղի ունեցավ՝ ի պատիվ Ե. Հ. Խ.-ի կենտրոնական կոմիտեի ժողովի մասնակիցների: Ընդունելության ընթացքում սենատոր պրոֆ. Վեռները գեղեցիկ մի ճառով ողջունեց հյուրերին՝ նշելով, որ Բեռլինը եղել է էկումենիկ կյանքի օրրան՝ ի հեռուկս նացիստական հակառակորդ ուժերի:

Հրավերի ընթացքում Ե. Հ. Խ.-ի անունից պատասխան խոսքով հանդես եկավ Ե. Հ. Խ.-ի պատվավոր նախագահ դոկտ. Վիսսրթ Հուֆթը, որն իր ելույթում հիշեց այն բազմաթիվ անձերի անունները, որոնք Գեր-

մանիայում դժվարին օրերին պայքարել էին նացիստական շարժման դեմ՝ քրիստոնեական եղբայրության և միության ոգուց դրդված:

7. Փակում Կենտրոնական կոմիտեի 26-րդ ժողովի:

Ե. Հ. Խ.-ի Կենտրոնական կոմիտեն իր աշխատանքներն ավարտեց կիրակի օրը, օգոստոսի 18-ին, երեկոյան ժամը 18-ին: Նույն երեկոյան, ժամը 18.15-ին, ժողովի փակման արարողությունը տեղի ունեցավ ս. Մատթեոս եկեղեցում, ուր գոհաբանական աղոթք մատուցվեց, բոլոր անդամների ներկայությամբ, այն գեղեցիկ պատեհության համար, որ դարձյալ ընծայվեց նրանց՝ ս. Հոգու շնորհիվ միասնաբար աշխատելու և միջոցներ գտնելու, թեթևացնելու համար մարդկության առաջ ծառացած դժվարությունները: Փոխադարձ սիրո ողջույն տալով միմյանց, ժողովականները բաժանվեցին իրարից՝ վեստին հանդիպելու համար, այս անգամ Նայրոբիում:

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆ

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐԻՑ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ «ՆԻԲՈՐԳ 7» ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԷՆԳԵԼԲԵՐԳՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 16—23-ը Էնգելբերգ քաղաքում (Շվեյցարիա) տեղի է ունեցել Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի «Նիբորգ 7» համաժողովը, որին մասնակցել են Եվրոպայի ավելի քան 100 անդամ եկեղեցիների բազմաթիվ ներկայացուցիչներ: Համաժողովին Հայաստանյայց եկեղեցու կողմից, որպես դիտորդ, իր մասնակցությունն է բերել նաև Ժենևի հայոց հոգևոր հովիվ տ. Դավիթ ծ. վրդ. Սահակյանը:

Համաժողովի գլխավոր թեման է եղել՝ «Միություն ի Քրիստոս և խաղաղություն երկրի վրա»: Ժողովում վերոհիշյալ թեման շուրջ առանձին զեկուցումներով հանդես են եկել Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի նախագահ, աստվածաբան դոկտ. Հելմուտ Հիլդը (Արևմտյան Գերմանիա) և պրոֆ. Լ. Մ. Պակոսդին (Հունգարիա):

ԵԵԿ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Գլեն Գարֆիլդ Վիլյամսը, ԵԵԿ-ի ընդհանուր գործունեության վերաբերյալ իր ներկայացրած հաշվետու զեկուցման մեջ բնութագրելով ներկա համաժողովի հրավիրման հիմնական նպատակը, նշել է. «Եկեղեցիների նպաստը խաղաղության իրականացման գործին մեր օրակարգի առաջնահերթ խնդիրներից մեկն է: Ուրախալի է, որ եկեղեցիները ոչ միայն պատրաստակամություն, այլև անհամբերություն են ցուցաբերում միասնաբար խորհրդածելու այդ հարցի մասին, որը մեր ժամանակի ամենահրատապ հարցն է: Ինձ թվում է, որ եկեղեցիները Քրիստոսով իրենց միությունն իրականացնելու վերաբերյալ իրենց բանավեճերի հիմքում խաղաղության հենց ա՛յդ մտահոգությունն ունեն, և որ այդ երկու հարցերը կամ հաստատումները՝ «Միություն ի Քրիստոս» և «Խաղաղություն երկրի վրա», նկատվում են որպես երկու բաղադրամասերը մեկ և նույն ամբողջության, այն է՝ Քրիստոսի խոսքի գործադրումը, ավետարանական առաքելությունը:

Համաժողովի մասնակիցները առանձին բաժիններից բաղկացած երկու հանձնախմբերում լայն քննարկման են ենթարկել համաժողովի գլխավոր թեման և խմբագրել համապատասխան զեկուցագրեր: Համաժողովը վերջում հրապարակել է մի հայտարարություն, ուր, ի միջի այլոց, ասվում է. «Մեր հանդիպումների ընթացքում մենք գիտակցեցինք, որ եկեղեցիները աշխարհի խաղաղության համար իրապես օգտակար մի բան կարող են անել այն դեպքում միայն, եթե բոլոր մարդկանց առաջ տեսանելի դարձնեն իրենց դավանած միությունը ի Քրիստոս և իրենց հասարակաց կյանքում հայտնապես մարմնավորեն այն հաշտությունը, որ նրանք քարոզում են աշխարհին: Աշխարհն այսօր մոտիկից է հետևում եկեղեցիներին և նրանց գործունեությանը՝ տեսնելու համար, թե նրանք ինչպե՞ս են հաղ-

թահարում իրենց տարաձայնությունները, և թե հասարակաց կյանքի ու գործակցության ինչպիսի՞ ուսանելի օրինակներ ունեն տալու մարդկությանը... Մտահոգվելով այն հարցով, թե Եվրոպայի եկեղեցիներն ու քրիստոնյաները կոնկրետ կերպով ի՞նչ կարող են անել աշխարհի խաղաղության համար, մենք գիտակցեցինք նաև, որ չպետք է սահմանափակվենք միայն Եվրոպայով, քանզի խաղաղությունն անքաժանելի է: Եվրոպայի եկեղեցիների պարտականությունն է՝ իրենց հասարակությունների և պետությունների մեջ կրքոտ պաշտպանները հանդիսանալ այն բոլոր ժողովուրդների դատի, որոնք աշխարհի բազմաթիվ շրջաններում գտնվում են թշվառության, սովի և սարսափի սպառնալիքի առաջ»:

Հայտարարության վերջում համաժողովը, ողջունելով ձեռք բերված լարվածության թուլացումը Եվրոպայում, նշել է. «Եվրոպայի եկեղեցիները պետք է քաջալերեն իրենց երկրների կառավարություններին՝ սպառելու ստորագրված համաձայնագրերի բոլոր հնարավորությունները: Համաժողովը հույս է հայտնում, որ Եվրոպայի անվտանգությունն և համագործակցության կոնֆերանսը, որ վճռական կարևորություն է ներկայացնում մեր ցամաքամասի համար, շուտով կբերի դրական արդյունքների: Մենք կոչ ենք անում կոնֆերանսի բոլոր պատասխանատու անձանց, արիություն հանդես բերել այն բոլոր դժվարությունների առաջ, որ կարող են հարուցել դեռևս լուծելի հարցերը»:

ԼՈՒՐԵՐ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ ՊՐԱԳԱՅՈՒՄ

1974 թ. օգոստոսի 22—24-ը Պրագայում «Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանս» կազմակերպության շրջանակներում տեղի են ունեցել նիստեր ԱՄՆ-ի և Արևելյան Եվրոպայի երկրների 30 եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականների և ղեկավար գործիչների միջև: Էկումենիկ ոգով տեղի ունեցած եռօրյա բանավեճերը եղել են օգտակար և արդյունավետ: Նիստերի ընթացքում քննարկվել են միջազգային լարվածության թուլացման շնորհիվ վերոհիշյալ եկեղեցիների միջև բացված համագործակցության հեռանկարները, ինչպես նաև «երրորդ աշխարհի» ժողովուրդների ազատագրման ու զարգացման խնդիրները:

Կողմերը համաձայնության են եկել այն մասին, որ «սառը պատերազմի» դադարեցումը և լարվածության թուլացումը կօգնեն ժողովուրդների բարգավաճմանը, թեև, միաժամանակ, իրենց անհանգստությունն են հայտնել այն կապակցությամբ, որ ստեղծված այս գերազանց հնարավորությունը կարող է միայն թղթի վրա մնալ, եթե լարվածության մեղմացումը դառնա քաղաքական մեքենայությունների գործիք: Այս պատճառով էլ երկուստեք համոզում է հայտնվել, որ արևմտյան և արևելյան եկեղեցիների կոչումը պետք է լինի՝ լարվածության թուլացումը դարձնել իսկական մարդասիրական գործ՝ այն արտահայտելով Քրիստոսի Ավետարանով, որը մարդկանց առաջնորդում է համայն մարդկությանը ծառայելու վսեմ իդեալին:

ԼՈՒՐԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՑ

ԴԻԱԼՈԳ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԵԾ ԿՐՈՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը իր «Դիալոգ մեր ժամանակի կրոնների և գաղափարախոսությունների հետ» ենթահանձնախմբի նախաձեռնությամբ սույն թվականի ապրիլի 17—26-ը Կոլոմբոյում (Շրի Լանկա) կազմակերպել է միջկրոնական մի ժողով, որին մասնակցել են հինդու, բուդդայական, հրեական, քրիստոնեական և մահմեդական կրոնների հետևող 60 տղամարդիկ և կանայք: Մասնակցողների թվում են եղել Ինդոնեզիայի կրոնից գործերի մինիստր Հ. Մուկտի Ալին, դոկտ. Անանդա Մանգալա Թերան՝ Սինգապուրից, Երուսաղեմի եբրայական համալսարանի պրոֆ. Շեմարիահու Տալմոնը, Բենարեսի հինդու համալսարանի պրոֆ. Սիվարամանը և հույն օրթոդոքս եկեղեցու եպիսկոպոս Անասթասիոսը՝ Աթենքից: Ժողովի թեման է եղել՝ «Դեպի համաշխարհային մի հասարակություն. միջոցներ և պատասխա-

նատվություններ՝ միասին ապրելու հա-մար»:

Ժողովում գլխավոր զեկուցումով հանդես է եկել ԵՀԽ-ի վերոհիշյալ ենթահանձնա-ժողովի տնօրեն, հնդիկ աստվածաբան Սթենլի Սամարթան, որն իր զեկուցման մեջ նշել է, որ «իսկական համաշխարհա-յին հասարակություն չի կարող ստեղծվել այնքան ժամանակ, քանի դեռ ժողովուրդ-ները չեն ազատագրվել վերջնականապես»: Նա մասնավորապես ընդգծել է այն միտ-քը, որ վերոհիշյալ հինգ կրոնների սրբա-զան գրվածքների, ավանդությունների, պատմության, մշակույթի, իմաստության, ինչպես նաև նրանց ժամանակակից կրո-նական փորձի փոխադարձ քննադատական ուսումնասիրությունը կարող է էական մի նպաստ հանդիսանալ նման համաշխարհա-յին եղբայրական մի հասարակության ստեղծման ճանապարհին:

Ժողովի ավարտին հրապարակվել է մի հաղորդագրություն, որի մեջ ներկայացվել են մասնակիցների տեսակետները վերոհիշ-յալ հինգ կրոնների հետևորդների միջև հե-տագա համագործակցության հնարավորու-թյունների և եղանակների մասին ի խնդիր համաշխարհային եղբայրական մի հասա-րակության ստեղծման: Կարծվում է, որ այդ հաղորդագրությունն իր նպաստը կբերի ԵՀԽ-ի առաջիկա 5-րդ համաժողովին, որի գլխավոր թեմաներից մեկն է լինելու՝ «Տար-բեր կրոնների, գաղափարախոսությունների և մշակույթների հետևորդների հետ միասին որոնում համաշխարհային մի հասարակու-թյան ստեղծման»:

ՄԱՆԱՍ ԲՈՒԹԵԼԵԶԻՆ ԺՆԵՎՈՒՄ

Հարավային Աֆրիկացի աստվածաբան Մանաս Բութելեզին, որը «Կոմունիզմի վե-րացման մասին օրենք»-ի հետևանքով կա-լանքի էր ենթարկվել անցյալ տարի, վեր-ջերս ժնևում մասնակցել է Համաշխարհա-յին լութերական ֆեդերացիայի ուսումնա-սիրությունների հանձնաժողովի տարեկան ժողովին: Պաստոր Բութելեզին այդ հանձ-նաժողովի դեկավար անդամներից է:

Հանձնաժողովի անդամները իրենց ուրա-խությունն են արտահայտել սևամորթ աստ-վածաբանի ներկայության համար, որին արգելվել էր ճանապարհորդել և մասնակ-ցել ժողովների, հատկապես Հարավային Աֆրիկայի Հանրապետությունում և Հար-րավ-Արևմտյան Աֆրիկայում:

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ

ԵԹՈՎՊԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՑԻՉԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի հոկտեմբերի 11—14-ը Մայր Աթոռում էր գտնվում Եթովպական ուղղափառ եկեղեցու ավետարանչության գծով հաղորդակցության բաժնի պատաս-խանատու վարիչ և Ադիս-Աբեբայի ս. Հով-հաննես եկեղեցու ավագերեց տ. Սոլոմոն Գեբրե Սելասիեն:

Հոկտեմբերի 12-ին, շաբաթ օրը, եթով-պական քույր եկեղեցու ներկայացուցիչը ընդունվեց Ամենայն Հայոց Հայրապետի կողմից, իսկ հետևյալ օրը, առավոտյան, ներկա եղավ Մայր տաճարում մատուցված ս. պատարագին:

Մայր Աթոռում գտնվելու օրերին տ. Սո-լոմոն Սելասիեն այցելեց Մայր Աթոռի թանգարանները, ս. Հռիփսիմե, ս. Գայանե և ս. Գեղարդ վանքերը, եղավ ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և Երևանի այլ տեսարժան վայրերում:



ԵՂՆԻԿ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ «ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱԿՍ ՁՐՈՅՑ ԽԱՌՆՄԱՆ Ի ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴՆ Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ .ՁԾԸ.» ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ*

Բ. ՄԱՍ—ԲՆԱԳԻՐ

74բ Գրիգոր կաթուղիկոսի հայոց ջրոդի, երկաքնակի, ուրացողի. ոհ որոց թողեալ զուսումն մանկութեան եւ մոռացեալ զուխտն աստուածեղէն.

Վասն ջրոյն թէ պարտ է* խառնել ի սուրբ խորհուրդն, որպէս և այլ քրիստոնեայքն, զոր եցոյց ճշմարիտ գոլ և հաստատէ զնոյն գրոց վկայութեամբ: Եւ նախ զաւետարանչին բան, զոր գրեաց սուրբն Յոհաննէս, որպէս ասէ, թէ «.Գ. են, որ վկայեն յերկինս՝ Հայր և Բանն և Հոգին, և .գ.** են, որ վկայեն յերկրի՝ Հոգին և ջուրն և արիւնն և .գ. եանն մի են»[1]: Եւ երկրորդ գրէ և առաքեալն Պօղոս առ կորնթացիսն ասելով. «Քանիցս անգամ եթէ ուտիցէք զհացս զայս և ընպիցէք զբաժակս՝ զմահն Տեառն պատմեսջիք»[2]: Եւ յիշատակ մահուն արիւնն և ջուրն է, որ ելին ի կողէն ի ժամ մահուն, ըստ որում և ինքն Տէրն առեալ բաժակ ի սեղանոյն գոհացաւ և ասէ. «Զայս արարէք առ իմոյ յիշատակի»[3]: Եւ բաժակ ոչ անապական գինւոյ անուն է, այլ ամանոյն, յորում խառնի ջուրն և գինին: Ըստ որում և աստուածայինն Սողոմոն վկայէ թէ «Խառնեաց ի խառնարանսն զգինի իւր»[4] և զկնի ասէ. «Արբէք զգինի, զոր խառնեցի ձեզ»[5], և դարձեալ այլ ոմն բաժակ ոսկի զնաթուգոդոնոսոր ի ձեռին Աստուծոյ այս է, այսինքն աման ոսկի: Եւ սուրբն Յոհան ի պատարագամատուցին գրէ, թէ մատուցեալ ոմն ի գինուորացն տիգաւ խոցեաց զկողս նորա և ել վաղվաղակի արիւն, զՅիսուս
75ա ասելով արկանէ զգինին,//և ասէ ջուր և արկանէ զջուրն՝ յայտ առնելով, թէ հարկաւոր է ջուրն ի սուրբ խորհուրդն: Ի սոյն և սուրբ Բասիլիոս

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1974 թ. № Թ-ից։
[1] Հմմտ. Ա Յովհ. Ե 8։
[2] Ա Կորնթ. ԺԱ 26։
[3] Ղուկաս ԻԲ 19։
* Այլ գրչով՝ չէ։
** Ձեռագրում՝ դ։
[4] Հմմտ. Առակ. Թ 2։
[5] Առակ. Թ 6։

Կեսարու և Յակովբ Տեառնեղբայրն ի պատարագսմատուցին են այս-
պէս գրել, թէ առեալ բաժակ օրհնեաց, խառնեաց։ Նմանապէս և սուրբն
Աթանասիոս ասէ ի մկրտութեան ճառին վերջքն։ Տեսանես, ասէ, զայս
սեղան, որ կայ ի միջի բեմիս, որ ի վայելչութիւն եկեղեցւոյ կազմեալ
օրհնեցա, և յառաջ տանելով զբանն, որ ասէ՝ այս է վերնատունն, յո-
րում բազմիս ընդ փրկչին, որ մինչ դեռ ոտէին նոքա առեալ հաց, երեկ
և տա աշակերտացն ասելով. «Առէք կերայք, այս է մարմին իմ»[6]։ Եւ
առեալ բաժակ գոհացաւ և ասէ. «Այս է արիւն իմ»[7]։ Եւ յետ սակաւուց
ասէ. «Առաջի դնեմք աստանօր ի վերայ այսր աստուածային սեղանոյս
հաց և գինի, ուր իմաստութիւն է զեն ըզենլիս իւր և խառնեաց ի խառ-
նելիս զգինի իւր»[8]։

Իսկ զսուրբն Եփրեմ* արբ, ասէ, զջուրն, որ աղբերացաւ ի վիմին
կողէն, որպէս Իսրայէլն այն հին։ Նաև մեծն Գրիգոր Նիւսեա յերգ
Երգոցին մեկնութենէ այսպէս գրէ. թէ բաց զբերանդ և արբ ջուրն զուր
տէգն աղբերացոյց քեզ և զի գինին ջուր է։ Նոյն ինքն սուրբս ասէ, թէ
գինին ոչ այլ ինչ է, քան եթէ ջուր որակացեալ ի փայտի, այսինքն գոյն
առեալ յորթոյ։ Եւ այն, զոր ասէ սուրբն Յոհան ի մեկնութիւն Աւետա-
րանին, թէ ոչ արբից ի բերոյ որթոյ, մինչև արբից զդա նոր ըստ յար-
քայութեան հօր իմոյ։ Եւ ի վերայ բերէ, թէ զմիւս չար հերձուածն ար-
մատաքի խլեսցէ, որ ի սուրբ խորհուրդն ջուր ի կիր արկանեն։ Զայս
ոչ վասն այնորիկ ասէ, թէ ընդ գինին ջուր խառնեն հերձուած անուա-
նելով, այլ որ զսուրբ խորհուրդն ջրով միայն կատարէին առանց գի-
նեանոյ։ Եւ թէ ընդէ՞ր ոչ յայտնեաց զանուանս այնոցիկ սուրբն Յոհան,
նա առ մեզ չէ յայտնի, զի գտաք ի գիրս, զոր սուրբն Երին[ո]ս՝ աշա-
կերտ առաքելոց գրեալ է և զանուանս հերձուածողացն, զի ոմն մարդ
լոկ և ոմն Աստուած տոսկ անուանեն զՔրիստոս։ Երիոնեանքն մարդ
սրբացեալ ասեն զՔրիստոս և ոչ Աստուած և մարդ և յայն սակս ջրով
միայն պատարագէին։ Եւ մարկիոնեանքն Աստուած միայն ասէին և ոչ
մարդ և Աստուած յերկուց միացեալ և վասն այր գինով միայն պատա-
րագէին։ Եւ զայս գիտելով սուրբն Յոհան ասէ. թէ և զմիւս չար հերձ-
ուածն կացուցանէ, որ երկուանէ հերձուած, երբ ջրով միայն լինի, կամ
գինով։ Զոր և սուրբ հայրքն վեցերորդ ժողովոյն որք յաւուրս Յուստի-
անոսի մեծի, որ եղև ի նոր Հռոմ յորում և բազում ինչ աւանդեցին,
76բ այլ և վասն ջրին հարկ//աւոր գոլ ասացին ի սուրբ խորհուրդն։ Ի սոյն
տեսութիւն և խորհուրդ խօսեցան և մեծի սուրբ հայրքն որ եղև յաւուրս
բարեպաշտ արքային Ոնորիոսի ի Կարթագինի, զոր թէ խնդրես
գտցես ի սոյն ժողովոց [գ] իրս զվեցերորդին յերեսներորդ երկրորդ
կանոն նոյն ժողովոյն, և զԿարթակինոյն յերեսներորդ .Է.երորդ կանոն
ի նոյն ժողովոյն։

Իսկ սուրբն Աղեկսանդրոս, որ էր զկնի սրբոյ** առաքելոյն Պետ-
րոսի հինգերորդ յաթոռն Հռովմայ, վասն այսր խորհրդոյ այսպէս
գրեաց. պարտ է, ասէ, ամենայն քահանայապետի զխորհրդականն
գործ եկեղեցւոյն ուսուցանել, այսինքն՝ զմկրտութիւն, զպսակն և զպա-

[6] Մատթ. ԻԶ 26։
[7] Մատթ. ԻԶ 28։
[8] Հմմտ. Առակ. Թ 1—2։
* Ձեռագրում՝ Եփրեմ Նիւսեա։
** Ձեռագրում՝ սրբոյ սրբոյ։

տարագն, որ է խորհրդական չարչարանացն Քրիստոսի յիշատակ, զի որպէս Քրիստոս պարգևեցաւ ի խաչին մարմնով և արիւն և ջուր եղ ի կողէն, զնոյն յիշատակ խորհրդոյ պարտիմք կատարել և մարմին և արիւն և ջուր, որպէս հրամայեաց մեծ վկայն Քրիստոսի սուրբն Աղեկսանդրոս, որ զամենայն կանոնս և զսահմանադրութիւնս լիապէս ունէր ի Պետրոսէ. և եցոյց, եթէ արժան է ոչ արեամբ միայն պատարագել և ոչ ջրով միայն, այլ մարմնով, այսինքն թէ՝ հացով և գինեաւ և ջրով, քանզի զսոյն ուսաք և լուաք ի սուրբ յԱւետարանէն, զի յորժամ խոցեցին զկողն Տեառն, նա ոչ ջուր միայն ել և կամ արիւն միայն, այլ արիւն և ջուր: Եւ սուրբն Յուլիանոս Պապն յայս խորհուրդ այսպէս ասէ. ոչ է պարտ լինել բաժակին արեամբ միայն և ոչ ջրով միայն, այլ երկոքումբքն, այսինքն արեամբ և ջրով: Եւ դարձեալ գրէ սուրբն Յուլիանոս, եթէ որ զխորհրդանշէրսն միովն կատարէ, առանց միւսոյն դադարել պարտի մինչ ի զոջումն եկեսցէ և ապաշխարեսցէ ըստ եկեղեցւոյ կանոնադրութեանց: Իսկ Կիպրիանոս մեծ վկայն եպիսկոպոս Կարգեդոնիո յոր յարևմուտս վասն բաժակի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի այսպէս յիշատակէ, խօսեցաւ Հոգին սուրբ բերանովն Սողոմոնի և ասաց իմաստութիւն. Քրիստոս շինեաց իւր տուն, զմարմինն, որ առ ի կուսէն, ի խառնեաց ի խառնելիս զգինի իւր և պատրաստեաց զսեղան իւր և առաքեաց զծառայս իւր կոչել բարձր քարոզութեամբ ի խառնելիս իւր և ասէ. որ ոք իցէ անզգամ, եկեսցէ առ իս և արբցէ և ցպակասամիտսն ասէ, եկայք կերայք ի հացէ իմմէ և արբէք զգինի իմ, զոր խառնեցի ձեզ. այս մարգարէութիւն Սողոմոնի յայտ առնէ զփրկական խորհուրդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր խառնեաց ի խաչին և ետ հաւատացելոց իւրոց հրէից և հեթանոսաց, և այս ուսուցանէ, թէ ոչ է օրէն ջրով միայն աւանդել զխորհուրդն, և ոչ արեամբ լոկով,
76ա այլ արեամբ և ջրով, այսինքն//գինով և ջրով: Իսկ մեծ եպիսկոպոսն Մելանոյ սուրբն Ամբրոսիոս գրէ. հնազանդել պարտ է սուրբ և առաքելական եկեղեցոյն Հռոմայ, վասն զի հաստատեալ է ուղղափառ հաւատով յառաքելոյն Պետրոսէ, քանզի որպէս մարմինն հնազանդի գլխոյն, նոյնպէս և ընդհանուր եկեղեցի, որ է տաճար Քրիստոսի, հնազանդել պարտի սմայ, որ գլուխ հաստատեցաւ ի Քրիստոսէ եկեղեցւոյ: Եւ քանզի հարկաւոր է՝ ի սուրբ խորհուրդն ջրոյն արկումն ցուցանէ դարձեալ նոյն ինքն սուրբն Ամբրոսիոս այսպէս՝ ասելով. Այսուհիկ զխառնումն Բանին Աստուծոյ, որ ընդ մեզ նշանակեմք, քանզի ճշմարտապէս եղև խառնումն աստուածութեանն ընդ մարդկութիւնս, որով և կոչեցաք անդամք ճշմարիտ գլխոյն մերոյ Քրիստոսի և վասն այսորիկ զխաչին իւր, այսինքն զարիւնն և զջուրն առնումք լիով ի պատարագն, որ ի սեղան խաչին, զի կատարեալ երևեսցի հաղորդութիւն մեր ընդ Աստուծոյ: Ի սոյն միտս յիշէ և մեծն Գրիգոր Աստուածաբան ի պասեքին ճառի վասն արեան և ջրոյն, որ ել ի կողից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յորժամ պատարագէր ի խաչին վասն քաւութեան և փրկութեան աշխարհի այսպէս ասելով. եղ արիւն նշանակելով, թէ կեն[դ]անի է ըստ աստուածային բնութեանս Տէրն մեր, և ջուր՝ թէ մեռաւ մարդկային բնութեամբն ստուգապէս, զոր ի մէնջն էառ, այսու ցուցանէ սուրբ հայրս հարկաւոր գոլ զխառնումն ջրոյն ի պատարագն, զի թէ որ մատեան և մատչի պատարագ Քրիստոսէ ըստ այնմ մարդ պարտ է ապա գինով և ջրով միշտ լինել պատարագն, զի Քրիստոս ոչ Աստուած

միայն է և ոչ մարդ միայն, այլ Աստուած և մարդ, յայտ է ապա, թէ որք
լիով և կատարեալ առնուն զնշանակսն, ի պատարագն Քրիստոս խուս-
տովանին Աստուած և մարդ կատարեալ զՏէրն մեր, իսկ որք թերի,
այսինքն գինի եւեթ կամ ջուր միայն, որպէս յեպիոնեանքն և մարկիո-
նեանքն, զոր յիշէ Երինոս, այնպիսիքն պակաս գտանին ի խոստովա-
նութիւն աստուածութեան և մարդկութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի, և գրէ թէ այն ոչ է պատարագ վասն անկատար և թերի գոլոյն,
յաղագս որոյ և մատուցօղքն ընդ բանիւ և մեղադրութեամբ են ի սուրբ
և ի մեծ սինոդոսացն և զտեսութիւն սրբոց հարցս և վկայիցս Քրիս-
տոսի, որ ի սոյն խօսեցան, զմեծին Աղեկսանդրու պապուն և զսրբոյն
Յուլիանոսի պապուն Հռովմայ և զԿիպրիանոսի և զԱմբրոսիոսի գտցես
յիւրեանց շարադրութիւնսն զոր արարեալ են վասն խնդրոյ այսորիկ ի
թուղթսն Իոնէկենդոսի պապուն Հռովմայ, որ կայ ի Ֆռանկ ցուցակն,
զոր գրեալ էր առ Տէր Գրիգորիոս կաթուղիկոսն եղբայր մեծին Ներսե-
78բ սի Կլայեցուն լուսափայլ//և փառաւոր վարդապետին ի ջրոյս բանն, թէ
հարկաւորէ ի սուրբ խորհուրդն, զոր յիշէ և սուրբն Երինոս հետևօղքն
առաքելոցն Քրիստոսի, զոր թէ խնդրես, գտցես իւր շարադրութիւնսն
ի բազում տեղիս։ Ի չորրորդ հատուածին, որ առ ամենայն աղանդսն,
ասէ թէև զայս Տէրն ուսոյց զխառնումն բաժակին ի վերնատունն ի ժա-
մանակ չարչարանացն, զոր առեալ ի սեղանոյն հաց, գինի և ջուր ամա-
նով, որ կայր առաջի աշակերտացն, օրհնեաց, սրբեաց, գոհացաւ, որ-
պէս ասէ աւետարանիչն Մաթէոս և ասաց՝ այս է մարմին իմ և արիւն
իմ, զայս արարէք առ իմոյ յիշատակի, և թէ ոչ արբից ի բերոյ որթոյ,
յայսմ հետէ մինչև արբից զդա նոր ընդ ձեզ արքայութեան Հօր իմոյ։
Նաև Պետա սուրբ քահանայն և այլոքն յոլովք ի սրբոցն խօսել են ի
սոյն խորհուրդս, զորոց զտեսութիւն գտաք լիով ի նամակ սքանչելի
հօրն մերոյ Գրիգորիոսի և զի լի էր վկայութեամբ յաստուածաշունչ
գրոց, որ ի սոյն խորհուրդ, այլ և ի բանէ և յաւանդութենէ սրբոց վար-
դապետացս և հարցս յոյժ ամրացեալ գոյր մանաւանդ թէ ընդ կանոնի
և հրամանի սրբոց սինոդոսացն, որ եղև ի մեծն Կոստանդնուպօլիս
և ի Կարթագինէս, որպէս և գրեալ է ի վեր անդր և զի էր ըստ հետի և
շաւղաց սուրբ և ուղղափառ եկեղեցեացն Քրիստոսի Հռովմայ և Կոս-
տանդինու և այլ սուրբ ուղղափառ եկեղեցեացն սովորութեանցն և կար-
գացն զոր սկսեալ յառաքելոցն սրբոց հետէ, զնոյն կարգ և սովորութիւն
ունին և առնեն մինչև ցայժմ, վասն որոյ և աստ ժողովեալ բազմութիւն
եպիսկոպոսաց և վարդապետաց, հարց և քահանայից հանդերձ քրիս-
տոսասէր թագաւորաւս մերով, Լևոնի և պարաւաւս Հեթմի և եղբարքք
իւրովք Աւշնի և Ալինախի և այլ ևս իշխանօք, ազատօք և զօրօք ևս
բազում* ժողովրդականաւք յոյժ հաւանութեամբ և պատուով ընկալաք
զհրաման սրբոյ հօրս և իբրև զմշմարիտ և զառաքելական կանոնս ն
զօրինադրութիւն հաստատեցաք յեկեղեցիս հայոց, զի թէպէտ այսպիսի
աւանդութեամբք սուրբ և կարգաւորութիւնք տէրունական տօնից, ի կա-
նուխ ժամանակաց սկսեալ ի սրբոյ լուսաւորչէն գոյր յեկեղեցիս Հայոց
և պահիւր սոյն սովորութիւն բազում և երկար ամօք և ի պատճառէ ի
մեքէ խափանեալ և բարձեալ եղև։ Սակայն և այժմ ողորմութեամբն և
շնորհօքն Աստուծոյ, ի ձեռն եպիսկոպոսապետին Գրիգորի և Կոս-

* Ձեռագրում՝ ևսբազան։

77ա տանդեա և//բարեպաշտ տեառնս մերոյ Լևոնի և որ այժմն է բարեպաշտ թագաւորիս Օշնի և պար Ալինախի, ընկալաք վերստին և եմք հաճա-ծայն* յամենայն բարեկարգութիւնս և տօնս եկեղեցւոյն Հռովմայ և այլոս ճշմարտադաւսն և ուղղախոհ եկեղեցեացն Քրիստոսի, զի մի ոք իշխեսցէ յայսմ հետէ և առ յապա յայսմ կանոնադրութեանս և հրամանի, որ ի սրբոյ ժողովոյս եղև ընդդիմասաց և հակառակօղ. երևիս զի մի ընդ պատուհասիւք դիցէ և մասն և բաժին ընդ հերետիկոսացն** կալցի, մանաւանդ այնց որք փոխանակ ցորենւոյ հացի զոր եկեղեցի սուրբ նշանակ առնէ Քրիստոսի մարմնոյն նոքա ի գարեղէն փոխարկին և փոխանակ գինւոյ օրինակի արեանն Քրիստոսի ջուր ևեթ ի կիր արկանեն:

Եղև կանոնադրութիւն և սահման սրբոյ ժողովոյս ի մեծ թուականութեանս Հայոց .ՉԾԶ. և փոքր թվին .Ե. յամսեանն մարտի .ժթ. ի յօղօգամեան տօնին, ի սուրբն մեծ կաթուղիկէն մայրաքաղաքին Սիսայ:

Պարտ է ամենայն քահանայապետի զխորհրդական գործ եկեղեցւոյ ուսուցանել, այսինքն զմկրտութիւն, զպսակ և զպատարագ, որ է խորհրդական չարչարանացն Քրիստոսի յիշատակ, զի որպէս Քրիստոս պատարագեցաւ ի խաչին մարմնով և արիւն և ջուր ել ի կողէն զնոյն խորհրդոյ յիշատակ պարտիմք առնուլ: Այլ և զտօն ծննդեանն*** Քրիստոսի պարտ է ըստ մետասան ազգաց քրիստոնեիցն կատարել, .ԻԵ. դեկտեմբերի ամսոյ, ըստ վկայութեանն Յոհաննու Ոսկեբերանոյ և այլ սրբոց հարցն և վարդապետացն ուղղափառաց, քանզի ասեն, թէ յամսեանն յորում ծնաւ Քրիստոս դարձ արեգականն է ի վեր և սկսանի լաճել տիւն և գիշերն նուազիլ, որ կու նշանակէ այսով զճշմարիտ արեգականն ծագիլն յաշխարհ, այսինքն զմարմնով ծնանիլն ի կուսէն: Եւ զծնունդն Յովաննու .իդ. յունիս ամսոյ որ .զ. ամսով յառաջ է քան զՔրիստոսին: Քանզի անտի սկսանին աւուրքն նուազիլ ու գիշերքն յաճել ըստ վկայութեանն Յովաննու, թէ նմա պարտ է աճել և ինձ մեղմանալ, զի գրեալ է սուրբն Յոհան ի մեկնութիւն Աւետարանին վասն Եղիսաբեթի մօրն Յովաննու .իգ. լինել լղութիւն նորա, յորում ամսեան հաւասարի տիւն և գիշերն և սկսանի տիւն ի պակասել և գիշերն յաճել, և այս ստոյգ խորհուրդ էր աճման Աւետարանին Քրիստոսի և ի մեղմանալ ստուերական օրինացն որպէս ասէ օրէնքն և մարգարէքն մինչև զՅովաննէս այլովքն հանդերձ:

Գրեցաւ սա ի թվին հայոց .ՃԶ. Ինիոյկինդոսէ պապէ Հռովմայ առ
77բ տէր Գրիգոր//կաթուղիկոս Հայոց, եղբայր Ներսեսի Կլայեցոյն:

Այսոքիկ հակառակասիրացն բանք, զոր մինչև ցայսր վայրի բազում ստութեամբ յօդեալ, շարամանեաց երկմիտ խորհրդով և ոչ առաջին կամօք, զի որ մօտակայքն էին, ասացին, թէ յորժամ զքանքս վայրսոսիկ ի բաց ընկէց ասելով, առէք ձեզ կոիւ, պատերազմ և հակառակութիւն, զի իմ շահելով զկամս թագաւորին, զայս արարի և փոխանակ կրեմ աքսորումն յաթոռոյս, և զի էր ոչ վասն ճշմարտութեան խնդրիս այս, այլ վասն հեշտութեան զպահսն լուծանել, պոռնկել և անխղճաբար պատարագել, որպէս և այնոքիկ ընդ որս սիրեն միաբանել, զի և որ այժմս ունի զաթոռ հեղինակութեան Հայոց, ոչ միայն ջրով,

* Ձեռագրում՝ համայծայն:
** Ձեռագրում՝ հերիտիկոսացն:
*** ծնընկեանն:

այլև ի խմորով պատարագէ .ք. ոնութիւն և .ք. կամք և .ք. ներկործութիւն և ապականացու կիրք ասեն ի Քրիստոս, զՔաղկեդովնի ժողովն ընդունին և տօն կատարեն, զսուրբքն, զոր մեք ընդունիմք, նզովեն: Եւ այլ բազում անզգամութեամբ զոր ոչ է պարտ յիշատակել:

Եւ որ գրեացն զայսոսիկ ի ժամ վախճանին, զոչացեալ ասէր. «Հայ եմ, հայ եմ և հայ մեռանիմ»:

Այս մինչև ցայս վայր:

Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի սուրբ խորհուրդն ի թվին հայոց .ՉԾԸ. պատշաճաբար շարադրութեամբ յարմարեալ մեծի բարեւնապետին Մովսէսի.

«Որդիք մարդկան մինչև յե՞րբ էք խստասիրտք, ընդե՞ր սիրէք զնանրութիւն և խնդրէք զստութիւն»[1], ասէ ուրումն յիւրում բանսն երանելին Դաւիթ և ես զնորայն առ բերելով վերաձայն[եց]ից յիմումս ժամանակի. մինչև յե՞րբ սրտմտութիւն, մինչև յե՞րբ անձնահաճութիւն, մինչև յե՞րբ ակառութիւն: Ժամ է և ինձ այժմ զառաքելոյն բարբառել: Ընդե՞ր բնաւ հերձուածք են ի ձեզ: Մի ազգ, մի լեզու, ոմն ես պօղոսեան, ոմն ես ապողոսեան, զուր վիճաբանութեամբ և ունայն բերմամբ:

Քրիստոս է գլուխ արարածոց և փրկիչ աշխարհի: Եւ զիա՞րդ զմի Քրիստոսն ի բազումս բաժանէք, իբրև զայլալեզու կամ զայլադէմ: Ոմն յայս ինչ պարապեալ և ոմն յայն յապաբան նորաձևութիւն և յանիմաստ յաճումն զօրէն կապկի զգայարանաց նմանեալ և ոչ մտաց իմաստից ըն[տ]րողաբար փոյթ առեալ: Մի է Տէր, մի հաւատ, ըստ անօթոյն ընտրութեան, և միոյ Տեառն և հաւատոյ զիա՞րդ առօրեա փոփոխումն
78ա և սկզբնաւորութեան://Հիմն այլ ոք ոչ կարէ դնել քան զեդեալն Յիսուս Քրիստոս և այն վաղ ժամանակաւ եղաւ, զիա՞րդ ամենայն աւուր հրամանակութեան, յամենայն ժամ առաջարկութիւն նորագոյն սկզբանց: Բազում սկզբունքն բազում խոովութեանց են պատճառք և բազում քակման և շփոթման: Ամենայն ազգ և թագաւորութիւն բաժանեալ աւերի և ոչ հաստատի ըստ տէրունական հրամանին, զի վիճմունք և բաժանմունք խոովութեան [է] պատճառ և ոչ խաղաղութեան, և խոովութիւնքն աւերման, և ոչ շինութեան: Նախ զայս հարցանեմ, զի ամենայն իրիք առաջարկութեան (դիտաւորութիւն գոյ, և առանց դիտաւորութեան*) սկզբնաւորութեան երբեք իմիք ոչ լինիք: Վասն որոյ և զդիտաւորութիւն առաջարկութեանն այսոցիկ հարցանեմ: Զի գիտացից զհարկաւորութիւն իրս այսորիկ կամ զպիտանութիւն, զի ընդ կարևորն և ընդ պիտանացուն բազում զանազանութիւն գոյ: Եւ արդ լսեմ որպէս ասեն ստայոդ ունայնաբանութիւն**, զի սէր և միաբանութիւն ասեն հաստատեսցի, և գայցեն մակեդոնացիք և օգնեսցեն մեզ, աւաղ, զուր և ունայն կարծեացս այսոցիկ, զի թէ առանց Աստուծոյ եղև և ոչինչ որպէս և է ճշմարիտ, ապա գալ մակեդոնացւոցն ոչ ըստ մերոց լինիցի կամաց և ոչ ըստ նոցայն այլ ըստ Աստուծոյ: Զի որպէս լսեմք նոքա ի վաղ ժամանակաց յամենայն ժամ պատրաստեն ոչ վասն մեր, այլ գալ և ազատել զԵրուսաղէմ յանօրինաց և ոչ յաջողի: Իսկ սէր ընդ մեզ և ընդ նոսա և առանց այսր իրի հայցմամբ սրբոցն հաստատուն է և

[1] Սաղմ. Դ 8։

* Ձեռագրում՝ չիք, այլ ձեռագրերից։

** Ձեռագրում՝ ունայնայրաանութիւն։

նոքա զմեզ բնաւ ոչ (բռնադատեն ի մերոց սահմանաց փոփոխումն*), այլ թեթևամտութեամբ ի մերոցս առ նոսա փութաւն շնորհ իմն առնելով խնդրովս: Իսկ նոքա ոչ յի բաց կալն, այլև առաւել ի մերոցս պահելն զմեզ ընդունին և էպերեն, զի բացկալն ի մերոց սահմանացն իրրև զօրինազանց: Իսկ շաղկապ սիրոյ, թէ էին այսպիսի (իրակերտութիւն, ապա բաց ի սակաւուց ամենայն**) իրօք յոյնք և մակեդոնացիք համագործութիւն ունին և այնքան թշնամութիւն է ի մէջ նոցա, մինչ զի զմիմեանս ընդ ամբարիշտս համեմատեն: Քանի՞ցս անգամ Կլայեցին*** Ներսէս յիւրում ժամանակին և ի թագաւորութեանն Հոռոմոց Մանիլին՝ փոյթ արարին վասն միաբանութեան հայոց և յունաց և ոչ եղև հնար: Այլ և քեռորդի նորին Տէրն Գրիգոր և Լամբրոնացին Ներսէս ի նոյն ջանացին և ընդունայն և զուր եղև աշխատութիւն և մեր ոչ սրբագոյն, և ոչ իմաստագոյն գոլ քան զնոսին: Եւ Տէրն Ներսէս Կլա-
78բ յեցին վասն այսր//իրի գրէ յարևելս՝ աղօթիւք խնդրել յԱստուծոյ, զի ըստ հաճոյիցն Աստուծոյ աւարտ իրին լինիցի: Որով յայտ իսկ է, թէ ոչ մարդկան հնարիւք, այլ Աստուծոյ իրակերտութեամբ յաջողեսցի իրս այս և ում որ ցաւէ վասն այսր վշտի և թշնամութեան զուր և անօգուտ վիճման, պարտի աղօթիւք առաջի Աստուծոյ անկանել և զայլս ի նոյն յորդորել և երկրամերձ դիմօք և արտօսրաթաւ պաղատանօք հաշտեցուցանել զԱստուած, թերևս դարձի ի բարկութենէ իւրմէ, որ վասն մեղաց մերոց: Զի այլ զի՞նչ է պատառումն այսքան, թէ մեղաց մերոց հարուած և պատուհաս յանցանաց, որով և յայտ իսկ է, թէ չիք բժշկութիւն վիրաց մերոց, բայց միայն աղօթից օժանդակութեամբ և Աստուծոյ ձեռնտուութեամբ: Եւ մեր զօրէն խաղաղիկ մանկանց կամ անհմուտ բժշկաց ի վերս գլխոյ յոտից փութալ բժշկութեան և փոխանակ ի կարևոր դեղս փութալոյ, ճեմականցն հետևիմք գտմանց: Այլ ասէ, ի ճշմարիտն ընթանամք ի կրօնս և յիմաստնոց գիտս և ի տեսութիւն, Աւաղ անմտութեանց, յո՞ր ճշմարիտ, կամ յորո՞ց իմաստնոց գիտ:

Արդ բեր ինձ յառաջ զհաւատն Նիկիական և զսահմանադրութիւն սրբոց հարցն և հաստատեա անտի զիրաց քոց առաջարկութիւն: Ամենայն ումեքն յայտ է, զի որ ի ձայն մերձ լինի, նմա յայտ է ճշմարիտն, քան որ ի բաւցեալ կայ, և թէ այս այսպէս է, որպէս և է իրաւացի, ապա որք ի նախակարգեալ օրինադիր հայրսն հուպ էին և յաւանդիչսն հաստատութեան հաւատոյ նոցա յաւէտ պարտ է հաւատալ, քան թէ սուտակասպասաց յետնոց, որք ոչ միայն երկար ժամանակաւ և հեռի միջոցաւ յետնեալք են, այլ և վարուց ևս մաքրութեամբ նոցին համեմատութենէ վերջացեալ գտանին: Որք զմեծ և զկարևոր հոգաբարձութենէ անփոյթ արարեալ՝ զոչ պիտանիս ջանան հաստատել, որք բժշկ[ակ]ան արհեստի հմուտք գոլով՝ ի հաւաքումն ծաղկանց**** միայն զպիտանին և զօգուտն ժողովեն և զխոտանն և զանպիտանն ի բաց ընկենուն, զոր պարտ էր և ոգոց բժշկաց այսմ փոյթ յանձին ունել և ոչ ի վայրապար և յանօգուտ նորաձևութիւնս փութալ, և զպարզամիտսն և զանիմաստսն պատրել: Արդարև հովիւք մոլորեցան և ի սպանութիւն հօտին

* Ձեռագրում՝ չիք, այլ ձեռագրերից:
** Նույնը:
*** Կլայցին:
**** Ձեռագրում՝ ծաղկաց:

79ա Քրիստոսի միաբանեցան և սպա//նութիւն ոչ ըստ մարմնոյ, այլ ըստ հոգոյ:

Եւ արդ եդից յայսմ վայրի առաջի լսասիրաց սեղան՝ լի հոգևոր խորհիւք զհրալից բանս սրբոյ դիտապետին Գրիգորի վկայասիրի:

Գրիգորիոս Վկայասիրի հայոց վերադիտողի Վասն Զատկի.

Ի թուականութեանն հայոց .ՇԼԱ. ի սուրբ Զատկէն մոլորեցան .ժ. ազգս հաւատացելոց և հայք և ասորիք միայն մնացին հաստատուն և հոռոմք և ֆռանկք հետևեցան Իոիոնի, որ արկանէր ըզտումարն յԱպրիլի .ե. և զլրումն լուսնին հանդիպեցուցանէր ի տօնն Ղազարու, զոր հայք և երրայեցիք արկանեն յապրիլի .զ. որ հանդիպեցուցանէր ի տօնի ծառզարդարին:

Յորժամ ժողով արարին, զԻոիոն ոչ կոչեցին և նա հախանձեալ և եկեալ գաղտ առեալ զվեցն հինկ արար, վասն որոյ յամէն .ղէ. ամ մոլորին յոյնք ի Զատկին: Յայնժամ դասք քահանայիցն, որ է Յուրհայ, ազդ արարին Տեառն Գրիգորիսի հայոց կաթուղիկոսի Վկայասիրին և նա գրով ձեռին իւրոյ հաստատեաց զնոսա անշարժ կալ ի հաւատս ուղղափառութեանն և էր պատճէն թղթոյն այսպէս զոր գրեաց յՈւռհայ.

Քրիստոսի ճշմարիտ սիրողացդ և դաւանողացդ սրբոյ Երրորդութեանն քահանայիցդ և իշխանացդ և այլ ամենայն ժողովրդոցդ ողջոյն: Զաստուածասիրութեան զգիրս ձեր ընթարձաք և զխնդիրս ձեր լուաք վասն ստուգութեան սուրբ Զատկին և յոյժ գոհութիւն մատուցաք Աստուծոյ, որ շարժեաց զձեզ յայտ: Եւ արդ Տէր Յիսուս Քրիստոս զօրացուցուսցէ զձեզ ի նոյնդ կալ հաստատուն և տալ պատասխանի ընդդիմողացն. Գիտէ ինքն ամենագէտն ողորմութեամբն իւրով և ամենաքնին զօրութեամբն իւրով, որ թէպէտ գործովք միշտ մեղանչեմք Աստուծոյ, այլ հաւատովք ես և հաստս իմ ամենեքեան զուղիղն և զճշմարիտն ունիմք և եթէ ի վերայ ճշմարտութեանն պատճոց հանդիպիմք, մի զանգիտէք և մի երկնչիք, զի զվարձս ի Տեառնէ առնումք և մերձ է ժամանակն փրկութեան և պարտ է այսմ ամենայնի կատարել, զի երևեսցին ճշմարիտքն: Եւ ես որ խրախոյս տամ ձեզ և քաջալերեմ համբերել ամենայն իմաստութեամբ, կամաւորութեամբ մահակից և ես ձեզ գտա-

79բ նիմ յամենայն գործս և ի տեսակս տանջանաց://

Եւ եթէ բանիւք կամ քննութեամբ էր մեզ նեղութիւնս կամ հարցափորձութեամբ, ահա պատրաստ կամք յամենայն իրս տալ պատասխանի, զոր ինչ և հարցանիցեն, և եթէ տանջանաք և կամ բռնութեամբ և ոչ յայնմանէ յուրաստ կամք և գոհանամք զԱստուծոյ յամենայն ժամ, որ մինչև ցայժմ յանաստուած հեթանոսաց դատեաք և այժմ ի Քրիստոնէիցդ նոյնպէս: Բայց դուք մի վհատիք, կարող է Աստուած ընդ փորձութեանցն և զելսն առնել, սակայն որչափ ի կարի մեր է ամենեքեան որպէս զքաջ զինու Քրիստոսի մարտիմք, զբարուք նահատակութիւնն Յիսուսի ի վերայ ճշմարտութեանն վկայէ ինձ Տէր Աստուած իմ, վասն զի չեմք ի սղալումն ինչ և ոչ եմք ի թիւրութիւն հաւատոց և կամ յանդգնաբար իրաւ զմեզ կարծեմք վասն զի այդ անզգամաց է գործ և անմտաց, այլ շնորհաքն Աստուծոյ և սրբոց լուսաւորչացն մերոց առաջնորդացն զարքունականն և զճշմարիտն ունիմք զճանապարհն,

որ ի Քրիստոս Յիսուս և ոչ յաջ խոտորիլ մեր և ոչ յահեակ և ի պատուիրանացն Աստուծոյ ոչ օտարացեալ, և ոչ հպարտացեալ և ամբարտաւանեալք որպէս զայլս ոմանս։ Եւ արդ եթէ խարդախութեամբ ինչ ունիմք զթերութիւն հաւատոց, վասն է՞ր չարչարիմք իբրև զպատժապարտս և ոչ ունիմք զհանգիստ, այլ տագնապաւ շրջիմք ընդ ծով և ընդ ցամաք, որպէս և Պօղոս պատմէ զինքեանէ զնոյն և ես ասեմ, եթէ սնոտի յուսով էր այս ամենայն շրջագայութիւնս և փախուստ և նեղութիւնս և անձուկս ինձ տարապարտէ անցեալ, եթէ վասն պարսաւելի հաւատոյ զայս գործեցի և .խ. ամ կամ իմով ճշմարտութեամբս և հայրապետութեամբս և զիմ հայրենի զտունն ի խաղաղութեանն ժամանակի թողի և յայս փոխեցայ, ապա ուրեմն խաբեալ ես միայն եղէ, բայց յուսովն Աստուծոյ եմ և վկայութեամբ սուրբ Գրոց վասն զի զուղղափառ և զանթերին ունիմ զհաւատն։ Արդ ամենեքեան, որ իմում հայրապետութեանս և հաւատոյս կցորդիք, մի թուլութեամբ կամ աչառանօք պատկառէք և կամ երկնչիք և զԱստուած վաճառէք վասն սնոտի կենացս, վասն զի ահա այս է ժամանակ ընդունելի և առնուլ պտակ ի Քրիստոսէ, և երաշխաւոր ես եմ ձեզ առ Քրիստոս, վասն զի որ զսուրբ
80ա հարցն զցանկն ոչ պատառէ, ընդ//սուրբսն պսակեսցի, ապա թէ ոք զմարդկան զփառս առաւել սիրեսցէ քան զԱստուծոյն։ Ի դատաստանի որդոյն Աստուծոյ ընդ ուրացողսն գտցի, որք զՔրիստոս Աստուած ոչ խոստովանեցան և ի մեր հաւատոյս և յաւրինութենէս անմասն ելցէ։ Իսկ հաւատացեալքն ի հաւատս մեր օրհնեալ եղիցին յերկնաւորաց և յերկրաւորաց, ի մէնջ և յԱստուծոյ, որ է օրհնեալ յաւիտեանս։

Եւ արդ սուրբ հայրս այսոքիկ են բանք և այսպիսի սպառնալիր, որ երկերիւր ամաւ կամ ևս աւելի յառաջ գոլով, քան զմեզ և բազում ժամանակս առ յունականս ի թագաւորանիստ քաղաքն կացեալ և նոցին ամենայն իրի տեղեկացեալ, և թէ ի սմանէ թաքուցաւ ճշմարտութիւնն, ապա վերջեցելոցս զիա՞րդ եղև յայտնի, որք ոչ առաքինութեամբ ի սորին չափ հասեալք և ոչ գիտութեամբ* իմաստից և այսոքիկ այսչափ։ Յայսմ հետէ ընթասցուք ի բանիցն քննութիւն և տեսցուք, որչափ է կարողութիւն ընդդիմադրելով զպատասխանին, ոչ հակառակութեամբ և յանդգնութեամբ, այլ սրբոցն խօսեցեալ բանիւք, հաստատելով զերիս այսորիկ զճշմարտութիւն վասն պարզամտացն անսայթաք մնալով։

* * *

Գրիգորն ասէ կաթուղիկոսի. ի գրեցելոցս թեթևութիւն գրոյս վեր երևի ոչ սրբոյ, զի չէր ոչ Տեառն, զի ամօթ համարէին ոչ վերադիտողի, զի եպերանաց ունէին կարծիս և մի ոք զբանս անզգամութեան համարեսցի, զի թէ գրով ոչ էին կատարեալ, ոչ ունէաք ընդ գրով արկանել, զի որք զայսոսիկ ծանուցին զսահմանադրութիւն զծնօղ բանիս ինքեան հրապարակեցին, աքսորեցին և հրապարակագոյժ արարին։ Ապա որո՞վ իմաստութեամբ զնորին վերագրեն զանուան յորջորջումն ի տառատրպութեանն, քանզի պարտ էր կամ սուրբ վերաձայնեալ և զգրեալսն հաստատեալ, կամ թէ այն մեր արժանի զոր արարին խոտան և

* Ձեռագրում՝ և ոչ գիտութեամբ, և ոչ գիտութեամբ։

ամօթալի զբաղու հոմարել: Այլ մեք ի սրբոցն դիմեսցուք բան, և զնոցին յառաջ բերցուք զճշմարտութիւն և նախ զսրբոյն Ներսէսի հայոց վերադիտողի, եղբօր տեառն Գրիգորի քեռորդոյ Վկայասիրին:

Եւ արդ դիցուք նախ զբանս ունայնախորհիցն, թէ զինչ ասէ, որ ասեն.

Վասն ջրոյն թէ պարտ է ասել խառնել ի սուրբ խորհուրդն որպէս առ քրիստոնեայքն: Որոց առաջին պատասխանի այս.

Իրաքանչիւր ոք, եթէ իցէ ըստ հաճոյից իւրոց, այլ մեք երթիցուք յանուն Տեառն Աստուծոյ մերոյ://Եւ եթէ ի Քրիստոս հաւատայք, նա 80r
ջուրն շփոթումն է ի բաժակն և զՔրիստոս զպատառն ի ջուրն լուաց և եդ Յուդայի և ջրոյն ընկէր խմորն է:

Նա և .ժդ. գլուխ հերձուած.յիշ[է] Մարկոս ոմն.

Բազում չարիս յաւանդեալ այլ և բաժակ գինով խառնեալ և բաղարեալ գոհութիւն իմն ի վերայ ծիրանի և կարմիր երևելի առնէր առ ի պատրել տեսողաց, և որք ընկէին թմբրեալք անբժշկելի ոչ մեկնէին ի նմանէ և կանանց արբուցեալ շնայր ընդ նոսա: Եւ գիտել պարտ է, թէ ի պատասխանատուութեան ոչ է, այլ միայն զճշմարիտն ծանուցեալ վասն ուգտի:

Ի սուրբ գրոց ասէ վկայութեամբ և նախ յաւետարանչէն Յովանու դնէ, որպէս ասէ, թէ .գ. են, որ վկայեն յերկինս՝ Հայր և Բանն և Հոգին*:

Եւ .գ. են, ասէ, որ վկայ յերկրէ հոգին և ջուրն և արիւնն:

Պխի. Այս վկայութիւն սակս յայտ առնելոյ, թէ Որդի Աստուծոյ է Յիսուս և ոչ վասն ի սուրբ խորհուրդն ջրոյ**:

Թէ զՅորդանանու ասէ անդ արիւն ոչ յիշէ, ապա թէ զիաչին որպէս և է ճշմարիտ, ջուրն ի մկրտութիւն զի որիշ ել ի կողէն և արիւն ի հաղորդութիւն:

Հրցու. Դնէ և զՊողոսին, թէ յուտել հացին զմահն Տեառն պատմել.

Պխի. Եւ Պողոս անդ ջուր ոչ յիշէ, այլ միայն զբաժակն ասէ ըմպել և ի կողէն արիւն և ջուր ելանելն կենդանի աստուածութեամբն և մեռեալ մարմնովն զՏէրն ի խաչին քարոզէր և ոչ ի սուրբ խորհուրդն ջուր արկանել:

Հրց. Գրիգոր կաթուղիկոսէ. Բերէ և զբան Փրկչին, թէ առեալ զբաժակն ի սեղանոյն գոհացաւ և ասէ՝ զայն արարէք առ իմոյ յիշատակի և զբաժակն ասէ ոչ անապական գինւոյն է անուն, այլ ամանոյն:

Պխի. Մովսիսի վրդտ. Ով դուք, որ զայդ ասէք և ոչ պատկառէք, յորժամ ասէ՝ քանիցս անգամ, թէ ընթիցէք զբաժակս՝ մի՞թէ զամանն ասաց ըմպել և ով ի մարդկանէ զպնակ կամ զգուշ կամ զսկիհ էարբ: Տեսանէ՞ք, թէ անզգուշութիւնդ ուր տանի զՁեզ հանէ: Հոմանուն է բաժակն: Զի և զչարչարանսն բաժակ ասէ՝ կարէք ըմբել զբաժակն, զոր ես ըմպելոց եմ, ասաց Տէրն:

Հարցու. Յիշէ և զՍողոմոն, զի ասէ խառնեաց ի խառնարանս զգինի իւր:

Պխի Մովս. Սողոմոն ոչ վասն խառնելոյ ջրոյ և գինւոյ, ասէ, այլ վասն հնոյ կտակին առ նորս միաբանութեան, որով և զանզգամսն ի

---

* Ձեռագրում՝ Պխի:

** Ձեռագրում՝ Պխի:

սգալութիւն ածէ, զի հինն ասէ՝ մի սպանանէր և ի նորս՝ մի բարկանար,
81ա ուստի սպան//անելն էր և ի նորս լինի: Եւ Լամբրոնացին Ներսէս զնոյնս
ասէ, թէ՝ զնորս ընդ հինն խառնեաց զուխտակի ըստ տանուտեառն, որ
հանէ ի գանձէ իւրմէ զնորն և զհինն: Զրաբանէ և զբերանն Ոսկի և
զԲասիլիոս, թէ ի պատարագն մատուցին գրեալ են ջուր արկանել:

Մով. Եւ ի մասընդեր ունելով զպատարագս սրբոցն և այժմ հայելով նկատեմ: Սուրբն Բասիլիոս գրեալ է յիւրում պատարագամատուցին այսպէս. առեալ զգինին արկանէ խաչանիշ ի սկիհն ասելով. յաղագս յիշատակի տնօրէնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և ջուր բնաւ ոչ յիշէ: Սոյնպէս և Յոհան յիւրում պատարագամատուցի զնոյնս է գրեալ և առեալ ասէ զգինին արկանէ խաչանիշ ի սկիհն ասելով. յաղագս յիշատակի տնօրէնութեան Տեառն Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. և սուրբքս ոչ յիշեն ջուր: Իսկ եթէ ոմանք յանդգնաբար եղեալ են, զսուրբքն մի զրաբանեսցեն ստութեամբ: Եւ Տեառնեղբօրն Յակովբա բնաւ անհարմար է զայդ ասել, և սրբոյն Աթանասի, զի թէ նոցա արարեալ էր, սոքա սուրբքս որ յետ նոցա էին, յիւրեանց պատարագամատուցին եղեալ էին, որով յայտ է թէ չէ և չէ բնաւ ուրեք:

Գրիգոր. Այլ և զԵփրեմ և զԳրիգոր Նիւսեա յիշէ և ասէ այսպէս. բաց զբերանդ և արբ զջուրն ի կողէն զոր տէգն աղբերացոյց քեզ:

Մով. Զոր պարտ է իմանալ, թէ ի խորհուրդ մկրտութեանն ասէ, զոր մտացն բերանով ասէ ըմբել. և զի ի մեկնութիւն Տէրունական աղօթիցն Նիւսացին ինքն զմտացն գիտակցութիւն ալբեր կոչէ, զոր խորհրդաբար պարտ է իմանալ, զի և Նսայի ծարաւելոց հրամայէ գնալ ի ջուրն, որ զմկրտութիւնն ցուցանէ և ոչ զհաղորդութիւնն: Եւ Եպիփան Կիպրացին ի մեկնութիւն Սաղմոսին և Դանիէլ Ասորին. ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է Տէր, զմկրտութեան խորհուրդն են ասեալ, որ մտացն է ճաշակումն և ոչ զգալի բերանոյն: Եւ դարձեալ Դանիէլ ասէ և զայս. եկն Աստուած մարմնով և ետ փոխանակ հացի զմարմին իւր և փոխանակ ջրոյ զարիւն իւր: Այլ Գրիգոր Նիւսացին ի մեկնութիւն ժողովողին գրէ. ասաց Տէրն մարմին իմ ճշմարիտ կերակուր է արիւն իմ ճշմարիտ ըմպելի, արդ որ զայն սիրէ զմարմին իմ և յայն արիւն հանգչի, յախտից
81բ մաքրի, վասն զի Բանին մարմին է և որ ի մարմնոյ անտի արիւն//ախորժելի լինի ճաշակողացն* և քաղցալի: Եւ սուրբս աստ ջուր ոչ յիշէ:

Գրիգոր. Առնու և զմիւս բան զՆիւսացւոյն, զի զգինին ջուր ասէ որակացեալ ի փայտի:

Մով պխի. Եւ թէ այս այսպէս է, որպէս է ճշմարիտ, ապա զջուր ի ջուր զիա՞րդ պարտ է արկանել, զայս ոչ տեսաք ի մարդիկ առ ի յարբուսն զայս արարեալ, զի ծիծաղելի է:

Գրիգոր. Դնէ ծեքելով զբանն Յովաննու, զոր ի մեկնութիւն Աւետարանին ասէ. թէ ոչ արբից ի բերոյ որդոյ մինչև արբից զդա նոր ընդ ձեզ յարքայութեան հօր իմոյ:

Մով. Զոր և ասէ, թէ զմիւս չար հերձուածն արմատաքի խլէ, որ ի սուրբ խորհուրդն ջուր ի կիր արկանեն: Զայս ոչ վասն այնորիկ ասեն, թէ ասէ, թէ ընդ գինին ջուր խառնեն հերձուած անուանելով, այլ որ զսուրբ խորհուրդն ջրով միայն առնեն:

---

* Ձեռագրում՝ ժաշակողացն:

Մովս. Աւաղ ստութեան և ունայնութեան բանիցս։ Զայսոցիկ զպատասխանին երանելին Ներսէս Կլայեցին լիով և անթերի առնէ զոր յետոյ դիցուք ի կարգին իւրում։ Իսկ մեք զայս ինչ այժմ հարցանեմք, ով ոչ ասաց, Քրիստոս գինով զխորհուրդն աւանդեաց, ի բերոյ որթոյ ասաց, ոչ արբից և ոչ ի ջրոյ։ Ո՞ր միտք էր, որ լոկ ջրով մատուցանէր զխորհուրդն և ընդէ՞ր ոչ ասաց Յոհան, թէ որ միայն ջրով առնեն, քան թէ որ ի կիր արկանեն։ Ասաց և ի կիր արկանելն ոչ միոյ, այլ խառնութեան է անուն։ Եւ եթէ ընդէր ոչ յայտնեաց, ասէ զանուանս այնոցիկ սուրբն Յոհան առ մեզ չէ յայտնի, զի ոչ էին, այլ միայն ստայաւդ բանք որպէս եղջիւրաքաղ և արալեզն և ոչ էին ոչ գոյ յայտնութիւն։

Գրիգ. Այլ ասէ գտաք ի գիրս Երինոսի զանուանս նոցա, զի Երինոսեանքն ասէ, լոկ մարդ ասեն զՔրիստոս, վասն որոյ ջրով միայն պատարագէին և մարկիոնեանքն Աստուած միայն ասէին և ասկս այնր գինով միայն պատարագէին։

Մովս. Ահա յայտնի ստութիւն, զի թէ եղեալ էր այս երբէք ուրէք միայն ջրով ումեք պատարագեալ, սուրբքն ծանուցեալ էին և ի բազմաց լսելիս հասեալ էր մինչև ցայժմ, այլ զի ոչ էր, ոչ եղև յայտնի, և թէ գինով միայն պատարգելն հերձուած էր, սուրբքն ոչ էին միայն գինով պատարագեալ և մեզ ուսուցեալ, և թէ մարկիոնեանքն զայս առնէին հերձուածութեամբ, ապա որք մեզ ուսուցին, որ մինչ ցայժմ զՄարկիոն նզովեմք, զայն ընդէ՞ր ոչ ուսուցին, թէ գինով միայն պատարագելն Մարկիոնի//աղանդն է և ոչ է պարտ առնել։ Մարկիոն .ե. հերձուած է ասացեալ և վասն պատարագին խորհրդոյ գինւոյ կամ ջրի բնաւ ոչ յիշեալ, որով յայտնի ստոյն զրաքանութիւն և զաղփաղութիւն։ Տեսանե՞ս, զի սուտն անտոք է և ընդանալ ոչ կարէ, զի որք զայսոսիկ գրեցին զրաքանութիւն, ես ինքնին եղէ ականատես երբեմն, զի գրեալ էին ստայաւդ բանք և մակագրեալք զանունն Յովաննու և մատուցին առաջի իմ, զի այնու պատրեսցեն, որ և ի նոյն տեղւոջն էպէրեցաւ, ոչ եղև ընդունելի, զի սուտ էր, վասն որոյ չէ զարմանք, թէ և զայս ստութեամբ ի վերայ Յովաննու և Երինոսի յաւդէին և թէ յայլ Երինոս ունին բաց յաշակերտէ առաքելոցն իւրեանց աղանդովն, մեզ չէ ընդունելի։ Իսկ զիբիոնացիքն, ասէ Եպիփան, ի .ժ. գլուխ հերձուածն, թէ զջուրն որպէս զԱստուած պատուեն և հանապազ մկրտին, զոր նզովեմք, ասէ հանապազ և աստ վասն խորհրդոյ ոչինչ յիշէ։

Գրիգ. Բերէ աստ ի մէջ և զբանս վեցերորդ ժողովոյն Յունաց, որ յաւուրս Յուստիանոսի, զի ժողովս այս և Յուստիանոս .ծգ. ամաւ յետոյ է, քան զՄարկիոն և զժողովն Քաղկեդովնի, որք նոյն հերձուածովն էին և մեզ չէ ընդունելի, զի զիւրեանցն սահմանէին ախորժակս և ոչ զսրբոց հարցն օրինադրութիւնս։

Մովս. Եւ Զենոն կայսր յունաց յետ .իգ. ամի ժողովոյն Քաղկեդովնի վասն ուղղափառութեան հաւատոյ երկոտասան գլուխ նզովս գրեաց վասն Քաղկեդոնի ժողովոյն խրամատողաց զուղիղն։

Գրիգ. Ասէ և զժողովն Կարթագինի առ Ոնորիոսիւ թագաւորին Հռովմայ։

Մովս. Ոնորիոս որդի էր Թէոդոսի մեծին և եղբայր Արկադէոսի, և թէ նոքա ջուր էին հաստատել ժողովով, ահա Յոհան և այլ սուրբքն որ յետ նորա ընդէ՞ր ոչ ընկալան կամ ուսուցին։ Յայտ է, թէ ոչ է ճշմարիտ։

Գրիգ. Ասէ ի մէջ և զԱղեքսանդրոս պապն Հռոմայ, որ զխորհրդական գործ եկեղեցւոյ քահանայապետի ասէ ուսուցանել զմկրտութիւն և զպսակ և ի խորհուրդ պատարագին յիշէ զջուրն, որ ի կողիցն Տեառն և զՍողոմոնի ասելն վասն խառնմանն:

Մովս. Զայսոսիկ զպատասխանին յառաջ արարաք: Բայց ջուրն ի
ԽՁր հռովմայեցիքն յետոյ եմուտ՝ Մարտինոս եպիսկոպոս արկ:// Եւ ոչ էր յառաջագոյն: Եւ ոմն ի վարդապետաց նոցին ասէր ցիս, թէ ոչ իշխեմք ասել ազգիս մերում, թէ ջուրն ի մկրտութեան խորհուրդ է և ոչ ի պատարագին:

Գրիգոր. Առնու և զՈւլիանոս Հռովմայ և զԿիպրիանոս Կարքեդոնի, որ և զնորին Սողոմոնի բանսն բերէ ի մէջ վկայելով, նաև զԱմբրոսիոս ևս յիշէ, թէ զՀռոմայ եկեղեցին գլուխ ասէ.

Մովս. Եւ այս ոչ է ճշմարիտ, զի մի եկեղեցի մեծ և փոքր ոչ կարէ լինել, որպէս մի մարդ ինքն ինքեան մեծ և փոքր ոչ լինի: Բայց զայսոցիկ պատասխանին յառաջագոյն արարաք, թէ սուրբ և իմաստուն հարքն մեր առաջինք, որ մօտագոյնք էին ի ժամանակին, նոքա լիով և անթերի զճշմարիտն գիտէին, որ ստուգապէս տեղեակ էին սրբոցն բանից և ամենայնիւ ի վերայ հասեալք ճշմարտութեանն, որք զուղիղն մեզ ուսուցին և ոչ թիւրսն:

Գրիգոր. Առնու վկայ և զԳրիգոր Աստուածաբան յայտնապէս հակառակ ինքեանն և յամօթ նախատանաց, զի զարիւնն յայտնապէս վկայ կենդանութեան աստուածային բնութեանն ասէ և զջուրն մեռելութեան մարմնոյն, որ ի վերայ խաչին և ոչ ի խորհուրդ հաղորդութեանն:

Մովս. Գրիգոր Նիւսացի յԵրգ Երգոցին մեկնութեան ասէ. ճշմարիտ ողկոյզն, որ ի վերայ փայտեղէն վեր ամբարձութեանցն զինքն եցոյց, որոյ արիւնն փրկելոցն և հրճուեցելոցն ըմպելի և փրկութիւն լինի: Սուրբն Գրիգոր Աստուածաբան ի թղթին, որ առ Դորոթիկոս, այսպէս գրէ. ի վերայ սնդոնի, այսինքն սրբոյ սեղանոյն դնեմք զհացն առաջնորդութեան և զբաժակն օրհնութեամբ սրբելով ճշմարտապէս զնա մարմին և արիւն Տեառն առանց յերկուանալոյ ճաշակեմք հաւատովք: Սուրբս այս ասէ ջուր ոչ յիշէ յամօթ առնելով զհակառակամարտսն, ուստի յայտ է, թէ ստութեան են բանք և ոչ ճշմարտութեան. մարմին իմ ճշմարիտ կերակուր ասաց Քրիստոս և Արիւն իմ ճշմարիտ ըմպելի և ոչ ջուրն:

Գրիգ. Իսկ զի ասէ զայսոսիկ բանք Ոնեկենդոս պապն Հռովմայ, գրեալ առ Տէր Գրիգոր կաթուղիկոսն հայոց եղբայր մեծն Ներսէսի լուսափայլ և փառաւոր վարդապետին:

Մովս. Ահա յայտնի եղև լրբութիւն և անամօթութիւն և յիւրոցն
ԽՅա եպերի բանից մաքառելով ընդ ինքեան,// զի թէ նոքա, որ ի ձէնջ վկայեցան լուսափայլ և փառաւոր վարդապետ գոլով, ոչ ընդունեցան, այլ շաղփաղփութիւն և շաղակրատանք համարեցան, դուք, որ ոչ լուսափայլ և ոչ փառաւոր, զիա՞րդ յանդգնիք ընդդէմ նոցին և ամենայն սրբոց անզգամել հակաճառելով, զի նոքա քաջ գիտէին զսրբոցն առաջնոցն զբանսն և միշտ նոցին հետևելով շաւղաց, զուղիղն ընտրելով և ուսուցանելով հանապազ:

Գրիգ. Եւ զԵրինոս առնու վկայ և նորին բանի ցուցանէ, թէ ի Մաթէոսի Աւետարանին գրեալ է, թէ առեալ Տէրն ի սեղանոյն հաց

և ջուր ամանով, որ կայր առաջի աշակերտացն, օրհնեաց, սրբեաց և գոհացաւ։

Մովս. Ի համատարած ծովէ, կամ ի յորդաբուխ գետոյ մի ճաշակն բաւական է առ ի ստուգութիւն քաղցրութեան և դառնութեան։ Այսպէս և միով բանիւ յայտնեացի բազմացն ստութիւն և ճշմարտութիւն։ Ի չորից աւետարանչացն մեք զմինն գիտեմք Մաթէոս և նա ընդ բաժանիւն ջուր ոչ յիշէ, ապա թէ նոքա այլ ունին աւետարանիչ Մաթէոս և այլքս, մեք զայն ոչ ճանաչեմք, և թէ այդ այդպէս է, ահա յայտնի եղև և բաժանեցան ի միմեանց որդիքն Աստուծոյ և որդիք սատանայի։ Ապա թէ զմերն ճանաչեն Քրիստոս և Մաթէոս զրանն Աւետարանին մի ծեքեսցեն, այլ ճշմարտութեան հետևեսցին։

Դարձեալ զի յիշէ զերիոնեանքն։ Երիոնեանքն ոչ պատարագէին ջրով, այլ հանապազ մկրտէին զամառն և զձմեռն։ Եւ զջուրն որպէս զԱստուած պատուէին, որպէս փարաւոն։

Իսկ կարեղեն հացն, զոր ասորին ասէ յօրինակ հնոյն ամբոխին, իսկ նորս ի Քրիստոսի խաղաղութիւնն զմարմին և զարիւն իւր աւանդեաց և ոչ ջուր, զի ջրին ընկեր խմորն է և ջուրն առանց խմորի սուտ է. Քրիստոս զպա[ս]տառն ի ջուրն լուաց յօրհնութենէն և ապա յետ Յուդայի։ Զջուր ի ջուրն ոչ լուանայ։

Գրիգ. Յիշէ և զՊետա քահանայն և զայլ ոմանս զնոյնս ճառեալ զաղանդաւորութեան ջրոյ և ասէ, թէ զնոյն տեսութիւն գտաք ի նմանակ սքանչելի հօրն մերոյ Գրիգորիսի։

Մովսէսի. Թէ սքանչելի է և սուրբ, որպէս և է ճշմարիտ, նմա ընդէ՞ր ոչ հետևիս, քան Պետեա և Ոնեկենդեայ, զի թէ նա ընկալեալ էր
89բ զբանն նոցին, պարտ էր և քեզ ընդունել, ապա թէ նա ոչ,//և ոչ քեզ էր համարձակել ի խրամատող լինել ցանկոյն հայրենի և յօձէն հարկանիլ։ Զի հանդգնութիւն մեծ է ընդդէմ սրբոցն ընդդիմադրութիւն առնել, մինչ ցայս վայր է մարդահաճոյ՝ զի մի ասացից մարդապաշտ հակաճառութիւնս այս, զի թէ ճշմարիտ էին բանքս այսոքիկ, ապա ընդէ՞ր ոչ գրեացն և արար զսոյն յաքսորեղն իւրում իբր ստրջացեալ իմն զդջմամբ, ասէր. հաճելով իմ զկամս թագաւորին, ջուր արկի ի սուրբ խորհուրդն և զայս կրեմ ի նմանէ և յետ այսորիկ որք մօտակայք էին, պատմեցին, թէ ասէր. հայ եմ, հայ եմ և հայ մեռանիմ։

Եւ արդ այս ամենայն արկածք սատանայի են, զի պատառեաց զեկեղեցի և տակաւին ևս պատառէ, զի մի միաբանելովն գլխոյ նորին գեր ի վերոյ գայիմ, վասն որոյ ատելութեամբ զմեզ առ իրեարս գոգոէ և բաժանէ, զի դիւրաւ յաղթեսցէ։

Ո՞ տայր ինձ զամենայն քրիստոնեայս մի կամք և մի խորհուրդ։ Քանզի զի՞նչ երանութիւն, քան զայսոսիկ, այլ զի միայն այս ամենակարող ձեռին է հնարաւոր և ոչ՝ մերումս ջանի, գոնէ զմիմեանս իրաքանչիւր սահմանս ընդունեսցուք սիրով և մի զմիմեանս նախատեսցուք և ոչ փոքր է այս առ ի յուղղութիւն, զի հին սովորութիւն քաղցր է իրաքանչիւր ումեք և կարող է Աստուած զամենեսեան յիրաքանչիւրն կեցուցանել, զի հուսովն Աստուծոյ հաճոյ է ամենայն։

Այսուհետև զմնացեալ բանսն, որ ի կարգիս է, զայլոց ոմանց զհաւանողացն տեսցուք։

Գրիգ. Վասն որոյ ասէ բազմութիւն ժողովեցան։

Մովս. Սուտ ասէ, զի սակաւք էին և ոչ բազումք. պարտ էր յամենայն հայաստանեացս առաքել և ժողովել և թէ ամենեքեան հաւանեալք էին, ապա զայդպիսի նորաձևութիւն յեկեղեցի մուծանել, և թէ ոչ ի բաց ընկենուլ: Ո՞ր իրաւունք է այդ, ինքնահաճոյ մտաց ախորժակօք գրել և առ ամենեսեան առաքել, թէ ընկալարուք (գրէ նաև յոյժ հաւանութեամբ ընկալարուք—տողատակում):

Մովս. Դուք օրինադիրք և դուք ընկալուչք, կարի կեղեցիկ, բայց չէ ճշմարիտ, զի նոյն ինքն ի տեղին հակառակեցան և դեռ տակաւին ևս հակառակին և որք որ ի սահմանելն իւրում հակառակութիւն կրէ, յայտ է, թէ ոչ է ճշմարիտ, այլ սուտ:

84ա //Այլ և պատուով ասէ, ընկալարուք զհրամանս սուրբ հօրս իբրև ճշմարիտ:

Մովս. Թէ սուրբ հայր էր, ընդէ՞ր ընկեցիք յաթոռոյ և չար ի վերայ եդիք և ընկեցօղք ոք որ օրինադրէք զբանսն, ծածկեալքն ոչ թաքչին, այլ յայտնին տէրն հրամայէ, բայց ձեզ որքան հնար էր, յընդդիմակէն պարտ էր ջանալ և ոչ սիրով նենգել և պարսաւանօք պատուել:

Եւ հաստատեցաք, ասէ, յեկեղեցիս հայոց:

Մովս. Ի գրոց՝ Առաջին Հայք և Երկրորդ և Երրորդ և Չորրորդ անուանեն և Կիւլիկէ յայսցանէ ոչ է և ի սոցանէ ժողովդ ձեր ոք ոչ էր, յոր եկեղեցիս հայոց ասել հաստատել: Ցայտ է, թէ յոչ որ:

Այլ, ասէ, գլուխքն աստ էին:

Մովսի է. Գլուխն այնքան է գլուխ, որքան ի վերայ անդամոց մարմնոյն հաստատեալ էր: Իսկ յորժամ ի բաց կարեսցի որոշելով ի մարմնոյն, յայնժամ ոչ է գլուխ, այլ խաղալիկ ծաղր և այպն կատականաց:

Աւանդութիւնս այս, ասէ, և կարգադրութիւն տօնից ի սուրբ Լուսաւորչէն սկսեալ կայր յեկեղեցիս հայոց և ի պատճառէ ի մեքէ խափանեալ եղև.

Մովս. Երբ այդպիսի սրատէս և կորովաբիրք էք, որ գիտացիր, թէ յառաջն էր և յետոյ խափանեալ եղև, զպատճառն ընդէ՞ր ոչ գիտացիք, կամ զժամանակն, թէ յորոց պատճառ էր կամ յորում ժամանակի: Սուրբն Ներսէս ի թուղթն, որ առ Մանիլ թագաւորն յունաց գրեալ է, թէ զաւանդութիւնս զայս ի սուրբ Լուսաւորչէն մերմէ ունիմք, զոր ընկալեալ էր նորա ի սրբոցն, որ յառաջ քան զնա: Եւ դուք ասէք ի պատճառէ ի մեքէ խափանեալ: Ով որ միտս ունիցի, կարէ ճշմարտապէս ընտրել, թէ ձեզ պարտ է լսել, թէ սրբոյն Ներսեսի և եղբօր նորին Գրիգորի և միւս Գրիգորի Վկայասիրի, որ սքանչելիքն և զարմանալիք են:

Եւ սկսեալ այժմ, ասէ, ի ձեռն եպիսկոպոսապետին Գրիգորի և Կոստանդեա և Լեւոնի, Հեթմի, Օշնի և Ալինախի:

Ոհ, ոհ, ոհ անբաւութեանն և կարի յոյժ անզգալութեանն, սուրբ և երանելի մեծապատիւ կայսրն Կոստանդիանոս յարևելից և յարևմտից, ի հիւսիսոյ և ի հարաւոյ և ամենայն գաւառաց ժողով արարեալ, սրբոց և իմաստնոց, ևս սքանչելագործաց, որք զՀոգին սուրբ ընկալեալ էին,

84բ իբրև զառաքեալսն մահացուցանելոյ և կենդանացուցանելոյ,//իշխանութիւն առեալ իբրև զՊետրոս և զայլ առաքեալսն: Իսկ աստ ասէ՝ Գրիգորիւ, Կոստանդիւ, Հեթմիւ, Օշնիւ և Ալինախիւ իշխանիւք, ըռամիկ ժողովրդովք, զորոց զգործն Աստուած գիտէ, որ ծածկագէտն է: Իշխանօք և թագաւորաւք կարգ և կանոնք եկեղեցւոյ ոչ է երբէք եղեալ և չէ

պարտ լինել, զի առաջին թագաւորքն վասն ճշմարտութեան միայն ժողով հրամայէին սրբոց հարց լինել, իսկ զընտրութիւնն ի ձեռն նոցին թողուին: Իսկ աստ սպառնալիք և աստ թագաւորական ոչ հնազանդելոցն և ուխտադրութիւն զհրամանս արքայի և զհաճոյս նորին, թէ և անօրէնութիւն իցէ յանձն առնուլ կատարել և ապա քահանայապետական աթոռոյն արժանանալ:

Մի ոք, ասէ, սուրբ ժողովոյս օրինադրութեան ընդդիմանալ:

Սուտ ժողովս պարտ է ասել և ոչ սուրբ, ի հոգւոյ ստութեան և ոչ ի Քրիստոսի Հոգւոյն, որ Աստուած է ճշմարիտ:

Զի մի, ասէ, ընդ պատուհասիւք դիցի և մասն և բաժին ընդ հերետիկոսացն կալցի:

Թէ մարմնական սպառնալք պատուհասեա և հաւանօղքն ինձ պատրաստեմք ի վերայ ճշմարտութեանն մեռանել: Եւ հաւատամք ըստ հրամանի սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Վկայասիրի այսու չարչարանօք առաջին սրբոցն գտանել մասնակից: Իսկ հերետիկոսացն, զոր ասէր. բաժին նոքա ընկալցին, որ զսրբոց լուսաւորչացն մերոց զհրամանս արհամարհեն, զցանկ օրինացն պատառեն և զառաջին սրբոց հարցն զկանոնադրութիւնսն խափանեն:

Իսկ գարեղէն հացն զոր ասէ, յամբոխումն հնոյ ժողովրդեանն ասէ և զհաց ցորենոյն ի խաղաղութիւն նորոյս եկեղեցւոյ, այլ ոչ վասն բաժակի և ջրոյ, որպէս շաղփաղփեն ստախօսքն, և առանց գինւոյ ջուրն, ի սրբոցն բանից յանդիմանի, զի սուտ է և չէ ճշմարիտ և արիւն և ջուրն ի կողէն, զոր ասէ ի սուրբ խորհուրդն, դնեմք աստ զսրբոցն բանք, որով յայտնի ճշմարտութիւնն և յանդիմանի ստութիւնն:

1974, մ
6 24-4

ԼՈՒՅՍ ՏԵՍԱՎ

1. Մայր Աթոռի հրատարակություն **«Հայկական խաչքարեր»** ալբոմը, հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, 213 գունավոր և միագույն (սև) նկար, կավճապատ ընտիր թուղթ, 12500 տպաքանակ, 230 էջ, գեղարվեստական գեղեցիկ ձևավորում և ընտիր տպագրություն՝ կատարված Բեյրութի «Էրեբունի» հրատարակչության կողմից:

2. **Օրացույց,** Մայր Աթոռի, 1975 թվականի, 14 մամուլ, 220 էջ, պատկերազարդ, 20000 տպաքանակ, Մայր Աթոռի տպարան:

3. **Պատի օրացույց,** Մայր Աթոռի, 1975 թվականի, 55×76 սմ չափի, երիզված կինամոնագույն կամ կապույտ գույնի զարդանախշերով, 10000 տպաքանակ, Մայր Աթոռի տպարան:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԷ

1. **Նոր Կտակարան** (Չորս Աւետարաններ, Գործք առաքելոց, Առաքելական թղթեր և Յայտնութիւն), արևելահայերեն թարգմանություն, 10000 տպաքանակ, ընտիր տպագրություն, Մայր Աթոռի տպարան:

2. **«Էջմիածին» ամսագրի մատենագիտություն,** 1944—1974 թթ., մատենագիտություն, թեմատիկ, անձնանունների, տեղանունների ցանկեր, 400 տպաքանակ, Մայր Աթոռի տպարան: